Էջմիածին

1962

Ամ146

ՌՆԺԱ
ԺԹ ՏԱՐԻ

Յունուար

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ա. ԷՋՄԻԱԾՆԻ

Ա

1962

262



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Ամանոր և Սուրբ Մնունդ	3
Ամանորի առթիվ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և պետական պաշտոնական անձնավորությունների միջև փոխանակված ողջույնի հեռագրերը	6
Փրկչի հրաշափառ և Ս. Մենդյան տոնի առթիվ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և Բույր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները	9
Ամանորի և Սուրբ Մենդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և եվրոպական Աթոռների ու առաջնորդարանների միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները	15
Հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագ և Քարոզ Մայր Տաճարում Քրիստոսի հրաշափառ Մենդյան տոնի առթիվ	17
Թուրքիայի հայոց նորընտիր պատրիարքի գահակալության առթիվ փոխանակված հեռագրերը	21
Ամանորի Հանդեսը Հոգևոր Ճեմարանում	22
ՄԱՅՐԱԹՈՌՈՒՄ	25
Հաղորդագրություն	27
Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Երրորդ հանգամարը	28
ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌՅԱՆ— Մեսրոպ Մաշտոց	31
Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ— Օրմանյան և իր ժամանակը	47
Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ— Հովհաննու Կարապետի վանքը և նրա վիմագիր արձանագրությունները	57

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ. ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»

Rédaction de la revue „Etchmiadzine", Etchmiadzine, Arménie, URSS.

Երևան, 1982 թ.

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՒԱՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐՐԱԶՆԱԴՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄՆՆՅԱՆ ՀԱՅՈՑ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՄԱՆՈՐ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

Ամանորի և Քրիստոսի հրաշափառ Ս. Ծննդյան տոների խորհուրդը մի անգամ ևս քրիստոնյա աշխարհի խորին ուշադրությունը, հավատով և մեծ հույսերով, իր վրա է բևեռում: Այս սրբազան օրերին, աշխարհով մեկ նորից նշակվում են քրիստոնեական կրոնի խաղաղության և համերաշխության վեհ պատգամները, պատգամներ, որոնց այնքան կարիք ունի աշխարհը, Քրիստոսի Ծննդյան օրերից այսքան դարեր հետո:

Ամանո՜ր և Ս. Ծնո՜ւնդ:

ԺԱՄԱՆԱԿԻ և ԿՅԱՆՔԻ մեծ խորհրդի առաջ ենք կանգնել, նոր հույսերով, նոր երազներով, նոր խոհերով:

Մի տարի ևս անցավ մարդկության կյանքից՝ պատմության գիրկը:

Ամանորի և Ս. Ծննդյան հանդիսությունների և խոհերի մեջ, կա շունչը Աստուծո, հավիտենականության և հավերժի:

Հին տարվա մայրամուտին և նոր ժամանակների արշալույսին, մարդկությունը մտածում է գալիք առնոտ օրերի մասին, նայում է անվերադարձ ԱՆՑԱԾ ԺԱՄԱՆԱԿԻՆ, որ իր հետ ՀԱՎԵՐԺԻ գիրկն է տանում մարդկանց շատերի ցավերն ու վշտերը, երազները ու իղձերը, ինչպես նաև ուրիշների երջանկությունն ու հույսերը:

Աշխարհ իր տագնապների և հոգսերի մեջ, իր հույսերի և երազանքների մեջ միշտ էլ մտածել է խաղաղության և երջանկության մասին, հավատացել է առնոտ և պայծառ ԳԱԼԻՔ ՕՐԵՐԻ և միշտ էլ հույսով ու հավատով է բացել նոր ժամանակների անծանոթ դուռը:

Վաղվա նկատմամբ վառ հույսի, անկոտրում հավատի մեջ է, որ աշխարհը ավելի է գեղեցկանում և զգացվում է կյանքի վեհությունն ու նպատակասլացությունը, օրերի երաժշտությունն ու ժամանակի հավիտենականությունը և հավերժի բերկրանքը:

Հրաժեշտ տալով ամեն անցած ԱՆՑՆՈՂ ՏԱՐՎԱՆ և ողջունելով ՆՈՐ ՏԱՐԻՆ, մարդիկ սիրելի սովորությունն են ունեցել խորհրդածելու ԺԱՄԱՆԱԿԻ և ԿՅԱՆՔԻ մասին:

ՆՈՐ ՏԱՐԻՆ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՏՈՆՆ է ՄԱՐԴՈՒ ԿՅԱՆՔԻ ՄԵՋ, ԻՍԿ ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ՝ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՏՈՆԸ՝ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԵՋ: Քրիստոնյա մտածողության համար երբեք էլ պատահականություն չէ ամանորի և Ծննդյան տոների այս հաջորդականությունը, ժամանակի և կյանքի այս հավիտենական աղերսը:

«ԱՀԱՎԱՍԻԿ ԿԱՆԳՆԱԾ ԵՆՔ ՆՈՐ ՏԱՐԻՆ ՄԸ ՍԵՄԻՆ,— գրում է Վեհափառ Հայրապետը հունվարի 6-ին Մայր Տաճարում արտասանած Ծննդյան իր բովանդակալից քարոզի մեջ,— ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ՄԵՋ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԻ ՇՐՋԱՆ ՄԸ ՍԿԻԶԲ ԿԱՌՆԵ, ԵՎ ՄԵՐ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՐԻԶՈՆԻՆ ՎՐԱ ՆՈՐ ԱՐԵՎ ՄԸ ԿԵՏԱԳԻ: ԱՐԵՎ ՄԸ ՆՈՐ ՀՈՒՅՍԵՐՈՒ, ՆՈՐ ՏԵՍԻԼՔՆԵՐՈՒ, ՆՈՐ ՍՊԱՍՈՒՄՆԵՐՈՒ: ԵՎ ՄԵՐ ՍԻՐՏԵՐԸ ԿՋԵՐՄԱՆԱՆ ՈՒ ԿՋՈՐԱՆԱՆ ԿՅԱՆՔԻ ՆՈՐ ԱՎՅՈՒՆՈՎ, ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՈՐ ԵՌԱՆԴՈՎ, ՆՈՐ ԼԱՎԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ:

ԵՎ ԱՅՍ ՄԵԾ ՍՊԱՍՈՒՄՆԵՐՈՒ ՊԱՀՈՒՆ, ՄԵՐ ՀԱՎԱՏՔԻ ԼՈՒՅՍ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐԵՆ ՄԵՐ ՀՈԳԻՆԵՐԵՆ ՆԵՐՍ ԿԵԱԹԵ ՀՐԱՇԱԼԻ ԱՎԵՏԻՍԸ ԱՍՏՎԱԾԱՌԱՔ՝ «ՓԱ՜ՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍ

ԱՍՏՈՒԾՈՅ, ՅԵՐԿԻՐ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ, Ի ՄԱՐԴԻԿ ՀԱՃՈՒԹԻՒՆ»:

ԱՅՍ ՊԱՏԳԱՄՈՎ ԱՇԽԱՐՀ ԿՈՒԴԱ ՄԵՐ ՓՐԿԻՉԸ ՀԻՍՈՒՍ, ՀՈՒՅՍԻ ԵՎ ԼՈՒՅՍԻ ՆՈՐ ԴՈՆԸՆԵՐ ԲԱՆԱԼՈՎ ՄԱՐԴՈՅ ԵՎ ԱՋԳԵՐՈՒՆ ԲՈԼՈՐ»:

Սաղմոսերգուն իր փառաբանությամբ շեշտում է մարդկային սովորական կյանքի վաղանցիկ բնույթը և փառաբանում է ԱՍՏՈՒԾՈ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՎԻՏՅՈՒՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Մարդու կյանքի օրերը ամիսներն ու տարիները. «Ընդ առաւօտս որպէս դալարի զուարճացցին և ծաղկեսցին, ընդ երեկոյս թարշամեսցին, չորացցին և անկցին» (Սաղմ. ՁԹ 6—7):

Բայց մարդիկ միշտ ձգտել են հավերժական, անթառամ կյանքի. ապրել հավերժորեն: Իսկ ի՞նչ է ժամանակի մեջ մարդկային կյանքը. «Որպէս պահ մի գիշերոյ», և այն էլ՝ «հեծութեամբ և ցաւօք»: Հավիտենական ժամանակի մեջ մարդկային կյանքի անցավորությունը, սահմանափակությունը միշտ և հուսահատություն են պատճառել մարդուն: Մարդու և նրա գործերի մեջ է, որ սակայն շարունակվում է ժամանակի հավերժական լինելության հոսանքը: Եվ մարդու գերագույն կոչումն է հավերժական այդ ժամանակը լցնել ազնիվ գործերով, աշխատանքով, և տեղ գտնել ժամանակի հավերժության մեջ:

Քրիստոնյա աշխարհի համար Քրիստոս մի օր, «ի լրումն ժամանակաց», հայտնվեց աշխարհում, մարդկության համար որպես անսպառ կյանքի աղբյուր. «Որդիք մարդկան օրհնեցէք, զի վասն մեր մարմնացաւ»: Քրիստոս աշխարհ բերեց խաղաղության, երջանկության, հավերժության պատգամը, որ մարդը ապրի լիարժեք կյանքով, ստեղծագործի ազատ, ապրի վեհ գաղափարներով և գործերով և կյանքը դարձնի օրհնություն, բարիք, իր և գալիք բոլոր սերունդների համար:

ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՄԵՋ, ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԾՆՈՒՆԴԸ ՎԵՐԱՄՆՈՒՆԴՆ Է ՄԱՐԴՈՒ: ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴՈՎ ԿՆՔՎԵՑ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ ԴԱՇԻՆՔԸ ԱՍՏՈՒԾՈ ԵՎ ՄԱՐԴՈՒ ՄԻՋԵՎ:

«ԵՎ ՀԻՍՈՒՍ ԱՀԱ ՎԵՐՍՏԻՆ ԿԾՆԻ,— ասում է Վեհափառ Հայրապետը Ծննդյան իր քարոզում,— ԵՎ ՄԵԾ ԱՎԵՏԻՍԸ ՎԵՐՍՏԻՆ ԿՀԱՅՏՆՎԻ ՄԵՐ ՀՈՒՍԱՅՑԱԼ ՀՈԳԻՆԵՐՈՒՆ: ՉԻ ԱՅՍՕՐ ԱԼ ՄԵՐ ՀՈԳԻՆԵՐԸ ԾԱՐԱՎԻ ԵՆ ՄԵԾ ԵՎ ՍՔԱՆՉԵԼԻ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ, ԵՎ ՆՈՒՅՆՔԱՆ ԾԱՐԱՎԻ՝ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԻՐՈ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐԻ ՎՐԱ»:

Ահա այսպիսի սրտագին խոսքերով և զգացմունքներով, քրիստոնեական վառ հավատով դիմավորում է իր նոր տարին և Ս. Ծնունդը հավատացյալ հայ ժողովուրդը և Մայր Հայրենիքում և՝ Սփյուռքի բնղարձակ տարածքի վրա:

Մեր ժողովրդի, մեր Հայրենիքի և մեր եկեղեցու համար բոլորվեց հավատով ու հույսով, աշխատանքով ու սխրագործություններով հարուստ ևս մի տարի:

Մեր ժողովուրդը, իր վերածնված Մայր Հայրենիքում, նոր տարին և Ս. Ծնունդը դիմավորում է արդար հպարտությամբ, ստեղծագործ և խաղաղ աշխատանքի պայմաններում, մշակույթի, տնտեսության անընդհատ անման խոստումնալից պայմաններում:

Անցնող 1961 թվականը եղավ մեր եկեղեցու, մեր Հայրենիքի և մեր ժողովրդի համար իրադարձություններով հարուստ տարի: Ձեռք բերված այդ բոլոր նվաճումները է՛լ ավելի են ամրապնդում մեր Հայրենիքի, մեր ժողովրդի հզորությունը: Բարի սերմնացանի նման երգով ու ապագայի վառ հույսերով ցանում է հայ ժողովուրդը, իսկ մարդացյալ Փրկիչը անեցնում է մեր հայրենի բերքը, ըստ Ավետարանի վկայության՝ «Ընդ միոյ երեսուն, ընդ միոյ վաթսուն և ընդ միոյ հարիւր»:

«ԱՅՍՏԵՂ, ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՈՒ ԵԿԵՂԵՑԻՆ ԾՈՅՆ ՄԵՋ,— ասում է Վեհափառ Հայրապետը,— ԿՏԻՐԵ ԸՂՁԱԼԻ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ: ԱՅՍՕՐ, ՄԵՐ ՎԵՐԱՄՆԱԾ ՀԱՅՐԵՆԻՔԻ, ՄԵՐ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ, ՈՒՐ ՈՐ ՄԱՐԴՈՒ ՍԻՐՏ ՄԸ ԿԲԱԲԱԽԵ, ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԿՏԵՆՋԱ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՄԲ ԿԳՈՐԾԵ: ԱՅՍՏԵՂ ԽԱՂԱՂ ՈՒ ԱՊԱՀՈՎ ԿԱՊՐԻ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ, ԽԱՂԱՂ ՈՒ ԱՊԱՀՈՎ ԿԱՊՐԻ ՄԵՐ Ս. ԵԿԵՂԵՑԻՆ: ԱՅՍՏԵՂ, ՀԱՅ ՀԱՐԱՋԱՏ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՎԱՆԻՆ ՆԵՐՔԵՎ, ՁԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐ, ՁԿԱՆ ԽՈՒՈՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՁԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅՐԵՆԱԲՆԱԿ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒ ՀԱՆՐԱՅԻՆ ԿՅԱՆՔԻՆ ՄԵՋ: ԲՈԼՈՐԸ ԿԱՊՐԻՆ ՀԱՅՐԵՆԻՔ ՆՈՒՅՆ ԿՏՈՒՐԻՆ ՏԱԿ, ՄԻԱԽՈՐՀՈՒՐԴ ՈՒ ՄԻԱԿԱՄ, ԵՎ ԿԱՇԽԱՏԻՆ ԱՄԵՆՔԸ ՄԵՐ ՄԱՅՐ ԵՐԿՐԻ ԲԱՐԳԱՎԱՃՈՒՄԻՆ ԵՎ ԾԱՂԿՈՒՄԻՆ ՀԱՄԱՐ, ԿԱՇԽԱՏԻՆ ԻՐԵՆՑ ԿՅԱՆՔԻՆ ԲԱՐՕՐՈՒԹՅԱՆ, ԻՐԵՆՑ ՋԱՎԱԿՆԵՐՈՒՆ ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՋԳԻ ԱՊԱԳԱՅԻՆ ՀԱՄԱՐ: ՀԱՅ ՊԵՏՔ Է ԸՆԼԱԼ ԵՎ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՁԳԱՅՈՒՄԸ ՈՒՆԵՆԱԼ, ՀԱՍԿՆԱԼ ԵՎ ԳՆԱՀԱՏԵԼ ԿԱՐԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ, ԹԵ ԻՆՉՔ ԿՆՇԱՆԱԿԵ ՄԵՋԻՆ՝ ՀԱՅԵՐՈՒՍ ՀԱՄԱՐ՝ ԽԱՂԱՂ ՈՒ ԱՊԱՀՈՎ ՈՒ ՄԻԱԿԱՄ ԱՊՐԻԼ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԵՋ»:

Ազգային-եկեղեցական տեսակետից ևս 1961 թվականը եղավ արդյունավետ և հա-

վետ ճիշատակելի տարի: Ամենայն Հայոց Հայրապետի անմիջական ղեկավարության տակ, Մայր Աթոռում և ներքին թեմերում, խաղաղ և արդյունավետ պայմանների մեջ ընթացավ մեր եկեղեցական կյանքը: Շարունակվեցին Մայր Աթոռի սահմանների մեջ և նրանից դուրս շինարարական աշխատանքները: Ի մեծ ուրախություն բովանդակ Ազգի, վերաբացվեց Մայր Աթոռի նոր տպարանը: Ազգիս Վեհափառ Հայրապետը բարեհաճեց անձամբ մասնակցել Պրագայի Համաբրիստոնեական համաշխարհային համագումարին, հստակ կերպով ճնշեցնելով Հայ նկեղեցու խաղաղասիրական և մարդասիրական ձայնը: Օգոստոսին, Վեհափառ Հայրապետը Ս. Էջմիածնի օրհնությունն ու հայրապետական ողջույնները անձամբ տարավ Թուրքիայում ապրող Իր զավակներին:

«ԱՅՈ, ՄԵՆՔ ՔԱՋ ԳԻՏԵՆՔ, ԹԵ ՄԵՐ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ԵՎ ՄԵՐ ԲՈԼՈՐ ԹԵՄԵՐԸ ԻՐԵՆՑ ԺՈՂՈՎՈՒՐԴՈՎ, ԿՄՆԱՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՒ ՍԻՐՈ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ, ԱՆՍԱՍԱՆ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅԱՄԲ ԴԵՊԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՄԱՅՐ ԱԹՈՌԸ,— ասում է Վեհափառ Հայրապետը Մեծդյան Իր քարոզում և ավելացնում.— ԱՓՅՈՒՌԻ ՄԵՋ ՄԵՐ ՍՈՒՐԲ ՀԱՎԱՏՔԸ ԿԵՆԴԱՆԻ ՊԱՀԵԼՈՒ, ՄԵՐ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴՆԵՐՈՒՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՈԳԻՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԻԱԿ ՃԱՆԱՊԱՐՀԸ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՒ ԱՄՐԱԿՈՒՌ ՄԻՈՒԹՅՈՒՆՆ Է ԵՎ ՇԻՆԱՐԱՐ ՈՒ ՀԱՄԵՐԱՇԽ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵՐ ԲՈԼՈՐ ԱԹՈՌՆԵՐՈՒ ՄԻՋԵՎ, Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՄԲ»:

Թո՛ղ նոր տարվա առավոտը և Ս.Մեծդյան լույսը միշտ պայծառ մնան մեր Հայրենիքի վրա, մեր ժողովրդի և մեր եկեղեցու վրա:

Թո՛ղ 1962 թվականը լինի բովանդակ աշխարհի և հայ ժողովրդի համար մանավանդ, խաղաղության, հայրենաշինության, միասնականության տարի:

Թո՛ղ 1962 թվականը լինի մեր Ս. եկեղեցու համար հոգևոր նոր վերազարթոնքի, խաղաղ և հոգեշահ աշխատանքի և ազգային-եկեղեցական միասնության տարի:

Շնորհավո՛ր նոր տարի, հավատացյալ եղբայրներ և քույրեր:

«ՔՐԻՍՏՈՍ ՄՆԱ՞Ի ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱ՞Ի»:

ԱՄԱՆՈՐ ԱՌԹԻՎ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՑԻ ՀԵՌԱԳՐԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Նոր տարվա առթիվ ճանեցեք ընդունել, մեծահարգ Նախագահ, Մեր անկեղծ շնորհավորանքները և լավագույն բարեմաղթությունները:

Մաղթում ենք Ձեզ անձամբ և մեր բարեխնամ կառավարության բոլոր անդամներին հաջառաղջություն և Ձեր հայրենաշեն գործոց հաջողություն: Թող այս տարին լինի Մայր Հայրենիքի և Սովետական մեծ Միության համար նոր վերելքի, բարօրության և երջանկության տարի, համայն աշխարհի խաղաղությամբ:

Օրհնությամբ՝
ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ՔՈՋԻՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հանեցեք ընդունել Մեր ջերմ շնորհավորանքները նոր տարվա առթիվ:

Աղոթում ենք Ձեզ անձամբ և մեր բարեխնամ կառավարության բոլոր անդամներին քաջառողջություն և նայրենանվեր շինարար գործոց հաջողություն: Մնում ենք միշտ աղոթող մեր վերածնված Մայր Հայրենիքի ծաղկման, սովետական եղբայրական ժողովուրդների բարգավաճման և ամբողջ աշխարհի խաղաղության համար:

Օրհնությամբ՝
ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ա. Ա. ՊՈՒԶԻՆԻՆ

ՄՈՍԿՎԱ

Հանեցեք ընդունել Մեր անկեղծ շնորհավորանքները ու բարեմաղթությունները նոր տարվա առթիվ:

Ջերմապես աղոթում ենք առ Աստված, որպեսզի գալիք նոր տարին լինի սովետական ժողովուրդների համար խաղաղության, բարգավաճման և երջանկության տարի, Սովետական Միության նոր ծաղկման տարի, ամբողջ աշխարհում կայուն խաղաղության տարի:

Օրհնությամբ՝
ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆՅԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Նոր տարվա առթիվ հանեցեք ընդունել Մեր և Մայր Աթոռի ամբողջ միաբանության ջերմագին շնորհավորանքները անձամբ Ձեզ և պատվարժան խորհրդի բոլոր անդամներին:

Աղոթում ենք առ Աստված, որ 1962 թվականը լինի մեր երկրի ու մեր ժողովրդի առավել բարգավաճման և խաղաղության տարի:

Օրհնությամբ՝
ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՐՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱՋԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության և անձամբ իմ անունից շնորհակալություն եմ հայտնում նոր տարվա առթիվ Ձեր շնորհավորանքի և ամբողջ աշխարհի ժողովուրդների տեսական խաղաղության բարեմաղթությունների համար:

Ջերմորեն շնորհավորելով Ձեր նոր տարին, ցանկանում եմ Ձեզ առողջություն և բարեկեցություն:

Շ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի և անձամբ իմ անունից շնորհակալություն եմ հայտնում նոր տարվա Ձեր շնորհավորանքի և բարեմաղթությունների համար:

Ջերմորեն շնորհավորելով Ձեր նոր տարին, ցանկանում եմ Ձեզ առողջություն և բարեկեցություն:

Ա. ՔՈՉԻՆՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ
ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի և անձամբ իմ անունից ջերմորեն շնորհավորում եմ Ձեր նոր տարին: Թող նոր տարին լինի սովետական ժողովրդի և ամբողջ մարդկության խաղաղության տարի:

Ձեր առողջության և բարեկեցության լավագույն ցանկություններով՝

Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ

ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՋԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՑԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԻԻՆ (*ՄՈՍԿՎԱ*),
ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ
ԱԹԵՆԱԳՈՐԱՍԻՆ (*ՍՏԱՄԲՈՒԼ*),
ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՖՐԻԿԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՔՐԻՍՏԱՓՈՐ Բ-ԻՆ (*ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ*),
ԱՆՏԻՈՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԹԵՈԴՈՍԻՈՍԻՆ (*ԴԱՄԱՍԿՈՍ*),
ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԵՓՐԵՄ Բ-ԻՆ (*ԹԲԻԼԻՍԻ*),
ՔԵՆՏՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՌԵՄՋԻԻՆ (*ԼՈՆԴՈՆ*),
ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՒՍՏԻՆԻԱՆԻՆ (*ԲՈՒԽԱՐԵՍՏ*),
ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԻԼԻՆ (*ՍՈՖԻԱ*),
ՍԵՐԲԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀԵՐՄԱՆԻՆ
(*ԲԵԼԳՐԱԴ*),
ԱԹԵՆՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՀԵԼԼԱԴԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԹԵՈԿԼԻՏՈՍԻՆ (*ԱԹԵՆՔ*),
ԵԹՈՎՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԲԱՍԻԼԻՈՍԻՆ (*ԱԴԴԻՍ-ԱԲԱԲԱ*),
ՀՆԴԿԱԿԱՆ ՄԱԼԱԲԱՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԱՐ ԲԱՍԻԼԻՈՍ ԳԵՎԱՐԳԵՍԵ Բ-ԻՆ (*ԿԵՐԱԼԱ*),
ԼԱՏՎԻԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍԻՆ (*ՌԻԳԱ*),
ԷՍՏՈՆԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅԱՆ ԿԻՅՎԻՏԻՆ (*ՏԱԼԼԻՆ*),
ՄԽԻԹԱՐՅԱՆ ՈՒԽՏԻ ԱԲԲԱՅԱՅՐ ԳԵՐՀԱՐԳԵԼԻ ՀԱՅՐ
ՍՐԱՊԻՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՈՒԼՈՒՀՈՃՅԱՆԻՆ (*ՎԵՆԵՏԻԿ*),
ՄԽԻԹԱՐՅԱՆ ՈՒԽՏԻ ԱԲԲԱՅԱՅՐ ԳԵՐԱՊԱՅԾԱՌ ՀԱՅՐ
ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱՊՈՋՅԱՆԻՆ (*ՎԻԵՆՆԱ*),
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴՈԿՏ. ՎԻԼՅԱՄ
ՎԻՍՍԵՐՏ ԴԸ ՀՈՒՖՏԻՆ (*ԺԸՆԵՎ*):

Սիրեցյալ եղբայր Մեր ի Քրիստոս.

Նոր տարվա սեմին, սուրբ մտածումներով ու սպասումներով կդիմավորենք մեր Տիրոջ և Փրկչի Ծննդյան տոնը և Ս. Էջմիածնեն կշնորհավորենք Զեզ երկնային մեծ ավետիսով՝

«ՅԵՐԿԻՐ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ, Ի ՄԻՄԻՆԻ ՀԱՃՈՒԹԻՒՆ»:

խաղաղություն՝ Ձեզ և Ձեր Ս. Աթոռին: Խաղաղություն՝ Ձեր եկեղեցիներուն և Ձեր աստվածասեր ժողովուրդին: Խաղաղություն՝ ամբողջ աշխարհին:
Ս. Մենդյան աստվածառաք պատգամը թող առավել յոր արմատներ արձակի մարդոց և ժողովուրդներու սրտերեն ներս. և 1962 տարին թող դառնա լույսի նոր սյուն մը՝ մարդկությունը դեպի խաղաղություն և երջանկություն առաջնորդող:
«Ողջիր եղիցին աղօթք իմ որպէս խունկ առաջի քո, Տէ՛ր» (Սաղմ. ՃԻԱ 2):
ՇՆՈՐՀԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՆՈՒՆԴ ԵՎ ՆՈՐ ՏԱՐԻ:

Ձեզ աղոթակից եղբայր ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա

ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՆՈՐԻՆ Ա. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ձերդ Սրբություն.
Ս. հեղեցին մեզ ավետում է Աստվածորդու հրաշալի հայտնությունը և ծնունդը, որպեսզի մեզի ժառանգեն երկնային կյանքը և կոչ է անում մեզ փառաբանելու նրան.
«ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱ՛Ի ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱ՛Ի»:
Մանկացյալ Քրիստոսը, տեսանելի և անտեսանելի աշխարհի Տերը, թող առատացնի Իր օրհնությունը մեզ բոլորիս վրա, որ փառաբանում ենք Իր ծնունդը և թող տարածի մեր վրա Իր սերը, մշտապես ճաճանչի մեր ծարավը, տարածելով Իր շնորհը մեր վրա, մխիթարության և ուրախության զգացմունքով:
Ողջունում եմ Ձեզ, սիրեցյալդ ի Տեր, Սրբազնագույն Կաթողիկոս, մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի Մենդյան տոնի առթիվ, և մաղթում եմ Ձեզ հոգեկան խաղաղություն՝ առողջությամբ անցկացնելու համար մեծ տոնի սուրբ օրերը:
Թող Տերը մեզ օրհնի խաղաղությամբ և Ս. Մենդյան տոնի շնորհներով:
Ի Քրիստոս սիրով Ձեզ հանդեպ անկեղծ հարգանքներով՝

ԱԼԵՔՍԻ

ՊԱՏՐԻԱՐՔ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ

ՄՈՍԿՎԱ

Թանկագին եղբայր մեր ի Քրիստոս.
Եղբայրական սիրով ճանեցեք ընդունել մեր սրտագին շնորհավորանքները և լավագույն բարեմաղթությունները մեր Փրկչի՝ Քրիստոսի Մենդյան մեծ և հանդիսավոր տոնի, ինչպես և ամանորի առթիվ:
Ջերմապես հայցում ենք մանկացյալ Փրկչից, որպեսզի Բեթղեհեմյան փառավոր գիշերվա հրեշտակների ավետիսով խաղաղություն և հանություն պարգևի ներքին հակամարտություններով տանջվող մարդկության:
«ՓԱ՛ՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՅԵՐԿԻՐ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ, Ի ՄԱՐԴԻԿ ՀԱՃՈՒԹԻՒՆ»:
Եվ թող Ամենակարողը արժանացնի մեզ Ձեզ հետ միասին դիմավորելու այս տոնը բազում տարիներ խաղաղությամբ, բաշառողջությամբ և բարեբերությամբ:

Մնամք սիրով ի Քրիստոս Աստված՝

ԹԵՈԴՈՍԻՈՍ Զ

ՊԱՏՐԻԱՐՔ ԱՆՏԻՈՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ

ԴԱՄԱՍԿՈՍ

Ամենողորմ և մարգասեր Աստված նորից արժանացրեց մեզ ողջունելու միմյանց մեծ տոնի՝ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի Ծննդյան առթիվ: «Աստուա՝ գնա առաւել բարձրացոյց և շնորհեաց նմա անուն որ ի վեր է ամենայն անուն: Զի յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի՝ երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց» (Փիլիպ. Բ 9—10):

Ունկնդրենք հրեշտակների խոսքերը և հավատով բազմապատկենք մեր աղոթքները համայն աշխարհի խաղաղության համար հուսալով, որ Աստուծո սերը թույլ չի տա աշխարհը ատողներին՝ իրականացնել աշխարհի խաղաղության խանգարումը:

Քրիստոսի Ս. Ծննդյան տոնի առթիվ, ընդունեցեք, երջանիկ Հայրեր, մեր Իրեբիական-Վրացական Եկեղեցու և մեր շնորհավորությունները:

Թո՛ղ Տերը օրհնի աշխարհը Իր ողորմությամբ և քաղցրացնի սիրտը այն մարդկանց, որոնք չարություն են մտածում: Թո՛ղ Աստված առաքի Իր օրհնությունը Իր Սուրբ Եկեղեցու և մեր բոլորի վրա, որպեսզի հավատով և նրշմարտությամբ ծառայենք Հայրենիքին և Իր Ս. Եկեղեցուն:

Մնամ սրտանց Ձեզ սիրող՝

ԵՓՐԵՄ Բ

ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ

Թբիլիսի

Ձեզ Սրբություն, սիրելյալ նղբայր ի Քրիստոս.

«Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» (Լուկ. Բ 14):

Նոր օրհնյալ Կույս Մարիամը ծնունդ տվեց Իր Աստվածորդուն, ծննդյան առաջին օրը կատարվեցին հին մարգարեությունները, Աստված այցելեց Իր ժողովրդին և Բանը բնակվեց մարդկանց մեջ: Մանուկ Հիսուսի օրորոցը այցելողները տեսան լացված երկինքը և լսեցին անհամար հրեշտակների երգը՝ «Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»: Իր խաչի արքայական գահը բարձրանալուց առաջ, Տերը ասաց Իր աշակերտներին, որ Իրենք թեև բաժանվելու է նրանցից, բայց Իր խաղաղությունը մնալու է նրանց վրա, և նրանք երբեք չպետք է վախենան: «Խաղաղութիւն թողում ձեզ, խաղաղութիւն զիմ տամ ձեզ. մի՝ խռովեսցին սիրտք ձեր և մի՝ զանգիտեսցեն (Յովհ. ԺԴ 27): Այդ նույն գիշերը, նախքան Իր չարչարանքը, Նա աղոթեց Իր աշակերտների միության համար, «Զի ամենեքին մի իցեն, որպէս դու Հայր յիս և ես ի քեզ, զի և նոքա ի մեզ իցեն, զի և աշխարհ հաւատասցէ եթէ դու առաքեցեր զիս» (Յովհ. ԺԷ 21):

Պողոս առաքյալը Եփեսացվոց գրած թղթում մեզ պատմում է, թե ինչպես Փրկչի մահը վերահաստատեց Աստուծո և մարդու միջև այն խաղաղությունը, որը խզվել էր մարդկության մեղքերով. «Զի նա է խաղաղութիւն մեր, որ արար զերկոսեան մի և զմիջնորմն ցանկոյն քակեաց» (Եփես. Բ 14):

Այսպես Իր ծննդյամբ, կյանքով և մահվամբ մեր օրհնյալ Փրկիչը բերեց մարդկանց մեջ խաղաղության խոստումը, խաղաղություն Իր հետևորդների մեջ և խաղաղություն մարդկանց սրտերի մեջ:

Աշխարհն այսօր պատակտված է անվստահությամբ և վախով, և մարդկության մեղքերը միշտ խռովում են խաղաղությունը, որը բերելու եկավ Քրիստոս: Մեր անկեղծ պարտքն է, որ աշխարհի ժողովուրդները միասնաբար աշխատեն հասկացողություն գոյացնել ազգերի միջև, որպեսզի մարդիկ կարենան ապրել Աստուծո աշխարհում և ծառայեն իրենց Արարչին այն խաղաղության մեջ, որը բերելու եկավ Նա:

Մենք աղոթում ենք նաև, որ Աստուծո ժամանակի մեջ և Նրա կամեցած միջոցներով. բոլոր նրանց միջև, որոնք կրում են Քրիստոսի անունը, նշմար-

տապես հաստատված լինի այն խաղաղությունը և միությունը, որի համար աղոթեց մեր Փրկիչը:

Եվ վերջապես աղոթում ենք, որ յուրաքանչյուր հրեխտոնյա մարդու սրտում բնակվի այս օրերին նշմարիա այն «խաղաղութիւնն Աստուծոյ, որ ի վեր է քան զամենայն միտս» (Փիլիպ. Դ 7), և որը զորացնում է Աստուծո ծառաներին ամեն տեսակ փորձությանց ժամանակ. «Զի առ ժամայն յանախութիւն բերել նեղութեանս մերում ի յուսատենականն առաւելութիւն զմեծութիւն փառացն գործէ ի մեզ (Բ Կորնթ. Դ 17):

Այս սուրբ օրերին թող ամենակարողն Աստված առատ օրհնություններ պարգևի Ձերդ Ս. Օծության, Ձեր հավատացյալ հոգևորականության և ժողովրդին:

Ձեզ սիրող եղբայր ի Քրիստոս՝

ՄԱՑՔԻ ՌԵՄԶԻ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՆՏԲԵՐԻԻ,

ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈ

ԼՈՆԴՈՆ

Ամբողջ սրտով ցանկանում ենք Ձերդ Սրբության լիակատար առողջություն, երկար կյանք հոգևոր ուրախություններով, և Ձեր առաքելական գործերին բարեհաջող կատարումով: Տար Աստված, որ նոր տարում՝ 1962-ին, վերջնականապես իրագործված տեսնենք խաղաղությունը աշխարհի և բարի կամեցողությունը բոլոր ժողովուրդների միջև:

Նվիրական սիրո ողջագուրումով, մնամք աղոթող առ Փրկիչն Քրիստոս, լուսն ձեր Ս. Եկեղեցու անսասանության:

ՀՈՒՍՏԻՆԻԱՆ

ՊԱՏՐԻԱՐՔ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ

ՅՈՒՍԱՔԵՍՏ

Ձերդ Սրբություն.

Ս. Սենդյան գիշերը հրեշտակային փառաբանությունը նորից հիշեցնում է մեզ Բեթղեհեմի հովիվների ավետիսը «մեծ ուրախության» մասին, որ Դավթի Քաղաքում ծնվեց Փրկիչը, «որ է օծեալ Տէր» (Ղուկ. Բ 10—11): Մեր հոգիների մեջ տակավին ճնշում են հրեշտակների քաջալերական երգը՝ «Փա՜ռք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» (Ղուկ. Բ 14): Իսկ Փրկչի խոնարհությունը մեզ հոգեկան պարտավորեցնում է հաղթահարել աշխարհի ունայնությունը:

Ոգեշնչված բանիվն Աստուծո, երանելի առաքյալը հայտնեց մեծ խորհուրդը. «եւ Բանն մարմին եղև և բնակեաց ի մեզ և տեսաք զփառս նորա՝ զփառս իբրև զՄիածնի առ ի Հօրէ, լի շնորհօք և ճշմարտութեամբ» (Յովհ. Ա 14):

Քրիստոսի լուսապայծառ ծնունդը պոկում է Աստուծո որդիների ակնկալությունները ճշմարտության և խաղաղության մասին նրա միջոցով, որին աստվածատես մարգարեները անվանեցին «Ճշմարտության արեգակ», Քրիստոս, մեր Աստված»:

Մանկացյալ Քրիստոսը մտնում է մեր հոգեկան տաճարը, որպեսզի լուսավորի մեր խոհերն ու զգացմունքները իր աստվածային լուսավորության լույսով:

Ողջունելով Ձերդ Սրբությանը իմ և Ս. Սինոդի անունից, շնորհավորում եմ Քրիստոսի Սենդյան լուսապայծառ տոնը և նոր՝ 1962 թվականը, խոնար-

հարար աղոթելով Մանուկ Քրիստոսին, որ Իր առատ շնորհը բաշխի Ձեզ Սրբության, Ձեր միաբանության և քրիստոսասեր հոտի վրա:

Խնդրում եմ Ձեր սրտագին աղոթքներ, որով մնամ Ձեզ Սրբության խոնարհ և ի Տէր եղբայր և ծառայակից՝

ԿԻՐԻԼ,
ՊԱՏՐԻԱՐՔ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ

ՍՈՖԻԱ

Ձեզ Սրբություն.

Մեծ հաճույքով ստացանք ողջույններով և բարեմաղթություններով Ձեր սիրալիր նամակը: Խնդրում եմ հանձնել ընդունել մեր շնորհակալություններ: Մենք երախտապարտ ենք Ձեզ Սրբության այն ազնվության համար, որ հիշում է Մեզ և մեր եկեղեցին Ս. Ծննդյան այս մեծ տոնի առթիվ: Մեկուսացած մեր եկեղեցու համար մեծ մխիթարության աղբյուր է իմանալ, որ Ձեզ Սրբությունը և Ձեր պատկառելի եկեղեցին մտածում է և աղոթում մեր մասին Հայաստանում: Մեր մաղթանքն ու աղոթքն է նաև, որ ամենակարող Աստված ցողի Ձեզ Սրբության, ինչպես նաև Ձեր եկեղեցու եպիսկոպոսների, հոգևորականության և հավատացյալների վրա խաղաղություն, ուրախություն և երջանկություն այս նոր տարում, ինչպես նաև գալիք տարիներում:

Թող նա, որ օրհնյալ Ս. Կույս Մարիամից մարդացավ մեր փրկության համար, միշտ լինի և մնա Ձեզ Սրբության հետ:

Ձեր եղբայր ի Քրիստոս՝

ԲԱՍԻԼԻՈՍ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀՆԴԿԱԿԱՆ ՄԱԼԱԲԱՐ ԵԿԵՂԵՑՈՒ

ԿԵՐԱԼԱ

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Աստվածահայտնության ուրախալի տոնի առթիվ, Ձեզ Սրբության հղում ենք մեր ջերմ շնորհավորանքներն ու բարեմաղթությունները:

«ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱ՛Ւ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱՒ»:

Հանձնել ընդունել նաև մեր ջերմագին շնորհավորանքները և խաղաղության ու բաջառողջության մաղթանքները նոր տարվա առթիվ Ձեզ, Ձեր միաբանության և հավատացյալ ժողովրդին:

Հանձնելով մեր անձը Ձեր սուրբ աղոթքներին, մնամք Ձեզ եղբայր ի Քրիստոս և աղոթակից՝

ՀԵՐՄԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՍԻՐԻԱՅԻ

ԴԱՄԱՍԿՈՍ

Ընդունեցեք իմ սրտագին շնորհավորությունները մեր Փրկչի՝ Քրիստոսի ծննդյան առթիվ և լավագույն բարեմաղթություններ՝ Ձեր կյանքի երկարության, առողջության և բախտավորության համար նոր տարում:

ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍ
ԼԱՏՎԻԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԼՈՒԹԵՐԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՌԻԳԱ

Ձերդ սրբություն,

Ոգեշնչված Թեղենեմի հրաշալի դեպքով, ջերմ սրտով ողջունում եմ Ձեզ և Ձեր սուրբ հոտի բոլոր անդամներին՝ Քրիստոսի Մեծդյան լուսապայծառ տոնի և նոր տարվա առթիվ:

Ողջունելով Ձեզ, միաժամանակ մաղթում եմ Ձեզ հաջողություն Ձեր սուրբ աշխատանքների մեջ:

Ամեն դեպքում նոր տարվա շեմքին, մենք առաջում ենք ևս առավել աշխարհի խաղաղության համար, որպեսզի եկեղեցիները, խաղաղ պայմանների մեջ, կարողանան ավելի հաջող գրաղվել. կատարելով այն խնդիրը, որը մեր վրա դրված է Քրիստոսի կողմից:

Մեծդյան տոնով մշտապես Ձեզ հարգող՝

ՑԱՆ ԿԻՑՎԻՏ

ԷՍՏՈՆԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՏԱԼԼԻՆ

Շնորհավորում ենք նոր տարին, ցանկանում ենք բաջառողջություն, խաղաղության գործում հաջողություն:

ՇԵՑԽՈՒԼԻՍԼԱՄ ՀԱՔԻՄՉԱԴԵ,
ՄՈՒՖՏԻ ՎԵԼԻՉԱՆ

ԲԱՔՈՒ

Վեհափա՛ռ Տեր.

Հիսուսի Ս. Մեծդեան հանիսաւորյակին ամենամաղթ հնչեցին ինձի և Մխիթարյան աստվածապան ուխտիս բոլոր միաբանեներուն Ձեր այնքան թանկագին և սիրալիր տողերը, որոնցմով կարեհաճեիք Ձեր սրտեռանդն շնորհավորությունները դրկել մեզի խաղաղության քաղցր պատգամով, զոր երբեմն հրեշտակաց սուրբ երամը լսեցուց Թեղենեմի հրաշեղի հովիվներուն:

Վեհափա՛ռ Տեր, հաճեցեք Դուք ալ փոխադարձ բնդունիլ ամենուս ջերմագին շնորհավորությունները և հոանդուն մաղթանքները, և վստահ եղեք, որ մենք ալ երկիրք կրարձացնենք մեր աղոթքները, հայցելով մանկացյալ Փրկչեն, որ Իր անհատ սիրով և բարեգթությամբ պարգևե Ձեզի Իր երկնային լիառատ շնորհները ու պարգևները երկայն ու երջանիկ տարիներու վարդագեղ պսակով, որպեսզի, լուսավորված ու զորացած անոնցմով, կարենամ Հիսուսի աստվածային սուրբ իղձերուն համաձայն և մեր սուրբ հայրերու գծած չավիղեն առաջնորդել մեր Ազգին գավակները:

Թող վերահաս ամանորով Աստված պարգևե բոլոր աշխարհի և մանավանդ մեր կարոտ Ազգին անձկալի խաղաղությունը, որպեսզի դարմանելով հին վերքերը ու կորուստները, դիմենք դեպի կյանքի բարորություն, մշակութային և քաղաքակրթական վերաշինություն՝ բարոյական վերելքով:

Ամենախոնարհ հարգանքով ու սիրով կմնամ

Ձերդ Վեհափառ Տերության խոնարհ ծառա՝

ՍԻԱՊԻՈՆ ՈՒԼՈՒՀՈՃԵԱՆ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԲԲԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ

ՊԵՆԵՏԻԿ, Ս. ՂԱՅԱՐ

ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌՈՒՆԵՐԻ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՑԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ, ԵՐՈՒՍԱՂԵՄ.
ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Ց. ՇՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ, ՍՏԱՄԲՈՒԼ.
ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ԲԵՅՐՈՒԹ.
ԲԱՐԵԽՆԱՄ ԲՈԼՈՐ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ:

Սիրեցյալ եղբայր Մեր ի Քրիստոս.

Նոր տարվո սեմին սուրբ մտածումներով և սպասումներով կդիմավորենք մեր Տիրոջ և Փրկչի Ս. Ծննդյան տոնը և աստվածակոչյց Իշման տեղեն՝ Ս. Էջմիածնեն, Զեզի կբերենք մեծ ավետիսը երկնային՝

«ՅՆՈՒԻՐ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ, Ի ՄԱՐԴԻՍ ՀԱՃՈՒԹԻՒՆ»:

Խաղաղությո՞ւն Զեզի և Զեր եկեղեցիներուն, և համայն մեր հավատացյալ ժողովուրդին: Խաղաղությո՞ւն Զեր ասպնջական բարի երկրին ու ժողովուրդին, խաղաղությո՞ւն ամբողջ աշխարհին, բոլոր ազգերուն:

«Ողիդ եղիցին աղօթք իմ որպէս խունկ առաջի քո, Տէ՛ր» (Սաղմ, ՃԻԱ 2):

Ս. Ծննդյան աստվածառաք ոգեշունչ բոլոր առավել խոր արմատներ արձակե մարդոց և ժողովուրդներու սրտերեն ներս, և 1962 տարին թող դառնա լույսի նոր սյուն մը՝ մարդկությունը դեպի խաղաղություն և երջանկություն տանող:

Այս աղոթքը Մեր շրթներուն, Լուսավորչի Ս. Աթոռեն կորհնենք զՁեզ, արժանապատիվ հոգևոր հովիվներ, թեմական-եկեղեցական վարչությանց հարգարժան անդամները և մեծահարգ երեսփոխաններն ու խորհրդականները, եկեղեցանվեր տիկնանց, երիտասարդաց միությանց անդամները և դպրաց դասերը, ազգային-մշակութային, հայրենասիրական և բարեսիրական կազմակերպությանց անդամները, հայկական վարժարաններու և կիրակնօրյա դպրոցներու ազնիվ մշակները և սիրասուն աշակերտները, ինչպես և մանավանդ Մեր բոլոր հավատացյալ և հարազատ զավակները, մաղթելով ամենուդ արևշատ տարիներ՝ հաջողությամբ և առատ գործերու հաջողությամբ:

Եվ «Դուք, եղբարք, մի՛ ձանձրանայք զբարիս գործել», «ե՛ւ ինքն Տէր խաղաղութեանց տացէ Զեզ խաղաղութիւն յամենայն ժամ և յամենայն իրս» (Բ Թեսաղ. Դ 14, 16):

ՇՆՈՐՀԱՎՈ՞Ր ՆՈՐ ՏԱՐԻ ԵՎ ՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ:

Հայրապետական օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Նմանօրինակ շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև թեմական և կենտրոնական խորհուրդներին, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության կենտրոնական վարչության նախագահ պր. Ալեքս Մանուկյանին (Նյույորք), Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության կենտրոնական խնամակալության մեծահարգ նախագահ դոկտ. Ժազ դե Ազերեդո Պերտիգաոյին (Լիսաբոն), Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարանի հանձնախմբի նախագահ պր. Ե-

վանդ Աղանանյանին (Նյու-Յորք), Աբգարյան ավանդի և Ս. Էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Բեյրութ), հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց զանազան կազմակերպություններին. Մայր Աթոռի և Հոգևոր Ճեմարանի բարեբարերին և ծանոթ ազգային դեմքերին:

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Վամանոի և Ս. Ծննդյան տոներուն առթիվ փոխադարձաբար կներկայացնենք իմ և Սրբոց Հակոբյանց միաբանության անունով մեր սրտագին շնորհավորությունները և կաղաչենք ամենակարող Աստուծո, որ Ձերդ Սրբության շնորհեն բազում քաջառողջ և երջանիկ տարիներ հաջողություններով լեցուն, և անսասանություն ու բարգավաճում մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐՔ

ԵՐԵՎԱՆ

Ս. Ծննդյան տոնին առթիվ բոլորիս անունով կշնորհավորենք Վեհը և կառաջնորդենք մեր ուղիական սիրը: Մարդացյալ Փրկիչը աշխարհին խաղաղություն ու Վեհիդ երկար տարիներ պարգևե:

ՇՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐՔ

ՍՏԱՄԲՈՒԼ

Մեր Փրկիչն Հիսուսի Քրիստոսի Ծննդյան և Աստվածահայտնության տոնին առիթով ջերմագին շնորհավորություններ և բարեմաղթություններ Ձերդ Վեհափառության թանկագին կենաց և Աթոռի բարեզարդության:

ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԲԵՅՐՈՒԹ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին նաև բազմաթիվ այլ շնորհավորական հեռագրեր և նամակներ, ամենաջերմ և հարգանքի զգացմունքներով գրված, առաստաճմանի և հերքին մեր բոլոր թեմերից, թեմական առաջնորդներից, ազգային-եկեղեցական և մշակութային կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:





ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱՓԱՌ Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ՇՈՒՐՋ

262

Հունվարի 6-ին, շաբաթ օր, Մայր Աթոռում տոնվեց Քրիստոսի հրաշափառ Ս. Ծննդյան տոնը, մեծ հանդիսությամբ և ավանդական շուքով։

Առավոտյան ժամերգությունը պաշտվեց Մայր Տաճարում, մասնակցությամբ Մայր Աթոռի ողջ միաբանության և ուսանողության։

Ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը Վեհարանից առաջնորդվում է Մայր Տաճար եկեղեցական թափորով և ամպհովանու տակ, մատուցելու Ս. Ծննդյան պատարագը։

Թեև ամեն կողմ ձյուն էր, բայց ձմեռվա պայծառ արևը բացառիկ շերմություն էր հաղորդել և՛ բնության և՛ մարդկանց։

Մայր Տաճարը լիքն է աղոթավոր հավատացյալների և ուխտավորների բազմությամբ։ Տաճարի զանգերը, ավետավոր և վեհ, հնչում են մեծ խորհրդի ներշնչման տակ։

Հայրապետական սուրբ պատարագի ժամանակ, Ս. Սեղանին սպասարկում են գերաշնորհ Տ. Սահակ և գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանները, հոգեշնորհ Տ. Մուշեղ, Տ. Գրիգոր, Տ. Մեսրոպ, Տ. Ներսես աբեղաները և Մայր Աթոռի սարկավագների ամբողջ դասը։

Մայր Աթոռի երգչախումբը, Հոգևոր Ճեմարանի նախկին սան, դիրիժոր Խորեն Հակոբյանի ղեկավարությամբ, հաջողությամբ կատարում է սուրբ պատարագի Կոմիտասյան երգեցողությունը։

«Հայր մերս»-ից առաջ Վեհափառ Հայրապետը Քրիստոսի Ս. Ծննդյան մեծ խորհրդի ավետիսը տալով Հայ եկեղեցուն և բովանդակ հայության, խոսում է բովանդակությունից և ոգեշունչ քարոզ՝ օրվա տոնի համամարդկային հոգևոր բարոյական մեծ նշանակության մասին, համեմված կրոնարույր և հայրենաշունչ խոհերով, որը նույն գիշեր ձայնասփռվում է Երևանի ռադիոկայանից.

«Ցանուն Հոր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ»։ Ամեն։

Սիրեցյալ ճավատացյալ զավակներ Սեր.

Անավասիկ կանգնած ենք նոր տարիի մը սեմին։

Աշխարհի և մարդկային կյանքին մեջ նոր ժամանակի շրջան մը սկիզբ կառնե, և մեր գիտակցության հորիզոնին վրա նոր արև մը կծագի։ Արև մը նոր հույսերու, նոր տեսիլներու, նոր սպասումներու։ Եվ մեր սրտերը կջերմանան ու կզորանան կյանքի նոր ավյունով, աշխատանքի նոր եռանդով, նոր լավատեսությամբ։

Եվ այս մեծ սպասումներու պահուն, մեր ճավատքի լույս բարձունքներեն, մեր հոգիներեն ներս կծաթե հրաշալի ավետիսը ասուվածաշունչ՝

«ՓԱՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍ ԱՍՏՈՒԾՈՅ, ՅԵՐԿԻՐ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ, Ի ՄԱՐԴԻԿ ՀԱՃՈՒԹԻՒՆ»։

Այս պատգամով աշխարհ կուգա մեր Փրկիչը Հիսուս, հույսի և լույսի նոր դրոշներ բանալով մարդոց և ազգերուն բոլոր։

ՀԱՅԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ՄՈՒՐ Ի ՄԱՆԵ Ա
ԳՐԱԴԱՐԱՆ

Հիսուս ծնա՞վ և հայտնեցա՞վ:

Եվ Հիսուս անա վերստին կծնի, ու մեծ ավետիսը վերստին կհայտնվի մեր հուսացյալ հոգիներուն: Զի այսօր ալ մեր հոգիները ծարավի են մեծ ու սքանչելի խորհուրդի հայտնության, և նույնիսկ ծարավի՝ խաղաղության և սիրո բազավորության երկրի վրա:

Եվ ովքեր- զուցե մեր օրերուն, ավելի քան երբեք, մարդիկ և ժողովուրդները բոլոր հորիզոններու տակ, իրենց հայացքները դեպի երկինք սևեռած, կաղերսեն. «ՏՈ՞ՒՐ ՄԵԶ, ՏԷ՞Ր, ԶԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՔՈ»:

Ժողովուրդներու այս աղերսը կուղղվի նաև, այս անգամ իբրև պահանջ, պետությանց ղեկավարներուն, հասարակական կարծիքի առաջնորդներուն, գիտությանց և արվեստի գործիչներուն, ինչպես և եկեղեցիներուն և հոգևորականներուն, որպեսզի անոնք բոլորը իրենց դիրքերեն և իրենց միջոցներով խափանեն պատերազմի համբաները, որպեսզի տեսնք կասեցնեն և ի վերջո արգիլեն սպառազինությանց արշավը և բոլոր պետությանց համար պարտադիր կանոն դարձնեն՝ խաղաղ միջոցներով լուծումը ամեն տեսակի միջազգային հարցերու և վեճերու:

Նախ խաղաղությունը պետք է ապահովել և ապա աշխատիլ լուծելու ամեն տեսակի անհասկացողությունները, որոնք կան այսօր և կամ կրնան նորեր ծագիլ վաղը:

Այս մարդասիրական սրբազան պայքարին մեջ կարևոր դեր կրնան ստանձնել, և պետք է ստանձնեն նաև եկեղեցիները և հոգևորականությունը:

Խոսելով մեր եկեղեցի՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի մասին, սրտի մխիթարությամբ պետք է հաստատենք, թե ան իր գլուխը ունենալով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, միշտ աղոթող եղած է ու աշխատանք տարած է հոգուն խաղաղության դատին: Այս ուղղությամբ Հայաստանյայց Եկեղեցի վերջին արտահայտությունը եղավ Մեր մասնակցությունը Պրագայի Քրիստոնեական համաշխարհային համագումարին, որ նվիրված էր աշխարհի խաղաղության պահպանման սրբազան գործին: Մենք անձամբ, ինչպես և մեր պատվիրակության անդամները, միջազգային այս համագումարին բարձր հնչեցուցինք Հայ Եկեղեցի խաղաղասիրական և մարդասիրական ձայնը:

Մենք հայտարարեցինք և այսօր ալ կկրկնենք, թե «ԿԱՐԵԼԻ ՉԷ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԻԴԵԱԼԸ ԱՆՋԱՏԵԼ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆՆԵՆ: ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՔԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԸՆ Է ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԵՋ: ՀԵՏԵՎԱԲԱՐ ԸՆԴՈՒՄԱՆԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՊԻՏԻ ՆՇԱՆԱԿ ՀՊԱՏԱԿԻ ԱՍՏՈՒԾՈ ԿԱՄՔԻՆ»:

Անա թե ինչո՞ւ Քրիստոսի եկեղեցին պետք է ունենա իր հատուկ ու վճռական կեցվածքը և իր անշփոթ խոսքը: Ան պետք է հրապարակ գա իր գաղափարական, բարոյական բովանդակ հզորությամբ և իր գործելու բոլոր հնարավորություններով, լուսավորելու և իր գործելու բոլոր հնարավորություններով, առաջնորդելու համար մարդկության խիղճը և օգնելու համար բոլորին, և մանավանդ պետությանց ղեկավարներուն՝ ի խնդիր խաղաղության թագավորության՝ տառապյալ այս աշխարհին վրա: Այսուհետև բոլորը այլևս թող չմտածեն հաղթանակներու մասին, այլ խաղաղության մասին միայն: Ատոմային մեր դարաշրջանին, խաղաղության պահպանումը մարդկային բարոյականի մեծագույն հաղթանակը պիտի ըլլա: Խաղաղության պատվիրանեն դուրս և ընդդեմ այդ պատվիրանին չկա քրիստոնեություն, չկա Հիսուսի Ավետարան:

Քրիստոնյաները չեն կրնար երկու տեսակ մտածել այս հարցի նկատմամբ: Կարելի չէ եկեղեցիեն նիրս խաղաղություն քարոզել, իսկ եկեղեցիեն դուրս այլ բան:

Ամրացո՛ւր մեզ, Տե՛ր Աստված մեր, և արժանի դրե՛ մեզ՝ խաղաղության Քու կամքդ կատարելու:

Խաղաղությո՛ւն ամեն գնով: Խաղաղությո՛ւն բոլորի համար: Խաղաղությո՛ւն այժմ և միշտ:

Սիրելի՛ հավատացյալներ, խաղաղությունը մաղթենք նաև մեր Ազգին և մեր եկեղեցիին:

Փա՜ռք տիրոջը, որ այստեղ, մեր ժողովուրդին ու եկեղեցիին ծոցին մեջ կտիրե ըղձալի խաղաղությունը: Այսօր, մեր վերածնած Հայրենիքի, մեր Մայր Հայաստանի մեջ, ուր որ մարդու սիրտ մը կբաբախե, խաղաղությունն կտեսնչա և խաղաղությամբ կգործե: Այստեղ խաղաղ ու ապահով կապրի մեր ժողովուրդը, խաղաղ ու ապահով կապրի մեր Սուրբ Եկեղեցին: Այստեղ, հայ հարազատ պետության հովանիին ներքև, չկան վտանգներ, չկան խռովություններ, չկան հակամարտություններ հայրենաբնակ եղբայրներու հանրային կյանքին մեջ: Բոլորը կապրին հայրենի նույն կտուրին տակ, միախորհուրդ ու միակամ, և կաշխատին ամենքը մեր Մայր երկրի բարգավաճումին և ծաղկումին համար, կաշխատին իրենց կյանքին բարօրության, իրենց զավակներուն երջանկության և Ազգի ապագային համար: Հայ պետք է ըլլալ և հայոց պատմության զգացումը ունենալ, հասկնալ և գնահատել կարենալու համար, թե ի՞նչ կնշանակե մե-

զի՝ հայերուս համար՝ խաղաղ ու ապահով ու միակամ ապրիլ Հայոց Աշխարհին մեջ: Եվ ավելին տակավին. մեր օրերուն, Հայաստանի Մեր զավակները կարտոով կմտածեն նաև իրենց պանդուխտ եղբայրներուն և քույրերուն մասին, և սիրով կսպասեն, որ անոնք բոլորը, արևոտ բարի օր մը, գան բնակելու հարազատ Հայրենի Հողի վրա, նույն հարկի տակ, ապրելու և աշխատելու համար վերածնած Հայ Հայրենիքի փառքին համար: Մեր ամբողջ ժողովուրդը այստեղ ցնծությամբ դիմավորեց Հայաստանի կառավարության որոշումը, որով ավելիս տրվեցավ, թե 1962-ենե սկսյալ պիտի շարունակվի հայրենադարձությունը և Սիբիրի Մեր զավակները հետզհետե նոր բարվանքներ կազմած, պիտի դիմեն դեպի իրենց Մայր Երկիրը Հայաստան:

Մենք, իբրև Հայոց Հայրապետ, անհուն գոհունակությամբ կողջունենք այս որոշումը և կօրհնենք Մեր պանդուխտ զավակները դեպի Մայր Հայրենիք բերող բոլոր հարմարները:

Հայրենի ապահով ու խաղաղ երկնքի տակ, խաղաղ է ու ապահով նաև մեր հոգևոր-եկեղեցական կյանքը: Այստեղ, մեր հավատքի տունին մեջ, չկան երկպառակություններ, չկա անմիաբանություն: Այստեղ մեր եկեղեցին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնով, ավետարանական սիրո և միասնության ոգիով գոտեպնդված, նվիրված է շինարար աշխատանքի, աշխատանք, որուն արդյունքները անավասիկ ձեր աչքերով կտեսնեք դուք, սիրելի հայաստանցի զավակներ Մեր: Եվ այդ արդյունքները կտեսնեն նաև հեռավոր ափերուն վրա բնակող Մեր զավակները, երբ ուխտի կուգան Սուրբ Էջմիածին: Մեր ներքին եկեղեցաշեն կյանքը և Մայր Աթոռիս վերաշինությունը պատուղներ են մանավանդ մեր կյանքի խաղաղության, միասնության և համերաշխ գործակցության, մեր Երկրին մեջ ստեղծված նպաստավոր, օրինական և գործնական պայմաններու ներքև:

Ավա՜ղ, սակայն, նույնը կարելի չէ ըսել արտասահմանի մեր եկեղեցական կյանքին վերաբերյալ:

Այո, Մենք քաջ գիտենք, թե մեր նվիրապետական Աթոռները, ինչպես և մեր բոլոր թեմերը իրենց ժողովուրդով, կմնան Հայ եկեղեցիի սիրո միության մեջ, անսասան հավատարմությամբ դեպի Ամենայն Հայոց Մայր Աթոռը: Սակայն մեր մխիթարությունը կատարյալ պիտի ըլլար, եթե օտարության մեջ որևէ եկեղեցի, որևէ հայ մարդ հեռու չմնային Սուրբ Էջմիածնի շնորհներեն և Մեր հայրական սիրո զգացումներեն: Սիբիրի մեջ մեր ցավերը դարմանելու, մեր սուրբ հավատքը կենդանի պահպանելու, մեր նոր սերունդներուն հայության ոգին փոխանցելու միակ հանապարհը մեր եկեղեցիի ամրակուռ միությունն է և շինարար ու համերաշխ գործակցությունը՝ նվիրապետական մեր բոլոր Աթոռներու միջև, Սուրբ Էջմիածնի օրհնությամբ:

Մենք երբեք պիտի չդադրինք լավատես ըլլալե, վասնզի կհավատանք ճշմարտության և մեր ժողովուրդի ողջմտության: Հետևաբար, կանք ու կմնանք աղոթող վասն խաղաղության և միության մեր Սուրբ Եկեղեցիին և համայն մեր պանդուխտ ժողովուրդին:

Ճշմարիտ կրսենք ձեզի բոլորիդ, սիրելիներ՝ Մեր, թե մենք այստեղ, Հայրենի ապահով հողի, այս սրբացած քարերու վրա ամուր կանգնած, և հերշնչված սուրբ զգացումներով, օր ու գիշեր զբաղած մեր շինարարական աշխատանքներով ու ապագայի ծրագիրներով, հավատացեք, ոչ սիրտ ունինք և ոչ ալ ժամանակ՝ զբաղելու հայ ժողովուրդի համար իրական իմաստե ու արժեքև զուրկ տարաձայնություններով և արվեստականորեն ստեղծված կացություններով, որոնք կձգտին երկարաձգել Սիբիրի մեր եկեղեցիի պառակտյալ վիճակը, հակառակ հայ ժողովուրդի կամքին: Ով որ հայ է և հավատք ունի իր Ազգին ու եկեղեցիին հերկային ու ապագային նկատմամբ, թող ծունկի գա Փրկչի Իշման Սուրբ Սեղանի առաջ Մեզի հետ մեկտեղ, զի բոլորս, որ որ ալ գտնվինք աշխարհի վրա և ինչ անուն ալ կրենք և ինչ տիտղոսներով ալ զարդարվինք, հավասարապես հարազատ և հոգեծին զավակներն ենք Լուսո Խորան աստվածակառույց Սուրբ Էջմիածնի:

Եվ հիշե՞նք անգամ մը ևս Առաքել Դավրիժեցիի մարգարեաշունչ խոսքերը. «Ի վերայ Աջոյն և Էջմիածնի ամենայն Ազգն Հայոց կայսեալ կայ»:

Սիրելի՛ և հավատացյալ ժողովուրդ.

Փրկչի Ծննդյան խորհուրդով լուսավորված ու սրտով մաքկացած և ոգեշնչված նոր հույսերով ու տեսիլքներով, դիմենք դեպի 1962-ի նոր տարին, ուխտելով անգամ մը ևս՝ մնալ հավատարիմ խաղաղության և ի մարդիկ հաճության երկնառաք պատգամին, և ապրիլ ու գործել Աստուծո, եկեղեցիի և Ազգի սիրով այժմ և հավիտյան:

Թող Սուրբ Ծննդյան շնորհքներով աշխարհ խաղա՜ղ մնա, և առավել ամրանա բարեկամության, եղբայրության ոգին ժողովուրդներու սրտին մեջ:

Թող Աստուծո ողորմությունը իջնե բոլորիդ վրա քաղցրությամբ և իբրև ապահով ու կենարար հովանի ձեզ պահե ու պահպանե

անփարձ, անվտանգ և բաշխողչ՝ արևշատ օրերով։

Թող ձեր սրտերեն և տուներեն ներս խաղաղությունը և սերը աճին ու ծաղկին և ձեռաց գործերը բող միշտ բուրի ըլլան։

Սուրբ Լուսավորչի անմար կանթեղին ձեզի բոլորիդ և ձեր գավակներուն հայրապետական բյո՛ւր օրհնություններ և Մեր սրտեն բխած մաղթանքներ առատ, մաղթանքներ բարի։

«ԱՅՍՈՒՀԵՏԵՒ ԵՂԲԱՐՔ, ՈՂՋ ԼԵՐՈՒՔ, ՀԱՍՏԱՏՈՒՆ ԿԱՑԷՔ՝ ՄԽԻԹԱՐԵՑԱՐՈՒՔ՝ ՄԻԱԲԱՆ ԼԵՐՈՒՔ՝ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՐԱՐԷՔ ԵՒ ԱՍՏՈՒԱԾ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՍԻՐՈՅ ԵՂԻՑԻ ԸՆԴ ՁԵԶ» (Բ Կորնթ. ԺԳ 11)։

Ամեն։

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ»։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, Ավագ Սեղանի բեմի առաջ կատարվում է Ջրօրհնյաց սրբազան կարգը, ի հիշատակ Քրիստոսի մկրտության Հորդանան գետում, Հովհաննես Մկրտչի ձեռքով։

Վեհափառ Հայրապետը Ջրօրհնյաց արարողության ժամանակ ընթերցում է Ս. Բարսեղ Կեսարացու «Օրհնութիւն ջրոյ» մեծ աղոթքը։

Ապա Մայր Տաճարում, սարկավագների երգեցիկ խումբը, դաշն և ոգելից, հնչեցնում է, «Ո՞վ զարմանալի», «Այսօր ձայնն հայրական» մկրտության տաղերը։

Այնուհետև հավատացյալները չերմեռանդորեն վերցնում են Քրիստոսի մկրտության ջուրը, հոգեպես պայծառացած նաև օրվա մեծ տոնի խորհրդով։

Ջրօրհնեքի սրտառուչ արարողությունից հետո, նորին Ս. Օծությունը, հավատացյալների սրտագին աղոթքների և բարեմաղթությունների տակ, առաջնորդվում է Վեհարանի Ծաղկյա դահլիճը, ընդունելու Ս. Ծննդյան շնորհավորությունները։

Ծաղկյա դահլիճում, Հայրապետական Իր Գահի վրա բազմած, Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ ընդունում է Մայր Աթոռի միաբանության, Գերագույն Հոգևոր Խորհրդի, Հոգևոր Ճեմարանի վերատեսչության, դասախոսական կազմի և ուսանողության, վանքի պաշտոնեության և այլ պաշտոնական անձնավորությունների սրտագին շնորհավորությունները Քրիստոսի հրաշափառ և Ս. Ծննդյան տոնի ուրախ առիթով։

Այնուհետև խոսք առնելով, Վեհափառ Հայրապետը Իր շնորհակալությունն ու գոհունակությունն է հայտնում եղած շնորհավորանքների և բարեմաղթությունների համար, ապա օրհնում է Ազգն ու Եկեղեցին, Հայրենիքն ու ժողովուրդը և մաղթում աշխարհին խաղաղություն և ազգերին՝ հաշտություն, համերաշխություն։

Ժամը 4-ին, Վեհարանի սեղանատանը, Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի անդամները, ուխտավորներ Արգենտինայից և Ռումինիայից և այլ պաշտոնական անձինք սեղանակից են լինում Վեհափառ Հայրապետին։

Նորին Ս. Օծության «Պահպանիչ»-ով վերջանում է ընդունելությունը։

ԹՈՒՐՔԻԱՑԻ ՀԱՅՈՑ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔ
ՍՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ


ՀԱՅԿ ԴՅՈՒՐՅԱՆ
ՊՈՒՌՊՍԱԵԱՆ Լ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԹՈՒՐՔԻՈ

ՍՏԱՄԲՈՒԼ

Անխառն հոգվանքով և եղբայրական սիրով կշնորհավորենք Ձեր ընտրությունը և գահակալությունը իբրև Պատրիարք Թուրքիոյ հայոց:

Ս. Լուսավորչի անմար կանթեղի առաջ կաղոթենք, որ Տերը Ձեզի երկար տարիներ պարգևէ և Ձեզի ըլլա միշտ օգնական, որպեսզի Ձեր պատմական Աթոռին վրա բազմած, խաղաղությամբ և հաղորդությամբ հովվեք Ձեր աստվածասեր պատվական ժողովուրդը:

Այս ուրախ առիթով Ձեզի կշնորհենք արքության պատիվ, մաղթելով, որ զայն կրեք արևշատ օրերով, երջանիկ հովվապետությամբ:

Ս. Էջմիածնեն ողջո՞ւյն և օրհնությո՞ւն Ձերդ Ամենապատվության, նոր-գեոր դասուն, եկեղեցական վարչությանց և միություններուն և ճամայն Մեր հավատացյալ զավակներուն:

Ջերմ սրտով կաղոթենք նաև առ Աստված Ձեր բարեխնամ երկրին և Ձեր աթոռանիստ մեծ քաղաքին բարօրության և խաղաղ ծաղկումին համար:

Կճաշակեցնե Մեր կոնդակը:

«ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՇՆՈՐՀՔ ՏԵԱՒՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՆԵՐԻՑԻՆ ԸՆԴ ՁԵԶ»:

Ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

27 դեկտեմբեր 1961
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Պետական գործողությունքդ ավարտեցան:
Պատրիարքի գահակալությունը հունվար 3-ին:

Ուղիղական ակնածանքով՝
ԱՐԱՄ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ
ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՓՈՒԱՆՈՐԴ

25 դեկտեմբեր 1961
ՍՏԱՄԲՈՒԼ



ԱՄԱՆՈՐԻ ՀԱՆԴԵՍԸ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

1961 թվականի վերջին օրն է, կիրակի, դեկտեմբերի 31-ը։

Հոգևոր Ճեմարանի վերատեսչությունը, դասախոսական կազմը և ամբողջ ուսանողությունը, գոհացուցիչ արդյունքներով փակած ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննությունները, Ճեմարանի հանդիսասրահում, ամանորի ավանդական սեղանների շուրջ բոլորված, հրաժեշտ են տալիս անցնող 1961 թվականին և նոր հույսերով ու հույզերով, նոր եռանդով և հոգեշահ խոհերով ու բարի ցանկություններով դիմավորում նոր տարին, 1962 թվականը։

Երեկոյան ժամը 8-ն է։ Վեհափառ Հայրապետը, շրջապատված Մայր Աթոռի միաբանության, Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամներով, հանդիսավորապես մուտք է գործում Հոգևոր Ճեմարան և ջերմ, ցնծագին ծափերով և երիտասարդական ժպիտներով ընդունվում վերատեսուչ սրբազան հոր, դասախոսական կազմի, ուսանողության, վանքի պաշտոնեության և Մայր Աթոռի ամբողջ աշխատավորության կողմից։

Մայր Աթոռի համեստ բարիքներով զարդարված ամանորի սեղանը օրհնում է Վեհափառ Հայրապետը։ Սեղանի շուրջ հավաքված են ավելի քան 150 հոգի՝ միաբան, ուսանող, պաշտոնյա և բանվոր, իրենց պարտքը կատարած մարդկանց դոհունակությամբ, որոնք արդար խղճմտանքով, մաքուր սրտով ուրախանում են և դիմավորում նոր տարին։ Մայր Հայրենիքի հոգի վրա, համազգային այս նվիրական հաստատության մեջ, որ հայ ժողովրդի Սրբություն Սրբոց Ս. Էջմիածինն է, սիրով և երախտագիտությամբ առլցված դեպի Հայ Եկեղեցու դարավոր նախամեծար այս Աթոռը և նրա արժանավոր, առաքելաշավիղ Աթոռակալը՝ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը։

Վեհափառ Հայրապետի աղոթքից հետո, սկսվում է հանդեսը Հայկական ՍՍՌ Պետական Հիմնի նվագով։

Այնուհետև վերատեսուչ սրբազանը հանդես է գալիս հետևյալ ուղերձով.

«Աստուծո օգնությամբ տարի մըն ալ բոլորեցինք, լարված աշխատանքի, աղոթքի և ուսման բեղմնավոր տարի մը, այս սուրբ Հաստատության մեջ։

Ժամանակ կոչվող շրջանի մեջ, տարին կարծեք թե համրիչ մը ըլլա, որուն հատիկները մենք մեր ձեռքով հառաջ կմղենք, առանց անդրադառնալու, թե այդ հատիկները կպակտեցնեն մեր ապրելիք օրերու թիվը, և ահա որ մըն ալ մենք մեզի կգտնենք համրիչին վերջավորությանը. «Զբարուք պատերազմն պատերազմեցաք»։

Այսպես է ահա կյանքը մարդուն, այսինքն աշխատանքի, պարտականության կյանք մը։ Ժամանակի մեջ, օրերու հաջողության մեջ, մերթ կունենանք երջանկության պահեր, մերթ խոչընդոտներ մեր առաջ, մեր աշխատանքներուն մեջ, բայց կյանքը երբեք կանգ չառներ և մենք առաջ կերթանք միշտ դեպի վեր։

Վեհափա՛ռ Տեր, Դուք նահապետն եք Հայաստանյայց Եկեղեցիի այս մեծ և սուրբ տան։ Անցնող յուրաքանչյուր օր կսպառե Ձեզ, թե՛ ֆիզիկապես և թե՛ մտավորապես։ Դուք հանգիստ չունիք։ Դուք անձնական կյանք չունիք։ Դուք ամբողջությամբ նվիրում եք, պարտականություն Ձեր ժողովուրդի, մեր Եկեղեցիի համար։ Այդ շատ լավ կտեսնենք մենք՝ Ձեզ շրջապատողներս։ Դուք, որպես Հայրապետ Հայոց, Հայ Եկեղեցիի և հայ ժողովուրդի հոգերով ամենաշատ ծանրաբեռնված անձն եք։ Պանդուխտ մեր ժողովուրդը, ամբողջ աշխարհի մեջ ցրված, ուղղած է իր հայացքները դեպի Ս. Էջմիածին և այստեղեն կակնկալե լույս և հոգիի փրկություն։ Եվ այսօր մանավանդ, Ս. Էջմիածինը իր հոգևոր, ազգային առաքելության բարձունքին վրա է նորեն, շնորհիվ Ձեր հայրենաշեն, եկեղեցանվեր առաջնորդության և գործունեության։

«Աչք ամենեցուն ի Քեզ հային»։

Ամանորի այս խորհրդավոր պահուն մենք, բոլոր այստեղ հավաքվածներս, իբրև գործակիցները Ձերդ Վեհափառության, անգամ մըն ալ կվերանորոգենք մեր ուխտը՝ կատարելու մեր պարտականությունները խղճի մտոք, համազգային այս հաստատության մեջ։ որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինն է։

Վեհափա՛ռ Տեր, կաղանդի այս հանդիսավոր երեկոյին, ես, հանուն Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմի և ամբողջ ուսանողության, կշնորհավորեմ Ձեր նոր տարին՝ մաղթելով Ձեզ երկար կյանք և արևոտ օրեր, հովվելու մեր Ս. Եկեղեցին և ժողովուրդը երկա՞ր ու երկա՞ր տարիներ։

Հոգևոր Ճեմարանի ամբողջ անձնակազմի կողմեն մեր սրտագին շնորհակալությունները նաև մեր հայրենի կառավարության և անոր ներկայացուցիչներուն, Գերագույն Հոգևոր Խորհուրդի անդամներուն, Մայր Աթոռի միաբանության, պաշտոնեության և բոլոր անոնց, որոնք առանց սակարկելու, իրենց ծառայությունը կբերեն մեր գործին։

Հոտնկայս, բոլորս միասին, Հայաստանի անուշ գինիով լեցուն մեր բաժակը բարձրացնենք մեր սիրելի Վեհափառ Հայրապետի կենացը, և ամենքս մաքուր սրտով աղոթենք, «որպեսզի լուսն պատերազմները դադարին թշնամիներու հարձակումները», և երկրի վրա տեսապես կայունանան սերը, արդարությունը և խաղաղությունը»։

Բոլոր ներկաները հոտնկայս բաժակ են բարձրացնում Մայր Աթոռի հավերժության և Վեհափառ Հայրապետի կենացը, ծափերի զվարթ հնչյունների տակ։ Ամբողջ դահլիճով մեկ վեհ ու հանդիսավոր հնչում է Մայր Աթոռի հոգևոր հիմնը՝ «Էջ Միածինն ի Հօրէ» շարականը։

Իր Գահից բարձրանում է Վեհափառ Հայրապետը, ուրախ և բարձր տրամադրության մեջ, նոր տարվա խոհերով և գալիք է՝ ավելի պայծառ օրերի լավատեսությամբ համակված, բաժակ բարձրացնելու Մայր Հայրենիքի և նրա բարեխնամ կառավարության, Հայրենիքի և Սփյուռքի բովանդակ հայ ժողովրդի կենաց. սրտագին բարեմաղթություններով, 1962 թվականի հայրենադարձության հայրենաշեն, խոստումնալից հեռանկարներով խանդավառ։

Վեհափառ Հայրապետը խոսում է հույսով, հավատով. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, մեր Եկեղեցու, մեր ժողովրդի, մեր Հայրենիքի պայծառ ապագայի մասին։ Ամբողջ դահլիճը ոգևորված, թև առած, հոտնկայս ծափահարում է. ջերմորեն բաժանելով Վեհափառ Հայրապետի սրտից բխած տպավորիչ և ազդու խոհերն ու զգացմունքները։

Ամանորի այս սեղանների շուրջ ստեղծվում է ջերմ, հայկական մթնոլորտ։ Հոգևոր Ճեմարանի երգչախումբը ցնծագին երգում է «Այսօր տօն է Ս. Ծննդյան» տաղը, «Լուռ գիշեր, սուրբ գիշեր» հոգևոր երգը, «Երգ խնչուլքի», «Սեղանն է առատ», «Ես իմ անուշ Հայաստանիս» խմբերգերը։ Բարեշնորհ Կայծակ սարկավագը արտասանում է «Աղոթք վաղվան սեմին առջև» (Վահան Թեքեյան), Ղեոնդ Վարդանյանը՝ «Աղոթք ծառ տնկելու մասին» (Զավեն Սյուրմելյան)։ Գրիգոր Բունիաթյանը՝ «Օրացույցս»-ը (Գեղամ Սարյան), իսկ Գրիգոր Ագելյանը՝ «Նաիրյան դալար բարդի»-ն (Համո Սահյան)։

Ճեմարանի ուսանողների մանդոլինիստների խմբակը կատարում է մի շարք ժողովրդական և Կոմիտասյան երգեր։

Բ լսարանի ուսանող Վռամշապուհ Ջիհանյանը կարդում է Վեհափառ Հայրապետին ուղղված որդիական երախտագիտության և շնորհակալության զգացմունքներով գրված հետևյալ սրտագին ուղերձը.

«Վեհափա՛ռ Տեր.

Հանդիսավոր այս պահը ուրախության, հուզման, քաղցր ներշնչանքի, այլև բազում խորհրդածությունների առիթ տվող մի պահ է մեզ համար, որովհետև աշխատանքի, ուսման մի տարի ևս անցկացրեցինք այս սուրբ ու նվիրական հարկի տակ, մի տարի, որ լարված ջանքերի միջով մեզ առաջնորդեց զգալի հաջողություններու։ Մենք շուտով ոտք ենք դնելու նոր տարվա սեմին՝ համարձակ դիմելու համար դեպի ապագան։ Իսկ այդ ապագան փորձություններով ու անակնկալներով լեցուն ուծանոթն է մեզ համար։

Այնտեղ ևս մեզ կսպասեն դժվարություններ աշխատանքում, ուսման մեջ, բայց դրանք, իհարկե, մեզ երբեք չեն կարող հուսահատեցնել ու ընկճել։ Մենք, Աստուծո օգնականությամբ և Ձերդ Ս. Օծության հայրական խնամքի և հոգատարության ներքո, կաշխատենք հաղթահարել ամեն մի դժվարություն ու խոչընդոտ՝ մեր սրբազան ուխտի համար։

Այժմ, տարեբաժան այս գծում կանգնած, լաստ ընտրված սովորության, թույլ տվեք ի սրտե շնորհավորել Ձերդ Վեհափառության նոր տարին, մաղթելով, որ Տերը հաջողություն պարգևի Ձեր բոլոր բարի, ազնիվ, ազգօգուտ ու հայրենաշեն գործերին։

Վեհափա՛ռ Տեր

Որպես Հոգևոր Ճեմարանի սաներ, մենք սուրբ պարտականություն ունենք ծառայել մեր Ազգին և մեր Եկեղեցուն։ Իսկ Ազգին ու Եկեղեցուն ծառայել մեզ համար նշանակում է ծառայել նաև մեր Հայրենիքին։ Մենք այդ սիրելի ու քաղցր պարտականությունը կատարելու համար, առայժմ պատրաստվում ենք թե՛ հոգեպես, թե՛ իմացապես։ Այդ բանում մեծ աշխատանք են կատարում մեր ուսուցիչները. նրանք ձգտում են մեզ ավանդել այն լավը, որը մենք համոզված ենք, մեզ կօգնի ապագայում։

Շնորհակալություն նրանց, որոնք չանք չեն խնայում կրթելու մեր հոգին և միտքը։

Այս հուզիչ պահին. թույլ տվեք շնորհավորել Ձեզ, սիրելի՛ ուսուցիչներ, նոր տարվա առթիվ ցանկանալով քաջառողջություն և երկար տարիների անխոնջ աշխատանք։

Այս առթիվ շնորհակալական խոսք ունենք նաև մեր սիրելի վերատեսուչ սրբազան հորը՝ Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանին, որն իր հայրական խնամքներով, բարի և շինիչ խորհուրդներով, իր անդուլ հոգատարությամբ աշխատում է մեր մեջ կերտել մարդը, հոգևոր մարդը։

Շնորհավորում ենք Ձեր նոր տարին ևս, սրբազան հայր, մաղթելով Ձեզ քաջառողջ կյանք և նույնպիսի երիտասարդական ավյուն, որով Դուք այժմ էլ ղեկավարում եք Հոգևոր Ճեմարանը։

Վեհափա՛ռ Տեր.

Շնորհակալ ենք նաև Ձերդ Ս. Օծության հայրական դուրգուրանքներից և խնամքներից, այն հոգատարությունից, որով Դուք շրջապատել եք մեզանից յուրաքանչյուրին։

Շնորհակալության պարտք ունենք նաև մեր հայրենի կառավարության և իր ներկայացուցիչներին, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներին, պատվարժան միաբանության և Մայր Աթոռի բովանդակ պաշտոնեության, որոնք չեն զլանում իրենց օժանդակությունը կրթական մեր գործի մեջ։

Շնորհավորում ենք Ձեր բոլորի նոր տարին՝ մաղթելով հաջողություններ գալիք տարում։

Հավարտ շնորհակալական և շնորհավորական այս խոսքերի, թույլ տվեք, Վեհափա՛ռ Տեր, ի դիմաց ուսանող եղբայրներիս, մատչել ի համբույր Ձեր Ս. և օծյալ Աջույն, միշտ լավագույն մաղթանքներով։

Շնորհավո՛ր նոր տարի, Վեհափա՛ռ Տեր։

Ամանորի այս սեղանների շուրջ հուզիչ, ջերմ ելույթներ են ունենում նաև գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը, դիվանապետ Հ. Առաքելյանը, Գրիգոր Բեքմեզյանը և խմբագիր Ա. Հատիտյանը։

Վերատեսուչ սրբազանը գրական կաղանդչեքներ է բաժանում միաբանության անդամներին, դասախոսներին և ուսանողներին, շատ դիպուկ և հաջող բնութագրումներով։

Վերատեսուչ սրբազան հոր հրավերով ոտքի է կանգնում Վեհափառ Հայրապետը՝ Իր օրհնությունն ու նոր տարվա պատգամը տալու բոլոր ներկաներին։

Նորին Ս. Օծությունը հայրական իմաստալից խրատականներ է տալիս միաբանության, ուսանողության և պաշտոնեության՝ է՛լ ավելի ներքումով, հավատով և խանդավառությամբ աշխատելու, գլուխ բերելու համար Մայր Աթոռի առաջ կանգնած կարևոր գործերը, ազգային ծրագրերի իրագործումը, հոգեպես և իմացապես աճելու, վերանորոգվելու համար՝ լավագույնս ծառայելու Աստուծուն, ժողովրդին և Հայրենիքին։

Վեհափառ Հայրապետը Իր եռանդով, իրավ լավատեսությամբ խանդավառում, գոտեպնդում է բոլորին, վստահություն, հավատ ներշնչելով Մայր Աթոռի ապագա եկեղեցական, հայրենանվեր առաքելության նկատմամբ։

Վեհափառ Հայրապետը ամանորի Իր պատգամը վերջացնում է բովանդակ աշխարհում խաղաղության վերջնական հաղթանակի բարեմաղթություններով։

Վեհափառ Հայրապետը նոր տարին դիմավորում է Հոգևոր Ճեմարանում։

Ուշ գիշերին, Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով վերջանում է նոր տարվան նվիրված այս նշանակալից հավաքույթը։



ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

1961 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Հոգևոր Ճեմարանի դահլիճում, դասախոսեց ամերիկահայ մտավորական, Բոստոնի «Պայքար» թերթի խմբագիր պր. Անդրանիկ Անդրեասյանը, «Հայ եկեղեցվո դերը մեր պատմության ընթացքինում նյութի շուրջ։

Հարգելի դասախոսը զեկուցեց Հայ եկեղեցու կատարած ազգանվեր և եկեղեցաշեն դերի մասին, մեծապես շնորհակալ թողնելով ներկաներին,

Դասախոսության ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-ԻՆ,, ԿԻՐԱԿԻ, Երևանի Ս. Սարգիս Եկեղեցում պատարագեց գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը, բնաբան ունենալով «Այլ օրինակ լիշիր հաւատացելոց բանիւք, դնացիւք, հաւատով և սիրով»։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, տոն «Սրբոյն Ստեփանոսի նախավկային և առաջին մարտիրոսին»։ Այսօր տոնն է նաև Մայր Աթոռի սարկավագների։

Մայր Տաճարում պատարագեց և «Ստեփանոս այր իմաստուն» բնաբանով քարոզեց Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը, Մայր Աթոռի սարկավագներին և Հոգևոր Ճեմարանի ուսանողներին տալով գեղեցիկ խրատներ, նմանվելու համար Ս. Ստեփանոսին, որպես տիպար սարկավագի։

Հավարտ սուրբ պատարագի, սարկավագները բարձրացան Վեհարան և Վեհափառ Հայրապետի Աչը համբուրելով ստացան նրա օրհնությունները։

Ժամը 3-ին, Ճեմարանի սեղանատանը, ի պատիվ սարկավագների, տրվեց ճաշկերույթ, որին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի ուսուցչական կազմը, ուսանողությունը և վանքի պաշտոնեությունը։

Ճաշի ժամանակ բարեմաղթության խոսքեր ասացին գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը, հոգեշնորհ Տ. Ներսես աբեղան, պր. Ա. Հատիտյանը, պր. Գ. Գյուլյանը և պր. Ս. Անթոնյանը։ Սարկավագների անունից պատասխան խոսք ասաց բարեշնորհ Պետրոս սարկավագ Բերբերյանը։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31—ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Գրիգոր աբեղա Եղիայանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

1962 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ԿԱՂԱՆԴ ԵՎ ՏԱՐԵՄՈՒՏ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը՝ «Տէր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քոյ բնաբանով։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ Հայրապետական մաղթանք, որից հետո հավատացյալները համբուրեցին Վեհափառ Հայրապետի Ս. Աչը և ստացան նրա օրհնությունները։

Վեհափառ Հայրապետին թափորով Վեհարան առաջնորդելուց հետո, գերաշնոր-

Տ. Սահակ արքեպիսկոպոսը, հանուն Մայր Աթոռի միաբանության, շնորհավորեց Վեհափառ Հայրապետի նոր տարին։

❋❋❋

ՀՈՒՆՎԱՐԻ 5-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, «Ճրագալույց Սենդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։

Ճրագալույցի սուրբ պատարագը մատուցեց գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը։

Հավարտ սուրբ պատարագի կատարվեց նախատոնակ։

Ապա, Վեհափառ Հայրապետը թափորով, «Խորհուրդ մեծ և սքանչելի» շարականի երգակցությամբ առաջնորդվեց Վեհարան, որտեղ ընթերցվեց Սենդյան Ավետարանը։

Երեկոյան, վանքի սեղանատանը, տրվեց խթման ավանդական ճաշկերույթ։

❋❋❋

ՀՈՒՆՎԱՐԻ 7-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «յիշատակ մեռելոց»։

Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Ներսես աբեղա Պողապայանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Հավարտ սուրբ պատարագի տեղի ունեցավ Հոգեհանգստյան պաշտոն «վասն համօրէն ննջեցելոց»։

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց, ընդառաջելով Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի հրավերին, որպես ներկայացուցիչ նշանակեց գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլադյանին, որը հանուն Հայաստանյայց Եկեղեցու, նոյեմբերի 19-ից մինչև դեկտեմբերի 6-ը մասնակցեց Դելֆիում գումարված Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի համագումարին՝ դիտորդ նյութի հանգամանքով։

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

16 դեկտեմբերի 1981 թ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Քրիստոնեական Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի երրորդ համագումարը տեղի է ունեցել 1961 թվականի նոյեմբերի 19-ից մինչև դեկտեմբերի 6-ը, Հնդկաստանի մայրաքաղաք Նյու-Դելհիում։

Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի առաջին համագումարը տեղի է ունեցել 1948 թվականին Ամստերդամում, իսկ երկրորդը՝ 1954 թվականին ԱՄՆ-ի Էվենստոն քաղաքում։

Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի երրորդ համագումարին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ և հանուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, մասնակցել է որպես դիտորդ հյուր Ադդիս-Աբեբայի աստվածաբանական ճեմարանի տեսուչ գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանը, ոգի Վեհափառ Հայրապետին հղած զեկուցագրից քաղվածաբար տալիս ենք որոշ տեղեկություններ համագումարի օրակարգի և գործունեության վերաբերյալ։

Նոյեմբերի 19-ին, կիրակի օր, հանդիսավոր իրադրության մեջ բացվում է Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի երրորդ համագումարը եկեղեցական մասնավոր պաշտամունքով, շամբեռա կոչված հսկայակերտ վրանի ներքո։ Համագումարի բացման հանդիսության ներկա է եղել 15 000 մարդ։

Այնուհետև համագումարը իր նիստերն ու ժողովները գումարել է Վիգիան Բհավանի (Գիտության սրահ) եռահարկ փառակերտ շենքում։

Համագումարի առաջին նիստում, քվեների բացարձակ մեծամասնությամբ, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի նոր անդամներ են ընդունվել 23 եկեղեցիներ, այդ թվում Ռուս Պրավոսլավ եկեղեցին, Բուլղարական, Ռումինական և Լեհական Օրթոդոքս Եկեղեցիները։

Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին Օրթոդոքս եկեղեցիների անդամակցությամբ էկումենիկ շարժումը մեծանում է և զորանում։ Մինչև երրորդ համագումարը Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդն ուներ 175 անդամ։ Այժմ անդամների թիվը բարձրացել է 198-ի։

Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի երրորդ համագումարին պաշտոնապես ներկա են եղել 577 պատգամավորներ 198 անդամ եկեղեցիների կողմից. 108 խորհրդականներ, հրավիրված Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կենտրոնական կոմիտեի կողմից, որպես մասնագետներ միջեկեղեցական հարցերի, 120 հյուրեր՝ անդամ և ոչ անդամ եկեղեցիների կողմից, 103 երիտասարդներ՝ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի անդամ երիտասարդական տարբեր կազմակերպությանց անունից, 46 դիտորդներ՝ որոնք ներկայացնում են Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ոչ անդամ եկեղեցիներ և կրոնական այլ հարանվանություններ, 275 թղթակիցներ՝ որոնք ներկայացնում են կրոնական և աշխարհիկ մամուլը։

Համագումարում խոսելու և քվեարկելու իրավունք են ունեցել միայն 577 պաշտոնական պատգամավորները։

Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Նյու-Դելհիի համագումարում առաջին անգամ ներկա են եղել դիտորդի հանգամանքով հինգ կաթոլիկ հոգևորականներ։ Կաթոլիկ Եկեղեցին մեծ հետաքրքրությամբ է հետևվում Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գործունեության։ Վերջերս կաթոլիկ աստվածաբաններ և Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ղեկավար անդամներ կազմակերպել են ոչ պաշտոնական խորհուրդ-

դակցություններ, հատկապես Հավատի և Կարգի հարցերի շուրջ։

Համագումարի աշխատանքներում մեծ և կարևոր տեղ է հատկացվել հասարակաց կրոնական պաշտամունքների, աղոթքների, Ս. Գրոց ընթերցումների։

Նոյեմբերի 26-ին մատուցվել է անգլիկան ծեսով սուրբ պատարագ և 1500 հոգի սուրբ հաղորդություն են ստացել 30 անգլիկան հոգևորականների ձեռքով։ Օրթոդոքսներ և լութերականներ սակայն չեն մասնակցել սուրբ հաղորդության։ Պատարագին ներկա է եղել Քենտրբերիի Արքեպիսկոպոսը։

Նոյեմբերի 28-ին սուրբ պատարագ են մատուցել միաբնակ Հնդիկ-Մալաբար եկեղեցու հոգևորականները, 30-ին՝ լութերականները և դեկտեմբերի 1-ին՝ հույն օրթոդոքսները։

Տարբեր եկեղեցիների կողմից կատարված այս սրբազան արարողություններին ներկա են եղել միշտ մեծ թվով ժողովականներ, հյուրեր, ստեղծելով քրիստոնեական եկեղեցիների առաջին դարերին հատուկ միության և սիրո հոգևոր մթնոլորտ։

Համագումարի ամբողջ տևողության ընթացքում, նիստերից առաջ և հետո, կատարվել են հասարակաց պաշտամունքներ բոլորի մասնակցությամբ և մանավանդ Ս. Գրոց ընթերցանություն համապատասխան մեկնությամբ և օրվան հատուկ պատգամով։

Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի այս երրորդ համագումարի հիմնական թեման եղել է «ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ԱՇԽԱՐՀԻ ԼՈՒՅՍԸ»։

Համագումարի բոլոր պատգամավորները իրենց ելույթներում շեշտել են այն ճշմարիտ վկայությունը, որ ՔՐԻՍՏՈՍ ՄԻԱՅՆ ՄԻ ԺՈՂՈՎՐԴԻ, ՄԻ ԱՋԳԻ ԿԱՄ ԴԱՍԱԿԱՐԳԻ, ՄԻ ԵՐԿՐԻ ԿԱՄ ՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԼՈՒՅՍԸ ՉԷ, ԱՅԼ ԲՈԼՈՐ ԴԱՐԵՐԻ ԵՎ ԲՈԼՈՐ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ։

Քրիստոնեական Եկեղեցին, որն իր ծոցում ունի այդ ԼՈՒՅՍԸ և քարոզում է այն ու տարածում, պետք է վերաքննության ենթարկի իրեն, տեսնելու համար, թե իսկապես, որպես Եկեղեցի, իր կոչման և առաքելության բարձրության վրա՞ է այսօր աշխարհի ներկա պայմաններում, թե թաքցնում է այդ ԼՈՒՅՍԸ «բնդ գրուանաս»։

Համագումարում միաձայն ընդունվում է որոշում այն մասին, որ Քրիստոսից ստացած այդ լույսը պետք չէ պահվի գրվանի տակ և ոչ էլ կաթողիկեների գմբեթների տակ, այլ ճառագայթելու է բոլոր հոգիների մեջ և բոլոր երդիկների վրա երեք ուղղությամբ.

1. ՎԿԱՅՈՒԹՅԱՄԲ, այսինքն ամենուրեք և ամենուր հռչակել Քրիստոսի Ավետարանը որպես բարի լուր, նոր մեթոդներով, նոր միջոցներով, գործարաններում, վաճառասրահներում, ընտանիքներում, հասարակական այլ վայրերում կազմակերպելով ի պահանջել հարկին քարոզչական փոքր խմբակներ։

2. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՄԲ, այսինքն քարոզել և պաշտպանել աշխարհի բոլոր ժողովուրդների իրավահավասարությունը, ցեղային ազատությունը, վերացնել ցեղային բոլոր խտրականությունները, պաշտպանել մանավանդ հարստահարված ժողովուրդներին, կողմնակից լինել զինաթափման, ապահովել խղճի և կամքի ազատություն, օգնել տնտեսապես աղքատ եկեղեցիներին և երկրներին։

3. ՄԻՈՒԹՅԱՄԲ, այսինքն եկեղեցիները պետք է միմյանց ճանաչեն փոխադարձ սիրով և գնահատությամբ, կենդանի հաղորդակցություն պահեն միմյանց հետ հասարակաց պաշտամունքների միասնական կատարումով, Ս. Գրոց միասնական ընթերցումով և սերտողությամբ, համայնական աղոթքով և միությունը ամրապնդեն փոխադարձ այցելություններով, հասարակաց վկայությամբ և գրականության փոխանակումով։

Այնուհետև համագումարի պատգամավորները «ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ԱՇԽԱՐՀԻ ԼՈՒՅՍ» հիմնական թեմայի շուրջ խոսելու, խորհրդածելու համար բաժանվում են «ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ», «ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» և «ՄԻՈՒԹՅՈՒՆ» երեք խոշոր հնթախմբերի, որոնք երկար խորհրդակցություններից, վիճաբանություններից հետո, համագումարին են բերում իրենց եզրակացություններն ու բանաձևերը։

Այս հանձնաժողովների մեջ է, որ մանրամասն կերպով և հանգամանորեն քննության են առնվում քրիստոնեական Եկեղեցու իսկական կոչման և առաքելության հետ կապված «ՎԿԱՅՈՒԹՅԱՆ», «ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ» և «ՄԻՈՒԹՅԱՆ» հարցերը և պատրաստվում են կոչեր, պատգամներ, արդի աշխարհը հուզող կրոնական, հասարակական, տնտեսական, գիտական և քաղաքական հարցերի շուրջ։

Այնուհետև համագումարի առաջին նիստում որոշում է ընդունվում Եկեղեցիների Համաշխարհային խորհուրդը և Միջազգային Միսիոներական խորհուրդը միավորելու մասին։ Սրանից հետո Միջազգային Միսիոներական խորհուրդը կոչվելու է Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի Միսիոներական և Ավետարանչական բաժանմունք, 115 հոգուց բաղկացած մի հանձնաժողովի հրամանատարության և ղեկավարության տակ։

Երրորդ համագումարում ընդունվում է նաև հետևյալ բանաձևը Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի բնույթի մասին. «Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը եկեղեցիների ընկերություն է, որը դավանում է Տեր Հիսուս Քրիստոսին որպես Աստված և Փրկիչ, ըստ Ս. Գրոց և աշխատում է միասին իրագործել իր հասարակաց կոչումը ի փառս Աստուծո՝ Հոր, Որդվույն և Հոգվույն Սրբոյ»։

Համագումարում ընդունվում է նաև կոչ՝ ուղղված բոլոր ոչ անդամ եկեղեցիներին՝ միանալու Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին։

Երրորդ համագումարում տեղի են ունենում նաև ընտրություններ։

Ընտրվում են Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի վեց նախագահներ, 4-ը հոգևորական և 2-ը աշխարհական, որոնք կպաշտոնավարեն մինչև Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի չորրորդ համագումարը, որը կայանալու է 1967—1968 թվականին Աֆրիկայում կամ Ավստրալիայում։

Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի հոգևորական նախագահներն են Քենտրբերիի Արքեպիսկոպոս դոկտ. Մայքլ Ռեմզին, Հյուսիսային և Հարավային Ամերիկաների Հույն Օրթոդոքս Եկեղեցու առաջնորդ գերաշնորհ Տ. Հակոբոս արքեպիսկոպոսը, Հոգպուրի (Հնդկաստան) Հիսլոպ կոլեջի նախագահ Դավիթ-Մովսեսը և Գերմանական Ավետարանական Լութերական Եկեղեցու նախագահ դոկտ. Մ. Նյու-Մեքերը։ Իսկ աշխարհական նախագահներն են Նիգերիայի Արևելյան նահանգների ընդհանուր կառավարիչ սըր Ֆրանսիս Իբիամը և ԱՄՆ-ի մեթոդիստ համայնքի անդամ Չարլզ Փարլին։

Երրորդ համագումարում ընտրվել է նաև Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կենտրոնական նոր կոմիտե 100 անդամներով, որոնցից 85-ը հոգևորականներ են՝ 5-ը կանայք, իսկ 10-ը՝ աշխարհական։

Սույն համագումարում ընտրվել է նաև 16 հոգուց բաղկացած Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գործադիր կոմիտե։

Համագումարը փակվելուց առաջ ընդունվում է պատգամ, ուղղված անդամ եկեղեցիներին, ուր շեշտվում է, թե արդի աշխարհի պայմաններում քրիստոնեական եկեղեցիների համար էական և հիմնական հարցը միմյանց հետ համագործակցելն է արդարության, ազատության, հավասարության սկզբունքների վրա, ազգերի և ժողովուրդների միջև խաղաղության և համերաշխության ստեղծման համար։

Համագումարը փակվում է դեկտեմբերի 6-ին։

Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի երրորդ համագումարը մեծ իրադարձություն է բովանդակ քրիստոնեական աշխարհի կյանքում և արդի պայմաններում, որպես կարևոր քայլերից մեկը քրիստոնեական եկեղեցիների սիրո և միության նոր փորձերի։



ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌՅԱՆ

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ*

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔՍԵՐՈՐԴ

ՍԱՀԱԿԻ ԵՎ ՄԵՍՐՈՊԻ ՎԱԽՃԱՆԸ

§ 1

Եթե Սահակին և Մեսրոպին էր վերապահված տեսնել առաջին անգամ մեր երկրի մտավոր ու գրական ծնունդը, իրենց էր վերապահված նույնպես տեսնել Հայաստանի քաղաքական քայքայումը՝ Արշակունյաց պետության կործանումը։ Շատ աշխատեց Սահակ արգելելու համար այդ կործանումը, բայց դեպքերը իրենից շատ ուժեղ էին։ Հայրապետի հորդորները, խրատներն ու սպառնալիքները անզոր մնացին սանձելու կամ կանգնեցնելու համար ըմբոստ կրքերը։ Արշակունյան տերությունը կործանվեց և այն օրից սկսվեց հայոց դարավոր ստրկության ծանր լուծը։ Քաղաքական կյանքի հետ կործանվեց նաև երկրի գրական կյանքը. Ե դարի այն գրական հսկայական շարժումը կանգ առավ, և եթե հայությունը մնաց այնուհետև, ի շնորհս իր անշատ ու անկախ կրոնական կյանքի և իր սեփական լեզվի ու գրի էր։

Փարպեցին և Խորենացին բավական ընդարձակ կերպով պատմում են այս տխուր դեպքերը, որոնց մասին և ոչ իսկ ակնարկություն ունի Կորյուն՝ Մաշտոցի համառոտախոս կենսագիրը։ Բայց որովհետև հիշյալ դեպքերը ներքնապես անձուկ կապակցություն ունեն Մեսրոպի կենսագրության հետ, ուստի հարկավոր ենք համարում համառոտ կերպով ամփոփել այստեղ։

Խոսրով Գ-ի երկրորդ անգամ ութամյա թագավորությունից հետո, Հայաստանի վրա թագավոր էր նշանակված Հազկերտի որդին Շապուհ, Շապուհի փախուստից և սպանությունից հետո, նախարարների խնդրանքով, Վռամ թագավորեցրեց Վռամշապուհի որդի Արտաշեսին։ Սա իգամոլ և վավաշոտ մեկը լինելով, նախարարները վերջապես զզվեցին նրանից և Սահակին դիմելով բողոքեցին նրա դեմ։ Եթե հավատանք Փարպեցուն, նախարարների պահանջն այն էր, որ Սահակ գահազուրկ անել տար Արտաշեսին, անշուշտ նրա տեղ մի ուրիշին գահ բարձրացնելու համար։ Ամենևին չի երևում նախարարների խոսքերի մեջ գոնե ամենափոքր միտում հայոց թագավորությունը կործանելու և պարսիկ վերակացու բերել տալու։ Ընդհակառակը, նրանք ավելի նախանձախնդիր են հայոց բարոյական կյանքի սրբության և պահանջում են, որ այդ սրբությունը խանգարողը հեռացվի։ «Լեռդ քեզ նախ պարտ է,— ասում են նրանք Սահակին,— այսպիսի անհնարին աղետից խրնդ-

---

*Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1954 թվականի XI, XII, 1955 թվականի I, II, III, IV, 1956 թվականի I, II, IV—V, VIII—IX, XI—XII և 1961 թվականի ԺԱ, ԺԲ և ԺԳ համարներից։

ռել հնարս, և բառնալ ի միջոյ զայնպիսի ամբարշտեալ թագաւոր, որ այսպէս յայտնի իբրև զանհաւատ արհամարհանօք առոն հարկանէ զաբրուքիւն, և աներկիւղ կամակարութեամբ գործէ զաղտեղի գիճութիւնս» (Փարպեցի, էջ 53)։ Բայց Խորենացին Փարպեցու հիշյալ պատմությունը մի քիչ խանգարելով, ասում է, թե նախարարները հրավիրեին Սահակին միանալու իրենց հետ՝ չարախոսելու պարսից թագավորի առաջ Արտաշեսին և գահազուրկ անելով նրան, պարսիկ մի վերակացու բերել տալու (Խորենացի, Գ կգ)։

Սահակ աշխատեց նախ համոզել նախարարներին, որ հետ կանգնեն այսպիսի նպատակից. բայց երբ տեսավ, թե նրանք անդրդվելի մնացին, քաշվեց իր խուցը լալու և ապաշխարելու համար։ Մի քանի օր հետո, նախարարները նորից հավաքվեցին և իրենց պահանջի վրա պնդեցին. Սահակ դարձյալ հորդորեց նրանց, որ հրաժարվեն իրենց մտքից և Աստուծուն աղոթեն Արտաշեսի դարձի համար. բայց այս հորդորներն էլ օգուտ չունեցան. այն ժամանակ Սահակ ստիպվեցավ հրաժարվեց նախարարներին միանալուց, որով նրանք ստիպվեցին Սուրմակ անուն մի երեցի հետ դիմել պարսից դուռը՝ ամբաստանելու Արտաշեսի մասին։ Վռամ կանչեց Արտաշեսին ու Սահակին՝ երկու կողմերն էլ լսելու համար։ Արտաշեսին իբրև ամբաստանյալ և Սահակին իբրև վկա։ Արտաշես մերժեց իր մասին եղած ամբաստանությունները, իսկ Սահակ ո՛չ միայն վկայություն չտվեց, այլև խիստ պատասխաններով զայրացրեց թագավորին։ Գործը հակասության ընկնելով, նախարարները առաջարկեցին մինչև իսկ հրաժարեցնել Արտաշեսին և մի պարսիկ վերակացու նշանակել։ Այս բանը սիրով ընդունեց Վռամ և Արտաշեսին գահընկեց անելով, տեղը Վեհմիհրշապուհ անուն մի պարսիկ մարզպան նշանակեց, և Սահակին էլ կաթողիկոսությունից զրկելով. Սուրմակ երեցին նրա տեղ դրավ։

Այսպես վերջացավ հայոց Արշակունի թագավորությունը, որի կործանումը թեև պարսից զորավոր պետությունն էր պատրաստել, բայց վերջին բոպեի պատասխանատու դերերից մեկն էլ Սահակի վրա է ընկնում։ Արտաշեսի դեմ ծագած ապստամբությունը երկրին նպաստավոր մի հետևանք տալու գույնն ուներ, Սահակ եթե չկարողացավ հորդորներով առաջքն առնել ապստամբության, պարտական էր. հակվել ապստամբների կողմը և խոհեմությամբ երբեք ձեռքից չթողնելով, աշխատել մի արժանավոր հաջորդ ընտրել տալու։ Բայց այսպես չարավ Սահակ և կրոնական նախապաշարմունքով միշտ անհպելի մի անձնավորություն համարելով թագավորին, պատճառ եղավ կրքերը փոթորկելու, որի ցավալի արդյունքը թե՛ իր անձի և թե՛ թագավորի խպառ անկումն եղավ։

§ 2

Սահակի տեղ հայրապետ նշանակվեց Սուրմակը, որ իր անվայել բարքի համար մի տարի հետո հալածվեց նախարարներից։ Նրան հաջորդեց Բրքիշո անուն ասորին, որի ապօրինի վարմունքներին նույնպես չկարողանալով հանդուրժել նախարարները, երեք տարի հետո խնդրեցին Վռամից գահընկեց անել նրան։ Բրքիշոյից հետո Վռամ նշանակեց Շմվել ասորուն, որի ընտրության պարագաների մասին լուռ է Փարպեցին, իսկ Խորենացին (Գ կե) հետևյալ տեղեկություններն է տալիս։

Բրքիշոյից հետո նախարարները երկուսի բաժանվեցին. առաջին խումբը Վռամի մոտ պատգամավոր ուղարկեց Վաչե Արծրունուն և Հմայակ Աչոցա իշխանին, խնդրելով, որ թագավորը աթոռակալ նշանակեր ում որ ուզենար. իսկ երկրորդ խումբը ուղարկեց Մանեհ Ապահունուն և Սպանդարատ Արշարունուն՝ Սահակին կաթողիկոս խնդրելու համար։ Սահակի համար պատգամավոր ուղարկեց նաև Հունահայաստանի Անատոլ զորավարը Կուկայաոիճի Հավուկ իշխանին, խնդրելով, որ եթե Վռամին հաճելի չէ Սահակին կաթողիկոս նշանակել Պարսկահայաստանի համար, թող նշանակի Հունահայաստանի համար։ Վերջապես հայոց բոլոր եպիսկոպոսները միանալով Մեսրոպի հետ, պատգամավոր ուղարկեցին Տիրուկ քահանային, որ Մովսիսիկի որդին էր, Վանանդ գավառի Զարիշատ քաղաքից։ Սրանք Սահակին էին խնդրում նշանակել կաթողիկոս։ Վռամ լսեց երկու կողմերն էլ, Շմվելին նշանակեց եպիսկոպոսապետ, իսկ Սահակին՝ Շմվելի հավանությամբ եպիսկոպոս ձեռնադրող։

Շմվել կաթողիկոս նստելով, ավելի վատ վիճակ բռնեց քան իր երկու նախորդները։ Նա չէր թողնում, որ վաղանցյալ եպիսկոպոսների փոխարեն Սահակ նորերին ձեռնադրեր, իսկ կենդանի եպիսկոպոսների էլ ինքը չնչին պատճառաբանությամբ խլում էր։ Այսպիսով բոլոր եպիսկոպոսները ատեցին նրան ու հեռացան նրանից. ասպարեզը մնաց միայն ու Սուրմակին։

Այս վիճակի մեջ Սահակ և Մեսրոպ ամենևին չկանգնեցան իրենց գործունեությունից, այլ աշխատեցին մինչև ազնվագույն կաթնդիեցուցանել մանկանց եկեղեցուց։ Սահակ քաշվեց և գործեց Թագրևանդ գավառում,

իսկ Մեսրոպին նշանակեց Վաղարշապատի Մայր եկեղեցում (Խորենացի, Գ կզ)։

Շմվել հինգ տարի պաշտոնավարելուց հետո մեռավ. այն ժամանակ հայ նախարարները հավաքվեցին Սահակի մոտ և խնդրեցին, որ ընդունի ընդհանուր հայրապետությունը, խոստանալով ամեն կերպ աշխատել և կաթողիկոսության հաստատությունը բերել տալ Վռամից։ Սահակ բացեիբաց մերժեց և հրաժարվելով աշխարհային ամեն զբաղմունքից՝ տվեց իրեն աղոթքի և ուսուցման, որովհետև մինչև այն ժամանակ կրոնավորները չէին ուզում քնավ հեռանալ նրանից և միշտ պարապ էին նրա մոտ. «Եւ յայնմհետէ ամփոփեալ զինքն առաքինւոյն յամենայն աշխարհածուփ զբօսանաց, աղօթից միայն պարապէր և վարդապետութեան. վասն զի բազումք յեպիսկոպոսաց և յայլոց ի պատուական քահանայից ոչ երբեք ժուժեին տենել և մեկուսանալ ի մշտաբուխ աղբերէ վարդապետության սրբոյն, ուր ուրեք և դիպէր, ի յոստանի և կամ ի հովս» «Փարպեցի, էջ 102)։

§ 3

Նույն ժամանակները Սահակ ծանր հիվանդացավ Բագրևանդում. և որովհետև պարսից բանակը Բագավանի վրա էր հարձակվել, նրանց նեղություններից ազատելու համար, Սահակի աշակերտները փոխադրեցին նրան Բլուր կամ Բլրոցաց գյուղը, իբրև ավելի ապահով և գերծ տեղ։ Այս գյուղը այսօր էլ ծանոթ է Ցահնիթեփե անունով և իրոք որ մեծ պողոտայից հեռու, լեռների ստորոտը քաշված, մնում է մի անկյունում (Օրմանյան, «Ազգապատում» Ա, էջ 319)։ Կորյուն, առանց այս մանրամասնությունները նշանակելու, պատմում է, թե Սահակ շատ խոր ծերության մեջ վախճանվեց Ցագկերտի թագավորության առաջին տարին, Բագրևանդ գավառի Բլրոցաց գյուղում, նավասարդ ամսի 30-ին, չորեքշաբթի, ճիշտ իր ծնված օրը, արևելյան ժամը 2-ին։ (Փարպեցի, հրատ. Վենետիկ, էջ 103 և Փոքր Կորյուն, էջ 28։ դնում են «յերրորդ ժամուս», ինչպես գրված է նաև Կորյունի երկու ձեռագրերից մեկի լուսանցքում։ Բայց սա ճիշտ չէ, որովհետև Փարպեցու ձեռագրերը Կորյունի հետ ունեն «երկրորդ» ընթերցվածը և այսպես է նոր հրատարակությունը, էջ 37)։

Փարպեցու պատմությամբ, իր վախճանի ժամանակ, մահվան անկողնի շուրջը բոլորված էին իր երեք թոռները՝ Վարդան, Հմայակ և Համազասպյան՝ Մամիկոնյան երեք եղբայրներ, որոնք ծնված էին Սահակի Սահականույշ աղջկանից, ամուսնացած Համազասպ Մամիկոնյան իշխանի հետ։ Եվ որովհետև Սահակ արու զավակ չուներ, ուստի իր ամբողջ կալվածները նրանց հանձնեց՝ ի ժառանգություն Մամիկոնյան ցեղի։ Հետո բարձրացրեց իր ձեռքերը, օրհնեց նրանց, պատվիրեց հաստատուն պահել միշտ Լուսավորչի դավանությունը, որի քարոզության և ուսուցման համար այնքան աշխատանք էր թափել ինքը։

Սահակի հուղարկավորությունը փառավոր ճամբորդություն եղավ. իր պատվական մարմինը վերցրին բոլոր իր ձեռքի տակ սնված ու սովորած աշակերտները, որոնց գլխավորն էր Երեմիա սարկավագապետ։ Ներկա էին նաև Սահակի հարսը՝ Դուստր կամ Դստրիկ տիկինը (ըստ Ասողիկի, էջ 77, Դխտիկ), որ Վարդան Մամիկոնյանի կինն էր, մի խումբ նախարարներ և բազմաթիվ ժողովուրդ։ Այս ամբողջ խումբը ճանապարհ ընկավ Բլրոց գյուղից և սաղմոսներով ու հոգևոր երգերով, միշտ ցերեկը ճամբորդելով, մի քանի օր հետո հասավ Տարոնի Աշտիշատ գյուղը, որ Սահակի ընիկ գյուղն էր և ուր անց էր կացրել իր մանկությունը։ Այս գյուղի մեջ հանգչեցրին նրա մարմինը, որից հետո ամեն մարդ դարձավ իր տեղը։

«Կորյունի խոսքերից այնպես է երևում, թե Սահակի մարմինը գյուղի եկեղեցու մեջ թաղվեց. «Եւ անդ ի մարտիրոսական խորանին յարկեղ սրբոցն, հանդերձ ամենայն անուշահոտ խնկօք եդեալ և կնքեալ քրիստոսադրոշմ կնքովն և զօրինաւոր յիշատակն ի վերայ կատարեալ, այնուհետև իւրաքանչիւր դառնային» (Կորյուն, էջ 25)։ Բայց ըստ Փարպեցու եկեղեցին հետո շինվեց Սահակի գերեզմանի վրա, որ թանկագին սպասներով զարդարեցին. հետո հիմնեցին նաև միաբանների համար վանք. նույնպես տոն հաստատեցին, և ամեն տարի Նավասարդ ամսի 30-ին, մոտերքից և հեռուներից անհամար ժողովուրդ գալով տոնում էր Սահակի մահվան հիշատակը։ «Ուր և շինեալ եկեղեցի մեծապայծառ և վկայարան սրբոյն՝ զարդարեցին պատուական և մեծագին սպասուք. հիմնացուցեալ կանգնեցին ի տեղւոջն վանս բազմութեան պաշտօնէից. կարգեալ դարմանս անպակաս պտղոց ի հանգիստ առավելեալ եղբայրութեանն, ժողովս տարեւորականս աշխարհայորդոր բազմութեամբ հաստատեցին ի տեղւոջն, որ ըստ ժամանակի բազմամբոխ ժողովրդոք կամաւոր յօժարութեամբ՝ ազատք և կտրի յոյժ հեռաւոր տեղեաց դիմեալք յօր կարդադրութեան նորա տօնենն» (Փարպեցի, էջ 104—105), «յերկուսն

նավասարդի ամսեանն» (Փոքր Կորյուն, էջ 29)։

Այսօր Մշո մայրավանքից դեպի վեր բարձրացող լեռան վրա։ Դերիք կոչված փոքրիկ գյուղի մոտ, անշուք և անձուկ, ա-նարգ տեսքով և հազիվ մարդաչափ բարձրությամբ մի շենք կա, կոշտ ու սևացած կամրջով ծածկված, որի ներքև և կիսովի պատին խառնված մի քարի տակ հանգչում են Ազգի և Եկեղեցու, լեզվի և գրականության մեծագույն երախտավորի ոսկորները։ Սահակի գերեզմանին շատ մոտ է Աշտիշատի Մայր եկեղեցին, որի հիմքերը և սակավ մնացորդները դեռ տեսնվում են (Օրմանյան, «Ազգապատում», Ա, 320)։

§ 4

Սահակի մահից հետո։ իր ձեռքի տակ սովորող բոլոր կրոնավորները ցրվեցին գավառները, ուր վանքեր շինելով, միաբանություններ հաստատեցին (Խորենացի, Գ կէ)։

Իսկ երանելին Մեսրոպ։ որ ներկա չէր Սահակի մահվան և հուղարկավորության, լսելով իր ավագ ընկերակցի մահը, խոր տրտմության և ծանրաթախիծ սուգի մեջ ընկավ։ Ցկար այլևս այն հայրական քաղցր ձայնը, որ իր եռանդուն գործունեության ժամանակ քաջալերություն և տխուր վայրկյաններում մխիթարություն էր տալիս, որ իր կորովի գործակցությամբ և հեղինակավոր հրամանով իրեն աջակցություն էր ցույց տալիս։ Հայոց թագավորություններ կործանված, Հայոց Հայրապետությունը անարժան անձերի ձեռքը խաղալիք դարձած և քահանայապետության վերջին շառավիղն էլ հանգուցյալ։ Ո՞վ պիտի կարողանար այլևս մխիթարել տառապյալ ու հուսակտուր ժողովրդին։ Եվ թեև այս խորունկ տխրությունը չէր թողնում իրեն մի վայրկյան զվարթանալ, բայց պարտականության ձայնը կենդանի էր և զորեղ։ Սահակի մահից հետո։ Հայրապետական Աթոռի տեղապահությունը Վաղարշապատում՝ հանձնվել էր Մեսրոպին։ Այս մասին վկայում է Կորյունը՝ շատ հակիրճ մի ակնարկով. «և զվերակացութիւնն սրբոյ եկեղեցւոյ՝ շնորհօքն Աստուծոյ առանց պակասութեան տանէր»։ Նման մի վկայություն էլ ունի Փարպեցին. «Եւ յետ վեց ամսոյ կատարման Սրբոյն Սահակայ՝ վախճանեցաւ երանելին Մաշտոց... զորոյ զհետ յաջորդեաց զԱթոռ Հայրապետութեան աշխարհիս Հայոց, հրամանաւ երանելւոյն Մաշտոցի՝ Սուրբն Յովսէփ (Փարպեցի, էջ 38)։ Եթե Հովսեփ կաթողիկոսը հաջորդում է Մաշտոցին և այն էլ հենց Մաշտոցի հրամանով, ուրեմն Մաշտոցը հովվապետ է։ Այս նույնը ավելի հայտնի կերպով գտնում ենք Մեսրոպ երեցի վերջում դրված մի ծանոթության մեջ. «Յառաջ քան զվախճանելն Սահակայ կաթողիկոսի, տայր զտեղապահութիւն Աթոռոյն Սրբոյն Գրիգորի՝ Մեսրոպայ վարդապետին և Մեսրոպ տայր Յովսէփ երիցուս։ Գանձակեցին էլ հաստատում է նույնը. «Եւ Սուրբն Սահակ կալեալ զհայրապետութիւնն ամս յիսուն և մի։ և փոխի խաղաղական մահուամբ ի կարգս հրեշտակաց։ Տուեալ զԱթոռն ցսուրբն Մեսրոպ. յոր և նա ի նոյն ամի ելից զկենցաղս յիշատակ բարի թողեալ ապագայից։ ի սկզբան առաջին Յազկերտին պարսից արքային, որդւոյն Վռամայ երկրորդի. և առնու զԱթոռն Սուրբն Յովսէփ աշակերտ նոցա» (էջ 19—20)։ Վերջապես ուրիշներ, ինչպես Փարպեցու պատմածից էլ կարելի է եզրակացնել, ուղղակի կաթողիկոս կամ հայրապետ են դարձնում Մեսրոպին. այսպես «Յայսմաւուրք»-ը. «Եւ նստաւ Սուրբն Մեսրոպ յետ նորա կաթողիկոս վեց ամիս» (Հոռի Ը). «Եւ յետ նորա յաջորդեաց զԱթոռն Հայրապետական սուրբ հայրն հասարակաց և վարդապետն ճշմարտութեան մեծն Մեսրոպ» (Մեհեկի ԺԳ)։ Նաև «Պատմութիւն տեսլեան Ս. Սահակայ» (ձեռ. Կարինյան, № 1757, էջ 28բ). «Եւ զհետ նորա (Սահակայ) յաջորդէ զԱթոռ Հայրապետութեանն սուրբ վարդապետն և թարգմանիչն Մեսրապ գրաստեղծն, որ և Մաշթոց անուանեցաւ։ Այսպես է ընդունում նաև Ինտգյան («Անահիտ», 1905, էջ 241 և Կորյուն, էջ 64) և տալիս է սրա համար հետևյալ պատճառաբանությունները. 1) Սահակի մահից հետո Մեսրոպից ավելի արժանավոր մարդ չկար, որպեսզի նրան տրվեր կաթողիկոսական պատիվը. 2) ըստ Կորյունի, Մեսրոպ Սահակի մահից հետո Հայաստանի ամեն կողմը հովվական խրատական թղթեր է ուղարկել և սա ուրիշ պաշտոն չէ։ եթե ոչ հայրապետի։

Բայց ինչպես ընդունված է մեր պատմության մեջ, երևի Մեսրոպ այսպիսի բարձր աստիճանի հասած չէ և վերոհիշյալ տեղեկությունները լոկ չափազանցություններ են իր տեղապահական պաշտոնի։ Ա. Ջամինյան («Հայոց եկեղեցու պատմություն», Ա, էջ 68), ընդունելով երկուսի միջին ձևը, ասում է, որ «Սահակից հետո կաթողիկոս է դառնում, թեև ոչ ձեռնադրությամբ, Մեսրոբ Մաշտոցը, որ արդեն Սահակի Թագրևանդ եղած ժամանակ նստում էր Վաղարշապատում»։

Ինչպես էլ լինի, Մեսրոպ մինչև վերջին րոպեն չթերացավ իր ջլատված ուժերը նվիրել Ազգին և ժողովրդին. ավետարանական քարոզություններ և Հայրապետական Աթոռի

տեղապահությունը անխափան և առանց պակասության առաջ տարավ մինչև վերջ։ Աշխատեց, ջանք գործ դրեց, որ ամեն մարդ բարության ճանապարհի մեջ անխախտ մնա։ Տեսավ, թե մոտ էր նաև իր վախճանը, ուստի կտրեց իր աչքերից քունը և գիշեր ցերեկ պասով, աղոթքներով ու հոգևոր երգերով էր պարապում, ճգնավորական խստամբեր կյանք էր անց կացնում և զգուշացնում ամենքին՝ պահելու աստվածային պատվիրանները։

§ 5

Եվ մինչդեռ Մեսրոպ այսպես մոտավորներին խոսքով ու հեռավորներին խրատական թղթերով հորդոր էր կարդում, մահվան հիվանդությունը վրա հասավ և ծերունին անկողին ընկավ։ Իր հիվանդության գույժը ցնցեց ամբողջ երկիրը. և ամեն կողմից իր մոտ թափվեցին աշակերտներ, կրոնավորներ, իշխաններ ու նախարարներ։ Ահա այնոր ծերունին պառկած է իր մահճի մեջ. իր սիրելիները իր շուրջն են պատել. ահա Հովսեփ երեցը, ահա Թոդիկ, Մեսրոպ Մաշտոցի սիրելագույն և գլխավոր աշակերտները. հայ նախարարական դասից ներկա են Վահան Ամատունի՝ Մեծ Հայաստանի հազարապետը, Համայակ Մամիկոնյան՝ քաջն Վարդանի եղբայրն ու Սահակի թոռը. բոլորն էլ Մեսրոպի ձեռքի տակ սնված և ուսած անձեր։ Մի քանի օրվա կարճատև հիվանդությունից հետո, երբ հասած էր արդեն կյանքի վերջին վայրկյանը. Մեսրոպ թեթևացավ հանկարծ ու սթափվեց իր ցավերից, և հոգու անդորր խաղաղության մեջ, և իր բոլոր աշակերտների ներկայությանը, կանգնեց իր անկողնի վրա, և իր սուրբ ձեռքերը երկինք բարձրացնելով, օրհնեց վերջին անգամ իր ժողովուրդը, աստվածային օգնականությունը հայցեց նրանց համար և բոլորին էլ Աստուծո շնորհներին հանձնեց։ Եվ երբ դեռ ձեռքերը երկինք կարկառած՝ աղոթք էր մատուցում, ասում է Կորյունը, ահա սքանչելի մի տեսիլք երևաց երկնքից. խաչանման շողշողուն մի լույս ծագեց այն ապարանքի վրա, ուր էր Մեսրոպ. ամեն մարդ իր աչքով տեսավ այդ լույսն ու հիացավ։ Իսկ այդ լույսի ցոլացման մեջ, ամենքին սեր և միաբանություն պատվիրելուց հետո, մերձավորներին ու հեռավորներին օրհնությամբ պսակելուց հետո, աստվածային աղոթքների մեջ փչեց իր շունչը՝ Հայաստանի գրական կյանքին ծնունդ տվող Հայրը։

Այսպես վախճանվեց Մեսրոպ՝ Այրարատյան զավառի Վաղարշապատ քաղաքում, Սահակի վախճանից վեց ամիս հետո, Մեհեկան ամսի տասներեքին (ըստ Փոքր Կորյունի՝ էջ 31, տասնյոթին)։

§ 6

Խորենացին (և նրանից առնելով «Ցայսմաւուրք», Մեհեկի ԺԳ և «Պատմութիւն Ս. Սահակայ»՝ «Սոփերք», Բ, էջ 36) պատմում են, թե Մեսրոպի մարմինը ուր թաղելու մասին խռովություն և անհամաձայնություն ծագեց ժողովրդի մեջ. երեք կուսակցության բաժանվեցին. առաջին խումբն ուզում էր տանել Տարոն՝ Մեսրոպի բնիկ գավառը. երկրորդն ուզում էր տանել Գողթն գավառը՝ որ առաջին անգամ քնտրել էր Մեսրոպ քարոզության համար (ըստ «Ցայսմաւուրք»-ի թաղելու Մասրնվանքում), իսկ երրորդ խումբը ուզում էր թաղել Վաղարշապատում, սրբերի գերեզմանների մոտ։ Բայց քաջն Վահան Ամատունի, որ այն ժամանակ Հայոց Աշխարհի հազարապետ էր նշանակված պարսից տիրության կողմից, երեք կուսակցության դեմ էլ հաղթող հանդիսանալով, հաջողեց Մեսրոպի մարմինը իր սեփական գյուղը՝ Օշական փոխադրելու։

Իսկ Կորյուն (էջ 27), ինչպես և Փարպեցի (էջ 105), առանց այսպիսի տարաձայնություններ հիշելու, պարզապես հայտնում են, թե Վահան Ամատունի և Համայակ Մամիկոնյան մարմինը Օշական փոխադրեցին։

Փառավոր եղավ հուղարկավորությունը. ներկա էր կրոնավորների և աշխարհականների ահագին մի բազմություն. թափորը ճանապարհ ընկավ Վաղարշապատից և վառած կանթեղներով ու բուրբոքած ջահերով, և սաղմոսներ, օրհնություններ ու հոգևոր երգեր երգելով, դիմեց դեպի Օշական, որ էջմիածնից երեք ժամվա հեռավորություն ունի դեպի հյուսիս։ Ուղևից գնում էր այն խաչանման լույսը, որ Մեսրոպի վախճանելու պահին ծագել էր։ Օշական հասնելով, մտան մատուռը և ոսկեղեն պատշաճ եկեղեցական արարողություններ կատարելուց հետո, մարմինը հողին հանձնեցին։ Եվ լույսը, որ մինչև այնտեղ առաջնորդել էր դագաղին, անհետացավ[1]. այնուհետև և ամեն մարդ իր տեղը վերադարձավ։

[1] Ըստ Մալխասյանի, աշխարհաբար թարգմանություն Խորենացու, ծանոթություն 344, այդ ցոլացող լույսը, շատ բնական բացատրությամբ, էր դագաղի վրա դրված ոսկրի արծաթե խաչի ցոլացումը օդի մեջ խաղաղ եղանակին, արեգակի ճառագայթների տակ։— Տե՛ս և հ. Տեր-Մինասյանի դրածը, «Բյուրակն», 1898, էջ 531։

Ինճիճյան («Աշխարհագրութիւն. չորից մասանց աշխարհի», մասն Ա՝ «Ասիա», հատոր Ա՝ «Հայաստան», էջ 191) թեև գիտե, որ Մեսրոպի գերեզմանը Օշականումն է, բայց նույնը դնում է նաև Մշո Հացիկ կամ Խասիկ գյուղում, որ Մեսրոպի ծննդավայրն է։ Ահա իր խոսքերը. «Յեկեղեցւոյ դեղջս է գերեզման Սրբոյն Մեսրոպայ. յայս եկեղեցի երդնուն Սրբոյն Մեսրոպայ. յայս եկեղեցի հրդնուն մինչև ցայսօր քուրդք և եզդիտիք շուրջանամինչև ցայսօր քուրդք և եզդիտիք շուրջանամինչև ցայսօր քուրդք և եզդիտիք շուրջանամ

և սպասավոր նույն վկայարանի։ Այնուհետև Այրարատ գավառի ժողովուրդը մեծ բազմությամբ գալիս էր ամեն տարի՝ տոնելու Ս. Մեսրոպի հիշատակը, որ մինչև այժմ էլ շարունակվում է։

Մեսրոպի գերեզմանը և խորանը կանգնելուց հետո (նյութական հիշատակարան), Մեսրոպի աշակերտները մտածեցին նաև մեծ վաստակավորի բարոյական հիշատակարանն էլ կանգնել, այն է գրել նրա կենսագրությունը, մի պատիվ, որ մինչև անդամ Սահակ կաթողիկոսին չէր տրված և որ գարուց ի դարս պիտի փառաբաներ Մեսրոպի անունը։ Ու՞մ կարելի էր հանձնարարել այդ աշխատությունը։ Աշակերտները ընտրեցին Կորյունին, որ բացի էջմիածնի վարդապետարանի սան լինելուց, երկար ժամանակ արքանյակ և գործակից էր եղել Մեսրոպին և լավատեղյակ էր բոլոր անցուդարձին։ Հովսեփ, ժամանակի կաթողիկոսը, որ նույնպես աշակերտ էր եղած Մեսրոպին և դասընկեր Կորյունի, հրամայեց սրան գրել այդ գիրքը։ Նրան քաջալերեցին նաև մյուս աշակերտակից ընկերները և Կորյուն հանձն առավ։ Իրեն ենք պարտական «Վարք Մաշտոցի» գիրքը, որ թեև համառոտ, բայց միակ ստույգ և ամփոփ պատմությունն է հայոց գրերի գյուտի (այս մասին տե՛ս Գ. Փառնակ=Ֆնտրգյան, «Անահիտ», 1931, էջ 58)։

§ 8

Վահան Ամատունի իշխանից մինչև այժմ չէր կարող Մեսրոպի Տաճարն ու խորանը անաղարտ մնալ. անշուշտ շատ անգամներ ավերված ու նորոգված են, բայց բոլոր այս նորոգությանց պատմությունը ավանդված չէ մեզ։ Եկեղեցում այժմ գոյություն ունեցող արձանագրությունները 1286 թվականից այն կողմ չեն անցնում. ուստի հնագույն ժամանակի մասին տեղեկություն չունենք։ Ալիշան («Այրարատ», էջ 189), կարծում է, որ առաջին ավերումը պատահած պիտի լինի գուցե խորանի շինությունից 11 տարի հետո, Վահանի հակառակորդ Վասակի ձեռքով, որին հետևող ուրացյալ հայերը, ուրիշ արքունի ձմերոցների հետ, ավերեցին նաև «զամուրն Օշական» ըստ Եղիշեի։ Բայց Ալիշան ավելացնում է ամմիջապես, որ եթե այսպես եղած էլ լիներ, իհարկե Վահան կամ իր պայազատը, հայ նախարարների գերեզմանին, անպատճառ նորոգած պիտի լիներ։

Արդի արձանագրությունները՝ գրեթե բոլոր խոսում են Օշական գյուղի ապահարկության մասին, շնորհիվ Սահմադին իշխանի, որ կարող է Անիի քաղաքագլուխը լինել։ Որովհետև այս արձանագրությանց մեջ տաճարի նորոգություն չի հիշված, ենթադրվում է, թե արդեն նոր էր և կամ քիչ ժամանակ առաջ նորոգված էր նույն իշխան Սահմադինի ձեռքով։ Այսպիսի մի նորոգություն հիշված է իբր 1277 թվականին, բայց թե ո՛ւր է հիշված՝ հայտնի չէ ինձ։

Այնուհետև դարձյալ կործանվեց տաճարը և Փիլիպոս կաթողիկոս Աղբակեցին նորոգեց (նորոգությունը սկսավ 1639 թվին և ավարտվեց 1645 թվին)։ Առաքել վարդապետ Դավրիժեցի համառոտ կերպով պատմում է հիշյալ նորոգությունը հետևյալ ձևով. «Այլ և զհոյակապ և զլայնանիստ և զբարձրաբերձ տաճար փառացն Աստուծոյ, զհանգստարան Մեծի Վարդապետին Մեսրովբայ այնորիկ, որ եգիտ զգիրս Հայոց, որպէս բանք պատմութեան նորա ճառեն, թէ տարեալ հանգուցին գնա ի գիւղն, որ անուանի Օշական, արդ՝ այս տաճար հանգստարանի Սրբոյն Մեսրովբայ վարդապետին ի վաղ ժամանակաց բովանդակ տանիքն փլուղեալ իջեալ էր, և միայն աւագ խորանն էր մնացեալ ծածուկ, և ի ժամանակս կաթողիկոսութեան իւրոյ սուրբ հայրեպետն Փիլիպպոս սկսաւ զայն ևս նորոգել, որ և կատարեաց բազում ծախիւք և աշխատութեամբ, խրատեալ քարիւ և մածուցեալ կրով մինչև աւարտեաց զբովանդակն ի թուականիս մերոյ ՌՂԴ» (Առաքել Դավրիժեցի, «Պատմութիւն Հայոց», տպ. 1884, գլ. ԻԶ, էջ 270—271)։

Փիլիպոս կաթողիկոսի կանգնեցրած տանիքը դարձյալ փուլ գալով, գրեթե 200 տարի հետո թեթև փայտահարկ մի ծածկույթ շինվեց, որ ներսես կաթողիկոս ուզում էր վայելուչ կերպով նորոգել, բայց ժամանակ չունեցավ։ Այս գործը գեղեցիկ կերպով կատարեց Գևորգ Դ Մեծագործ կաթողիկոս Պոլսեցի (Սամաթիացի)։

1872 թվականին Գևորգ կաթողիկոս կոնդակ հանեց, որով հրավիրում էր հայ ժողովրդին օգնել իր այս ձեռնարկության։ Նույն թվին «Արարատ» ամսագրում (հուլիս, էջ 285—286) հրատարակվեց մի փոքր հոդված՝ «Դամբարան և եկեղեցի Սուրբ Մեսրովբ Թարգմանչի Հ0շական», որի մեջ ծանուցվում է, թե նույն եկեղեցու շինության համար նշանակված է հատուկ հանձնաժողով Օշականի գյուղացիներից, թե Օշականցիք բավական նպաստ մատուցել են այս գործին և թե շինությունը պիտի սկսվի 1873 թվի դարնան։ Շինությունը վերջացավ 1879 թվին և կատարվեց հանդիսավոր օծում։

1882 թվին Մեսրոպի գերեզմանի վրա դրվեց կէյա տապանաքար՝ Ղարաբաղի առաջնորդ Պոլսեցի Անդրեաս եպիսկոպոսի ծախսով և կտակով, և Սմբատյանց Մեսրոպ ե-

պիսկոպոսի ձեռքով։ Տապանաքարի վրա գրվեց հետևյալ արձանագրությունը։ «ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 441, ՓԵՏՐՎԱՐԻ 20, ՎԱՀԱՆ ԱՄԱՏՈՒՆԻ ԻՇԽԱՆՆ ԱՄՓՈՓԵԼՈՎ ԱՍՏՑՈՇԱԿԱՆ ԸՋՄԱԲՄԻՆ ՍՐԲՈՅ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՍՐԲԱՅԻՆ ՄԵՍՐՈՎՊԱՅ ԹԱՐԳՄԱՆՉԻՆ, ԿԱՌՈՒՑԵԱԼ Է Ի ՎԵՐԱՅ ԴԱՄԲԱՐԱՆԻՍ ՅԱՆՈՒՆ ՆՈՐԻՆ ՁԵԿԵՂԵՑԻՍ, ՁՈՐ ՆՈՐՈԳԵԱՅ ԳԷՈՐԳ Դ. ԿԱԹՈՂԻԿՈՍՆ, ՏՐՈՔ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ ԵՐԵՒԱՆԱՅ ԵՒ ԱՅԼ ՎԻՃԱԿԱՅՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ։ ԻՍԿ ՁՅԱՊԱՆՍ ԿԱՆԳՆԵԱՑ Ի ՅԻՇԱՏԱԿ Կ. ՊՕԼՍԵՑԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՆ, ՅԱՄԻՆ 1882 ԵՒ ՀԱՅՈՑ ՌՅԼԱ»։

Նույն թվին և նույն Մեսրոպ եպիսկոպոսի ձեռքով նորակերտ զանգակատան գմբեթի վրա կանգնվեց մարդաչափ բարձրությամբ մի խաչ, որ նվիրել էր տփղիսեցի Ալեքսանդր Թալիրեանց։

§ 9

Իր արդի վիճակում Ա. Մեսրոպի տաճարը միջակ մեծությամբ մի շենք է, սովորական գյուղական եկեղեցիներից շատ ավելի գեղեցիկ, բայց նվազ վայելուչ քան մեծ քաղաքների եկեղեցիները։ Պատերը, որ կարծում են, թե հին շինվածքի միակ մնացորդն են, բավական բարձր են. նրանց միջոցը, որ առաջ առանց սյուների էր, բավական ընդարձակ է։ Թեև Կորյունի պատմության մեջ շատ խորանների մասին խոսք է լինում, բայց այժմ կա միայն մի սեղան, որի տակ գտնվում է Ս. Մեսրոպի դամբարանը, մուտքը գտնվելով բեմի աջ կողմը, ուր դրվում է ընթերցվածների գրակալը։ Կան նույնպես երկու ավանդատներ, խորանի երկու կողմերում, որոնք ըստ Ալիշանի կարող են լինել Կորյունի հիշատակած խորանները։ Ամբողջ շենքը շինված է սեագույն հրաբխային քարից (տուֆ), որ երևանի, Վաղարշապատի և շրջակայքի մեջ շատ առատ է և շինությանց մեջ շատ սովորական։ Առհասարակ Օշական գյուղի և Ս. Մեսրոպի տաճարի ու գերեզմանի վրա խոսել են՝

1. Ինճիճյան, «Ստորագրութիւն Հին Հայաստանեայց», Վենետիկ, 1822, էջ 439։
2. Նույնի «Նոր Հայաստան», էջ 266 (շատ համառոտ)։
3. Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանց, «Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ», Էջմիածին, 1842, Բ, էջ 76—81։
4. Ալիշան, «Այրարատ», Վենետիկ, 1890, էջ 188—193, ուր էջ 193 տրված է նաև «Եկեղեցի և գերեզման Ս. Մեսրովպայ յՕշականս նկարը»։

ԱՄՓՈՓՈՒՄ

1. Նախարարները ամբաստանում են պարսից թագավորի առաջ և Արտաշեսին թագավորությունից ու Սահակին կաթողիկոսությունից զցում են։— 2. Սահակ գահազուրկ և Մեսրոպ շարունակում են իրենց կրթական գործը։— 3. Սահակ վախճանվելով, թաղվում է Աշտիշատում։— 4. Մեսրոպ դառնում է տեղապահ կաթողիկոսության։— 5. Վեց ամիս հետո Մեսրոպ վախճանվում է։— 6. Թաղվում է Օշականում։— 7. Վահան Ամատունին 3 տարի հետո նրա վրա կանգնում է մի խորան։— 8. Ս. Մեսրոպի տաճարը նորոգվել է մի քանի անգամ։— 9. Տաճարի նկարագրությունը։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՁՈՐՍԵՐՈՐԴ

ՏՈՆ, ԱՆՈՒՆ ԵՎ ՊԱՏԿԵՐ Ս. ՄԵՍՐՈՊԻ

§ 1

Ինչպես վերևում տեսանք, Կորյունի և Փարպեցու վկայությամբ, Սահակի և Մեսրոպի մահվան նույնիսկ հաջորդ տարուց սկսած, հայ ժողովուրդը սովորություն դարձրեց երկու սրբացյալ անձերի մահվան հիշատակը տոնելու։ Երբ մեր եկեղեցական մատյանները կարգավորվեցին, ինչպես Շարականը, Գանձարանը և Հայսմավուրքը, երկու սրբերի համար էլ պատշաճավոր աղոթքներ հորինվեցին։ Շարականի մեջ մուծվեց «Կանոն Սրբոց Թարգմանչաց»-ը՝ «Որք զարդարեցին և այլն (տե՛ս «Ձայնագրեալ Շարականս, Վաղարշապատ, 1875, էջ 827—833). Գանձարանի մեջ մուծվեց երկու ընդարձակ գանձ. սրանցից առաջինն է «Գանձ թարգմանչացն», որն սկսվում է այս բառերով. «Բարձրեալդ անքնին, բնաւից

---

[1] Վեհափառ Վազգեն Ա Հայրապետի հոգածությամբ և Միլանոյում բնակվող Թորգոմ և Հայկ Ղազարոսյան եղբայրների բարերարությամբ, 1960 թվականին վերանորոգվեց Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցին։ Բարեկարգվեց եկեղեցու ներքը, սալահատակվեց հարավային մայթը և պարապատվեցավ Ս. Մեսրոպի դամբարանը ձեավորվեց և վրան դրվեց բազալտե շիրմաքար «ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ, 361—440» արձանագրությամբ։ Մարմարե հին տապանաքարը մնում է դամբարանում։ Դամբարան տանող նախասենյակը վերակառուցվել է, այնտեղ գետեղվել է հուշարձան քար, որի վրա փորագրվել է Մեսրոպյան երկաթագիր այբուբենը (տե՛ս «Էջմիածին» ամսագիր, 1961 թ., № 4, էջ 27—29)։— ԵՄՊ.։

ությունն, բաւականութիւնս, և որի սկզբնատառերը հոդում են «Ռան քարոզից»։ Այս գանձի հեղինակն ու հորինման թվականը հայտնի չեն։ Ութերորդ տան մեջ հիշվում է Հովհաննես Կոգեոնը.

Հազար ամ կապած,
Գազանն արձակած,
Զոր Կոգեոն ասաց,
Այժմ կատարած» և այլն։

Սրանից հետևում է, թե գանձը գրված է ԺԱ դարում։ ԺԲ դարում Ներսես Շնորհալին սրա վրա ավելացրել է մի փոքր հորդորակ, որին կցված է հետո իր Վիպասանությունից 23 երկտող։

Երկրորդ գանձն է «Գանձ Սահակայ և Մեսրոպայ», իննոտնյան չափով, որի հեղինակն է Առաքել վարդապետ, ինչպես որ տների սկզբնատառերն էլ հոդում են «Առաքել»։ (Այս երկու գանձերը տե՛ս Էջմիածնի նախկին ձեռագրատան (այժմ Երևանի Պետական մատենադարան) Կարինյան № 43 ձեռագրում, էջ 150—154 և 318—321)։

Մի երրորդ գանձ ևս կա Գեորգ անուն գանձասացի անունով, որ մեջ է բերում Այիշան, «Ցուշիկք», Ա, էջ 326—327 և հետևյալն է.

Ո՞վ անվեհեր փութոյն պնդութեան՝
Ի գիտ հանճարոյ սրբոց թարգմանչացն.
Խորհին ստեղծանել տասս գծագրաց,
Նշանակ խօսից հայկական լեզուիս,
Որով վաղ անցեալքն յիշատակին,
Եւ մեկնեալքն՝ դէմ յանդիման խօսին։
Յայս հոգ զարթուցեալ սքանչելին Սահակ,
Զարմն վեցերորդ Սրբոյն Գրիգորի,
Զսոյն առ նովաւ և զոյգ ընդ նմին
Աստուածաբանակ հայրն Սուրբ Մեսրովպ.
Որ և զղձալի պարգևս տառիցն
Ընկալաւ յԱստուծոյ ի մեծ գթութեանցն։
Լե՛ր Քրիստոս, պանպանիչ աշակերտացս
Երջանիկ սրբոց թարգմանչացն, աղաչեմք։

Գրատրական տառից առյրմամբ
Մեծապէս խնդայր Տէրն Սուրբ Սահակ.
Իսկոյն ձեռնարկէր ի թարգմանութիւն
Մարգարէականն աստուածխօսութեանց.
Ժողովեալ մանկունս ի վարժ դպրութեան,
Աճեցուցանէր զուսումն իմաստից,
Զամբելով զկաթն նշանագրացն՝
Առնէր վարդապետս և պատմաբանողս,
Զի յաջորդք հարանցն վարդապետաց՝
Լիցին աշակերտքն պայծառագոյնք։
Լե՛ր Քրիստոս, պանպանիչ աշակերտացս
Երջանիկ սրբոց թարգմանչացն, աղաչեմք։

Եւ ևս ի զօրագոյն զօրութիւն գնալով
Գրատրականին վարժից կրթութիւն,
Պարզ գրագիտութիւնն զարգանալով
Ի հերթողականն արուեստ յառաջիւր.
Որոց առաջին մեզ հայր հերթողաց
Պայծառն Մովսէս այն խորենացին,
Նախկին աշակերտ Սրբոյն Մեսրովպայ.
Ի հերս բայից հզօր քան զնա,
Համազօր նմին՝ Յովսէփ Պաղնացի,
Նորուն վարժակից եղբակ Կողբացի,
Անյաղթն Դաւիթ և Սուրբն Կորիւն,
Եւ միաճամուռ դաս հերականացն,
Որք աստուածեղէն վարդապետութեամբ
Փարթամացուցին զՀայաստանեայս։
Լե՛ր Քրիստոս, պանպանիչ աշակերտացս
Երջանիկ սրբոց թարգմանչացն, աղաչեմք։

«Յայսաւուրքս»-ում չորս հիշակագրություն ունենք այս սրբերի մասին՝ Նավասարդ Լ, Հոռի Ը, Տրե ԺԷ և Մեհեկի ԺԳ, ինչպես որ խոսել ենք արդեն վերևում։

Նոր ժամակարգության մեջ Սահակի և Մեսրոպի տոները տարվա մեջ երեք անգամ են պատահում. առաջինը նվիրված է «Սրբոյն Իսահակայ Պարթևի Հայրապետին մերոյ», երկրորդը՝ «Սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրովբայ», իսկ երրորդը՝ «Սրբոց թարգմանչաց վարդապետացն մերոց Մեսրովպայ, Եղիշէի, Մովսիսի քերթողին, Դաւթի անյաղթ փիլիսոփային, Գրիգորի Նարեկացւոյն և Ներսիսի Կլայեցւոյնս»։ Առաջին երկուսը հնագույն տոների շարունակությունն են, իսկ վերջինի համար կարող ենք ապահովությամբ ասել, որ ԺԲ դարից հետո է գրված, ինչպես ցույց է տալիս Ներսես Շնորհալու հիշատակությունը։ Երեք տոների մեջ ամենից ավելի կարևորն ու նշանավորը երկրորդն է, որ համարվում է Սահակի և Մեսրոպի հանդիպման օրը, Ռահ գետի ափին։ Սրանից հետո գալիս է առաջին տոնը. իսկ ամենից նվազ արժեք ունեցողը երրորդն է։ Այս վերջինը հիշատակությունն է Ե—ԺԲ դարերից պատահաբար հավաքված այլևայլ անձերի, որոնք իրար հետ որևիցե կապ չունեն։ Երեք տոներն էլ ընդհանրապես համարված չէին հանդիսավոր տոնական օրեր, միայն շատ ավելի հետո, երբ մեր ազգային գիտակցությունը հազթեց կրոնական գիտակցության, տեղ-տեղ սկսեցին տոն պահել (կիրակի բռնել) վերոհիշյալ երկրորդ տոնախմբության օրը. թե՛ Պոլիս և թե՛ Կովկաս տպված օրացույցների մեծ մասի մեջ այդ օրը նշանակվեց խաչով. Իզմիրյան մրցանակաբաշխության հանձնաժողովը որոշվեց կատարել միշտ այդ օրը. 1882 թվականին Տփղիսի հայոց առաջին ընդհանուր ուսուցչական ժողովը վճռեց այդ օրը համարել զուտ դպրոցական տոն և կատարել աշակերտական հանդես։

Հիշյալ տոներից երեքն էլ շարժական են. առաջինը գտնվում է միշտ Առաջավորաց պահոց կիրակիից հետո 14-րդ օրը, որ լինում է շաբաթ և տատանվում է հունվարի 24-ից մինչև փետրվարի 28-ը։ Երկրորդը գտնվում է Հոգեգալստից հետո 33-րդ օրը, որ պատահում է միշտ հինգշաբթի և տատանվում է հունիսի 11-ից մինչև հուլիսի 16-ը, իսկ երրորդը՝ տատանվում է հոկտեմբերի 3-ից մինչև նոյեմբերի 7-ը։

Ս. Մեսրոպի բուն տոնախմբությունը երկրորդը լինելով, այդ օրն է, որ կատարվում է Օշականի ուխտագնացությունը դեպի Ս. Մեսրոպի գերեզմանը։

§ 2

Այստեղ գնում եմ «Կանոն Սրբոց Թարգմանչաց» շարականը, որ ըստ Սահակ վարդապետ Ամատունու ուսումնասիրության, հնապես եղել է «Կանոն Մեսրոպ վարդապետիս։ Հեղինակն է՝ առաջին մասի («Որք զարդարեցին»)՝ Վարդան վարդապետ (ԺԿ դար). իսկ երկրորդ մասի («Սքանչելագործ»), որ ըստ այսմ ավելի հին է, Հովհաննես Մանդակունին (Ե դար). կամ ըստ այլոց Խորենացին և կամ Շիրակացին (տե՛ս Սահակ վարդապետ Ամատունի, «Պարականոն շարականներ», էջ 138—139)։

ՇԱՐԱԿԱՆ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ

ՕՐՀՆՈՒԹԻՆ

Որ զարդարեցին տնօրինաբար գիմաստս անեղին,
Հաստատելով յերկրի ըզգիր կենդանի,
Հովուել ըզհօտ նոր Իսրայելի,
Երգով քաղցրութեան ճնչմամբ զԱստուած օրհնեսցուք։

Որք զերկրատոր մեծութիւն փառաց խաւար կոչեցին,
Ապաւինելով ի յոյս անմահ փեսային,
Անճառ Թանին արժանի եղեն,
Երգով քաղցրութեան ճնչմամբ զԱստուած օրհնեսցուք։

Որ զօրութեամբ Հոր իմաստութեան էին անեղի
Հաստատեցին զԱբրոն Սրբոյն Գրիգորի՝
Թարգմանութեամբ նշանագրութեան,
Երգով քաղցրութեան ճնչմամբ զԱստուած օրհնեսցուք։

Որք նորափետուր բանիւ զարդարեալ պայծառազգեցան,
Եկեղեցիք Հայաստանեայց,
Ի ձեռն Սրբոյն Սահակայ,
Երգով քաղցրութեան ճնչմամբ զԱստուած օրհնեսցուք։

Որ թագաւորաց ազգաց և ազանց գերագույն ցուցին
Արփիափայլ զերգս հոգևորս,
Ընտրեալ դասուց վերին Սիովնի,
Անմատոյց լուսոյն երկրպագեսցուք։

Որ խորհրդեամբ ճշմարիտ լուսոյ փառաց անեղին
Նկարագրեցաւ մեզ գիր կենդանի՝
Տարգանդ մաքուր մեծին Մեսրովպայ.
Անմատոյց լուսոյն երկրպագեսցուք։

Որք զծածկեալ խորհուրդ աստուածգիտութեան
Տնօրինաբար յայտնեալ ծանուցին՝
Հանգոյն Սրբոյ մեծին Մովսէսի,
Անմատոյց լուսոյն երկրպագեսցուք։

Որ յօրինակ ճշմարիտ սիրոյ սուրբ առաքելոյն
Ազգերաբար ի ձեզ էացաւ՝
Հոգի շնորհաց բղխումն անսպառ,
Անմատոյց լուսոյն երկրպագեսցուք։

Որ երկոքումբք սուրբ լուսաւորչօք տանս Թարգմայ
Հաստատեցեր զեկեղեցիս Հայաստանեայց.
Զլոյս իմաստից ի մեզ ծագելով,
Մաղթանօք սոցա, Քրիստո՛ս, խնայեա՛ ի մեզ։

ՀԱՐՑ

Սքանչելագործ Աստուած,
Որ ցուցեր զսքանչելիս քո ազգի մարդկան,
Օրհնեմք զքեզ, Տէր Աստուած հարցն մերոց։

Որ ի ձեռն երանելի վարդապետին
Արարեր ողորմութիւն քո ազգի մարդկան,
Օրհնեմք զքեզ, Տէր Աստուած հարցն մերոց։

Որ սովաւ լուսաւորեցեր զտիեզերս,
Սորին բարեխօսութեամբ պահեա՛ զմեզ.
Օրհնեմք զքեզ, Տէր Աստուած հարցն մերոց։

Հրեշտակ երևեցար ի յերկրի
Եւ վարս ուղիր Աստուծոյ հաճոյական,
Ցիշեսջիր զմեզ անդադար, երանելի՜ սուրբ վարդապետ,
Որ ընդ երեշտակս օրհնես զԱստուած յաւիտեան։

Ստացող եղեր պատուիրանաց Սուրբ Հոգւոյն,
Եւ ապրեցար ի հաղրից երապուրողին,
Կատարեցեր զառաքինութիւն,
Եւ փոխեցար ի հանգիստն յաւիտենից։

Արդ, եկա՛յք ամենեքեան միաբան
Առցուք օրինակ հզնութեան զերանելին,
Զի նմանեսցուք վարուց նորա,
Եւ փոխեսցուք ի կեանսն յաւիտենից։

ՈՂՈՐՄԵԱ

Ո՛ր զշնորհս աստուածային առ ի վերուստ
իջեալ յերկնից՝
Պարգևեցեր հիւսիսականացս,
Յայտնեալ տեսլեամբ ի ձեռն սուրբ
վարդապետին,
Աղաչեմք սորա ողորմեա՛ մեզ, Աստուած։

Ո՛ր զանմարմին պարունակող բանի,
Զգրաւորական զիմաստս Հոգւոյն,
Շնորհեցեր որդւոց Թորգոմայ՝ յայտնեալ
տեսլեամբ,
Ի ձեռն սուրբ վարդապետին,
Աղաչեմք սորա ողորմեա՛ մեզ, Աստուած։

Ո՛ր զգիտութիւն քո զերկնային
եւ զճոգևոր քո զիմաստութիւն
Առատապես ծաւալեցեր յեկեղեցիս Հայաս-
տանեայց,
Ի ձեռն սրբոց թարգմանչաց,
Ազաչեմք սորա ողորմեա՛ մեզ, Աստուած։

ՏԷՐ ՅԵՐԿՆԻՑ

Անճառելի շնորհք լցեալ
Ի յիշատակի սուրբ վարդապետին
Խնդրեմք ի քէն,
Տէր, կեցո՛ զանձինս մեր։

Եւ զճգնութիւն սրբոյ վարդապետին
Ընկալցուք ի սիրոս մեր ճաւատով,
Բարեխօսութեամբ սորա,
Տէր, կեցո՛ զանձինս մեր։

Դասաւորեալ ընդ անմարմնական
բազմութիւնսն,
Եւ ի Սրբոյ Հոգւոյն է պսակեալ,
Ի ձեռն սորին բարեխօսութեան,
Տէր, կեցո՛ զանձինս մեր։

ՄԱՆԿՈՒՆՔ

Նմանեալ Մովսէսի, տէ՛ր վարդապետ,
Բերելով զգիր օրինաց,
Ի Հայաստան աշխարհ,
Ոռով լուսաւորեցան ազգ որդւոց
Թորգոմայ։

Քանզի նա արժանաւորեցաւ
Կալ ի Սինէական փառաբանութեան.
Եւ ընկալեալ պատգամս կենդանիս՝
Տայր Իսրայէլեան բանակին,
Ոռով լուսաւորեցան ազգ որդւոց
Յակովբայ։

Աւդ աղաչեմք զքոյին ճիգութիւնդ, տէր
վարդապետ,
Բարեխօսեա՛ առ Հայր ի յերկինս,
Վասն քո տօնողաց,
Քանզի քեզ լուսաւորեցան մանկունք Սուրբ
Եկեղեցւոյ։

(Դժվարիմաց տեղերի բացատրությունը տե՛ս Ավետիքյան, «Բացատրութիւն Շարականաց», էջ 548—552)։

Շատ ավելի կարճ և գեղեցիկ է՝

ՇԱՐԱԿԱՆ ՍՐԲՈՅՆ ՍԱՀԱԿԱՅ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Ո՛ր յարմատոց ճարցն սրբոց մեզ զաւագան
բղխեցեր,
Ըզիսահակ սուրբ հայրապետ՝ նովուել
ըզհօտ քո, Քրիստոս,
Ո՛ր զխաւարն անգիտութեան
Հայաստանեայցքս լուծեր,
Զիմաստութեան ծագեալ զլոյս սովաւ որդւոց
Թորգոմայ,
Ո՛ր զճանդերձեալ խորհուրդ քո, Տէր,
տեսլեամբ սրբոյն ծանուցեր,
Յիշատակի սորա ընկա՛լ զտօնողացս
աղաչանս։

§ 3

Մեսրոպի վրա խոսող մատենագիրները երկու տարբեր անուններ են տալիս իրեն. այն է Մեսրոպ և Մաշտոց (կամ երկուսի զանազան ձևերն էլ ի նկատի առնելով Մեսրոբ, Մեսրովբ, Մեսրովպ, Մասրովպ, և Մաշթոց, Մաշգոց, Մաժդոց)։ Այս երկու անունների գործածությունը շատ զարմանալի է, Կորյուն ընդամենը ութն անգամ հիշում է նրան և միշտ էլ կոչում է Մաշթոց. *այսպես էջ 6, 9 (երկիցս), 14, 21, 25, 26, 27. Կորյունի մեջ* Մեսրոպ *անունը գտնում ենք միայն մի անգամ, այն է գրքի խորագրում. «Պատմութիւն վարուց և մահուան սրբոյ առն երանելւոյ Մեսրովպայ վարդապետի մերոյ թարգմանչի». բայց անշուշտ այս վերտառությունը ուրիշից է գրված և նշանակություն չունի։ Կորյունի բնագրում պիտի լիներ պարզապես «Վարք Մաշթոցի», ինչպես գրել է Ֆնտգլյան՝ Կորյունի հրատարակության խորագրում (Երուսաղեմ, 1930), Փարպեցին, որ Կորյունի հետևողն է, նույնպես նրան ճանաչում է* Մաշթոց *անունով. այսպես էջ 33, 35 (երկիցս), 36, 37, 39 (երկիցս), 41 (երկիցս), 42, 43 (երկիցս), 44, 46, 205, իսկ* Մաշտոց *գրչությամբ՝ էջ 105, 106. ուրեմն ընդամենը 17 անգամ։ Փարպեցու մեջ* Մեսրովբ *ձևը կա 4 անգամ, այն է էջ 39, 40 (երկիցս) և 41. բայց սրանք գտնվելով Խորենացուց նոր արտագրված մասի մեջ, կեղծ են և մենք հիշեցինք միայն ամբողջության համար։ Խորենացին գործ է ածում միշտ* Մեսրոպ *ձևը, որ ունի 39 անգամ. այսպես գլուխ ԽԷ՝ 3 անգամ, ԽԹ՝ 2, ԾԲ՝ 3, ԾԳ՝ 4, ԾԴ՝ 2, ԾԷ՝ 9, ԾԸ՝ 2, Կ՝ 5, ԿԱ՝ 4, ԿԲ՝ 1, ԿԶ՝ 1 և ԿԷ՝ 3 անգամ։ Մի տեղ միայն (գիրք Բ գլ. ժ) ունի*

Մաշտոց. «եկեղեցական գիրք նաեբի կեսարացւոյ, զորս ետ Թարգմանել երանելի վարդապետն Մաշտոց ի հայ լեզուս»։

Մաշտոց ձևը գտնում ենք նաև ուրիշ հեղինակների հիշատակագրությանց մեջ. ինչպես՝ 1. Հովհաննես Իմաստասեր Օձնեցու մոտ. «Եւ կամ զորս ի մէնէից աստի Հոգին Սուրբ զարկամ զորս ի մէնէից աստի Հոգին Սուրբ զարթոյց՝ լինել զենի առաջնոյն լուսաւորիչք. Թոյլ՝ լինել զենի առաջնոյն լուսաւորիչք. զՊետրոսին զնոսա ասեմ սուրբս՝ զՍահակ և զՄաշտոց, և զամենեսին զընտրեալսն զարբանեակս նոցուն և զգործակիցս, զեզնակ և զայլսն» («Ճառ ընդդէմ Երևութականաց», «Մատենագրութիւնք Յովհաննու Օձնեցւոյ», Վենետիկ, 1833, էջ 66).— 2. Եզնիկ Կողբացու Քարի մեջ՝ ուղղված իր ուսուցչին. «Եզնկայ առ Մաշտոց» («Կենիք հաւատոյ», էջ 130, տե՛ս և Սարգսյան, «Ագաթանգեղոս և իր բազմադարյան գաղտնիքը», էջ 383).— 3. Պրոկղի և Ակակի Թղթակցությանց մեջ՝ Սահակի և Մեսրոպի հետ, որ տեսանք վերը (ըստ «Գիրք Թղթոց», էջ 1, 9 և այլն).— 4. «Յովհան իմաստասիրի Հայոց Կաթուղիկոսի սակս ժողովոց, որ եղեն ի Հայք» («Յովսէփ աշակերտ Մաշտոցի և Սրբոյն Սահակայ»), «Գիրք Թղթոց», էջ 220, թեև սրանից 4 տող վերև ասում է «երանելին Մեսրոպ».— 5. «Աբրահամու Հայոց Կաթուղիկոսի առ Կիւրիոն Վրաց Կաթուղիկոս՝ Թուղթ երրորդ» («նախ երանելին Սուրբ Գրիգոր և ապա Մաշտոց» («Գիրք Թղթոց», էջ 180). Նույնը կրկնվում է Ուխտանեսի պատմության մեջ, էջ 84.— 7. Հունաց Փոտ պատրիարքի Հիշատակարանում՝ Mastoubios (ուղղել Mastoúzios) ձևով. տե՛ս այս մասին Ադոնց, «Հանդես ամսօրյա», 1925, էջ 195)։

Այս բոլորից երևում է, թե հին և բնիկ անունն է Մաշտոց կամ Մաշթոց, որ հետո Խորենացու մոտ դառնում է Մեսրոպ։ Խորենացուց հետո եկող մատենագիրների մեջ երկու ձևերն էլ անխտիր գործածվում են, բայց միշտ առավելությունը տրվում է Մեսրոպ ձևին, այնպես որ այժմ մեր ժողովուրդի մեջ Մաշտոց անունը բնավ գոյություն չունի, բայց սովորական է Մեսրոպ։ Այս էլ է նշան, թե հինն է Մաշտոց։

Մեսրոպ անվան հետնության դեմ խոսել է Հ. Հովհաննես Թորոսյան, «Բազմավէպ», 1897, էջ 306, իբր փաստ բերելով երկու հին համարված գրվածքներ. առաջին՝ Եզնիկ Կողբացուն ընծայված «Նշանագիր կարգաց բանիրն Եզնկայ» գրվածքի հիշատակարանը, ուր Մեսրոպ անունն է տրվում սուրբին. «Եւ կարգք գործոցն Գրիգորի Նորոդեալ արամբ միով երանելեաւ տարօնացւոյ՝ որում անուն Մեսրովբ Ճանալէր»։ Երկրորդ՝ Շահապիվանի ժողովի (գումարված 447 թվականին, Հովսեփ կաթողիկոսի նախագահությամբ) կանոնների նախերգանքը, ուր նույնպես Մեսրովբ ձևն է գործածված. «Հոգելից և հոգեձիր ճշմարտասէր վարդապետին Մեսրոպայ, որ լուսաւորեաց զերկիրն Հայոց վարդապետութեամբ իւրով» (Հրտ. Ղլտճյան, էջ 97)։ Այս երկու հատվածների դեմ մենք ա՛յս միայն կարող ենք հիշեցնել, թե առաջինը է դարից է և զուր է վերագրել Եզնիկ Կողբացուն, երկրորդի հարազատությունը դեռ ճշգրտված չէ և անվստահելի մի հատվածի համար վստահելի գրվածներն էլ կասկածի ենթարկել խոհեմություն չէ։ Ընդհակառակը, պետք է, որ վերի հիման վրա, այդ աշխատությունը համարվի հետին գործ, և եթե մինչև իսկ հաստատվի նրա հարազատությունը, գոնե հետնաբար սրբագրված։

Շատեր երկու անունների մեջ զանազանություն դնելու համար ենթադրել են, թե սրբի իսկական անունն է Մեսրոպ, իսկ Մաշթոց միայն մականուն է։ Այսպես Մեսրոպ երեց, «Պատմութիւն Սրբոյն Ներսիսի», էջ 83, գրում է. «Ընդ նմա և աշակերտն իւր Մեսրովբ, որ անուանեցաւն Մաշտոց». նույնպես էջ 110. «Եւ ունէր դէպ նմա Մեսրովբ աշակերտն իւր, որ անուանեցաւն Մաշտոց»։ (Մեսրոպ երեցի համար բնական էր մտածել այսպես, քանի որ իր անունն էլ Մեսրոպ էր)։ Ահա սրա համար է, որ նորերը երկու անունների հարադրությամբ սկսեցին ասել Մեսրոպ-Մաշտոց՝ Կա էլ, որ ընդհակառակը Մաշտոց ձևը համարում է անուն, իսկ Մեսրոպ մականուն։ Այսպես է Օրբելյան, գլուխ ԺԴ. «Յուցից և զկրկին լուսաւորութիւն այսր աշխարհի ի ձեռն սուրբ և յոգնեռանեալն առն Մաշտոցի՝ Մեսրոպ կոչեցելոյ»։ Գարագաշյան, «Քննական պատմություն», Դ, էջ 22, կարծում է, որ Մեսրոպ լինի աշխարհական անուն, իսկ Մաշթոց իբր եկեղեցական տիտղոս։ Ս. վարդապետ Պարոնյան, «Երկրագունդ», 1886, էջ 486—487, Մեսրովբ համարելով ասորերեն բառ, կարծում է, թե այս տիտղոսը տրված պիտի լինի Մաշտոցին՝ Ասորիք արած ճամբորդության ժամանակ, Եդեսիայի Բաբելաս եպիսկոպոսից, երբ Մեսրոպ դառնալով Սամուսատից, հայրենի գտնել հայերեն նշանագրերը և ներկայացնել Բաբելասին։ Օրմանյան էլ կարծում է, թե աշխարհական անունն է Մաշտոց, որ ձեռնադրության ժամանակ դարձրին Մեսրոբ (այն է՝ Տէր Սեբովբէ) («Ազգապատում», Ա, էջ 268). իսկ Նահապետյան («Բազմավէպ», 1913, էջ 147) ընդունելով Մաշտոցը հին անուն, Հունաստանում Ատտիկոս պատրիարքի կողմից տրված է համարում Մեսրոպ անունը՝ եկեղեցաստիկոս ձեռնադրված ժամանակ։

Սակայն բոլոր այս մեկնությունները չունեն բնավ պատմական հիմք և մնում են միշտ երկրայելի։ Գարագաշյանի մեկնությունն էլ հիմնված է անստույգ ստուգաբանության վրա, որ պիտի տեսնենք քիչ հետո։

§ 4

Ի՞նչ են նշանակում արդյոք ստուգաբանորեն Մեսրոպ և Մաշտոց բառերը։ Սրանց համար հնուց ի վեր առաջարկված են զանազան ստուգաբանություններ, որոնք ավելորդ չենք համարում հիշել այստեղ։

ա. «Պատմութիւն վասն Սրբոյն Սահակայ հայրապետին և Մեսրովբայ վարդապետին» («Սոփերք», Բ, Վենետիկ, 1853), էջ 41, Մեսրովբ բառը հանում սեռովբե բառից, մի ակնարկությամբ, որ դժվար չէ հասկանալ. «իսկ ի նորումս մեզ միայն շնորհեցաւ գիր յԱստուծոյ ի ձեռն Սրբոյն Սահակայ, որ խնդութիւն կոչի և մեծին Մեսրովբայ սրովբէատեսն անուանաւ։— Սահակ կամ Իսահակ <եբրայերեն Isxäq կամ Isxaq, որ հանվում է sxq «ծիծաղել, կատակել» արմատից Gesenius, Hebr. «Handwörtı, Leipzig, 1921, էջ 312). իսկ Մեսրոբ համարում է իբր մար (որ է աստուծերեն «տէր»+) սեռովբէ։

Այս մեկնությունը ընդունում է նաև Ս. վարդապետ Պարոնյան (տե՛ս մի քիչ վերը), որ ըստ այսմ Մեսրովբ ձևը համարում է հարազատ, իսկ Մեսրոպ՝ նրա ժողովրդական աղավաղություն։ Նույնպես Հ. Բ. Սարգիսյան («Ազաթանգեղոս և իր բազմադարյան գաղտնիքը», էջ 404), որ կարծում է, թե Մար-Սրովբ «Տէր Սեռովբէ» մի պատվանուն է, որ աստուծերը տվին Մաշտոցին, ինչպես հույները տվին եկկլեսիաստիկոս տիտղոսը։ Նույնը ընդունում և պաշտպանում է դարձյալ Ֆնտգյան, «Հանդես ամսօրյա», 1926, էջ 270։

բ. Կարապետ եպիսկոպոս Սասնացի, «Ներբողեան յաղագս վարուց և մահուան Ս. Վարդապետին Մեսրովբայ» (Վաղարշապատ, 1897, էջ 66) Մեսրոբ մեկնում է «տէր սուրբ և սեփական», այն է աստուծերեն մար «տէր»+հայերեն սուրբ բառերով. հայտնի չէ թե ո՞րտեղից է հանում «սեփական»-ը։

գ. Վարդան պատմիչ մեկնում է «կանանչացեալ, յարազուարճ և բերկրեալ». «Մեսրոպայ, որ է կանանչացեալ, այսինքն յարազուարճ և բերկրեալ, հօր մերում տեղի և յիշատակ ընդ առաւել սուրբսն, և մեզ աղօթիւք նորա ողորմութիւն և գիտութիւն յԱստուծոյ ի համար աշակերտաց նորա և հոգեւոր որդոցս։ Այստեղ հրատարակիչը ճշտիվ գուշակել է հեղինակի ստուգաբանությունը, որ է արաբերեն masrur «ուրախ» («ի սեմական լեզուաց ստուգաբանելով. մեսրուր բերկրեալ լսի յարաբացին»)։

դ. Պատվելի Գալուստ Թիրյաքյան, ինչպես լսել եմ, Մեսրոբ համարում է հայերեն սուրբ բառի արաբական իսմ–ի մաֆո՛ւլ կազմված անցյալ դերբայը, որով բառը նշանակում է «սրբացեալ»։

ե. Ա. Մ. Գարագաշյան, «Քննական պատմություն», Գ, էջ 193 և Դ, էջ 22, Մեսրոբ մեկնում է պարսիկ բառեն միսրիֆ, որ կնշանակե դպիր կամ քարտուղար», իսկ Մաշթոց «հույն բառեն Μαστος կնշանակե բարձրություն։ Այս ստուգաբանությունը կրկնում է Ե. Թոփչյան, «Մեսրոպ Մաշտոց» տետրակում, էջ 7։

զ. Միաբան (Գալուստ Տեր-Մկրտչյան) Մաշտոց բառը հանում էր մաշտել «խլել, քաշքաշել, թափել», մաշտիլ «մազերը թափիլ» բայերից, իբր մաշտոց «մազերը քերելու, պոկելու գործիք, մազխիլ», հետո դարձած հատուկ անուն (լսել եմ անձամբ իրենից 1900 թվականին)։ Նույնը նաև Խալաթյան, «Армянск. Аршакииды», էջ 316, բայց ենթադրելով, թե մաշտել բայը մի ուրիշ նշանակություն էլ կարող էր ունեցած լինել։

է. Ս. վարդապետ Պարոնյան («Երկրագունդ», 1885, էջ 490) Մաշտոց բառը համարում է ոչ թե բուն անուն Մեսրոպի, այլ ընդհակառակը անուն Միսարանի, որից անցել է հետո հեղինակին։ Ըստ Պարոնյանի մաշտոց «զենդերեն մազդ բառն է, որ է մերս իմաստ, իմաստուն և կամ մեգդ, որ կնշանակե երգ, զոհ, և որուն լծորդն է պաշտ, պաշտոն, կամ եբրայերեն մաշծոր, որ կնշանակե «աղոթագիրք»։

ը. Ավգերյան («Լիակատար վարք սրբոց», Ե, էջ 28) մեկնում է հետևյալ ձևով. «Եւ էր առաջին և սովորական անուն սուրբ վարդապետիս Մաշտոց կամ Մաշթոց. իսկ Մեսրոպն անուն եղև յորջորջուն յաւելեալ իբրև մականուն, թերևս զկնի վարդապետութեանն, որպէս թէ մեծ բարուն ստուգաբանելի, կամ Մշու բարքի»։

թ. Ալիշան («Շնորհալի և պարագայ իւր», Վենետիկ, 1873, էջ 451) հանում է մաշտ արմատից, որ «սրբազան նշանակություն մը պիտի ունենա, թերևս հոմանիշ մշտիկ բառին, որ կնշանակե օրհնյալ շրոց ցանիչ գործին կամ ճյուղը»։

ժ. Ֆնտգյան, նախ «Անահիտ», 1905, էջ 71, ծիծաղում է մաշտոց «ճաղատ» ստուգաբանության վրա. այս մարդու զանազան հատկությունների մեջ միայն ճաղատ լինելը աչքի ընկավ, հարց է տալիս նա, և կամ այս մարդը ճաղա՞տ է ծնվել, որ հենց սկզբից Մաշտոց են դրել անունը։ Հետո, «Հանդես ամսօրյա», 1926, էջ 268, Մաշտոց կապում է իրանյան Mazdak անվան հետ. Մաշտոցի արմատն է մաշտ=Mazd, ինչպես

yazd=յաշտ.-ոց վերջավորությունը գտնում ենք Բաբակ—Բաբոց, Տիրիկ-Տիրոց և Արփիկ—Արփոց անունների մեջ։

Ժ. Նույն է նաև Ադոնց, «Հանդես ամսօրյա», 1925, էջ 196, բայց Ադոնց իրավամբ մերժում է յաշտ—yazd բառերի համեմատությունը mazd—մաժդ ձևերի հետ («Հանդես ամսօրյա», 1927, էջ 274)։ Մի քիչ հետո էլ մերժում է հենց mazd—մաժտ ձևերի համեմատությունը և Մաշտոց բառը միացնում է μάζιστος անվան հետ, որ ըստ Հերոդոտի (VII 79) Քսերքսեսի զորականներից մեկի անունն էր։

Ժ. Ադոնց, «Հանդես ամսօրյա» 1927, էջ 278, Մեսրոբ ստուգաբանում է իրաներեն Mitra>Միհր, մեհ+srāva բառերից, որով Մեսրոբ∠ Mitra—srāva նշանակում է «Միհրին գովող կամ Միհրից գովված». հմմտ. զենդերեն durasrob «վատախոս» ձևը։

Այս բոլորը կամայական մեկնություններ են և գիտության համար այնքան արհամարհելի, որ չարժե նույնիսկ նրանց հերքմամբ զբաղվել։

Սակայն եթե անհնար է իմանալ այս բառերի ստուգաբանությունը, կարելի է գոնե որոշել, թե այս բոլոր գրչությանց մեջ, որ վերը հիշեցինք, ո՞րն է ուղիղ։

Ադոնց, «Հանդես ամսօրյա» 1925, 1926 և 1927 էջ 275, հին ձևը համարում է Սաժդոց, ինչպես ունի Պրոկղի Թուղթը, որից առայժմ հետո Մաշտոց։ Իսկ «Հանդես ամսօրյա» 1927, էջ 277, Մեսրոբ ավելի հին է համարում քան Մեսրոպ, հիմնվելով «Կնիք հաատոյ»-ի վրա, որ Պրոկղի Թղթի մեջ ունի Մեսրոբ ձևը։ Մարկվարտ էլ գրում է միշտ Մաշթոց։ Բայց կարելի չէ բնավ հիմնվել Պրոկղի Թղթի վրա, ասելով, թե նա հին է, որովհետև Կորյունն էլ այնքան հին է, որքան Պրոկղի Թուղթը։ Բոլորն էլ հասած են մեզ հետին արտագրություններով, որոնք բնավ արժեք չունեն հնչական տեսակետով։

Գալով Մեսրոպ թե Մեսրոբ ձևին, իմ կարծիքն այն է, որ նախնական և հարազատ ձևն է Մեսրոպ. ապա դարձել է Մեսրոբ, նմանությամբ մի խումբ -ոբ հանգող անձնանունների, որոնք են Քեռոբ, Սեռոբ, Յակոբ, Զենոբ, Յոբ. սրանք գրվում են նաև Քեռովբ, Սեռովբ, Յակովբ, Յովբ, ուստի Մեսրոպն էլ երբեմն դառնում է Մեսրովբ։

§ 5

Որքա՞ն ցանկալի էր ունենալ նկարներն այն վեհ անձերի, որոնք մեր դպրության պատճառն եղան. արդյոք հնությունը խնայա՞ծ է մեզ մեր երկրի անհայտ մի խորշում ծածկելով այդ սուրբ անձերի մի քանդակ։ Ի՞նչ պիտի տան արդյոք Արտաշատի, հին Վաղարշապատի, Դվինի, Տարոնի և այլ հին-հին վայրերի ապագա մանրակրկիտ պեղումները։ Իսկապես հուսախաբությո՞ւն, թե բավարար հայտնությունը մեր հին կյանքի, որ խուլ ավերակների խորը քնում է։ Սպասելով, որ շուտ ծագեր այն երջանիկ օրերի արևը, մենք խոսենք այստեղ համառոտիվ այն նկարների մասին, որոնք այժմ հրապարակի վրա դրված են Սահակի և Մեսրոպի անունով։

Սահակից հայտնի է ինձ միայն երեք նկար. առաջինը հրատարակված է Հ. Հ. Քոսոյանի «Ընտիր Հայկազունք» աշխատության մեջ (Վենետիկ, 1891), էջ 148։ Նկարը ներկայացնում է Սահակին՝ զգեստավորյալ հայրապետական զգեստով և նստած գահի վրա. գլուխը սաղավարտ, ունի շուրջառ և խաչազարդ փորուրար, հետևը դրված է գավազանը. ձախ ձեռքում բռնել է մի գիրք և մի գրիչ, իսկ աջ կողմը նստած է մանուկ մի հրեշտակ՝ ձեռքին բռնած թանաքաման. վերևից ծագում է լույս և լույսի մեջ կախված է Աստվածաշունչը։ Նկարը ստորագրված է Oggioni ing., որ փորագրող իտալացու անունն է։

Երկրորդ նկարը գտնվում է էջմիածնի թանգարանում. նկարիչ Պետրոս Սրապյանը, 1895 թվականին, ներկայացնում է Սահակին, որ գրասեղանի առաջ, մի ոտքը ծնկոտը, գրում է «Պարզևատուն ամենեցունց»-ը. սեղանի տակ թափված են զարդարանքը. սեղանի տակ թափված է խալեությունի պատկերը։ Ամբողջությունը աննշան տպավորություն է թողնում։

Երրորդ նկարը շատ ավելի տարածված է. մանավանդ որ առանձին թերթի վրա մեծ դիրքով դրված էր էջմիածնի Տաճարի Ավագ խորանի աջակողմը։ Թե ո՞վ է պատրաստել այս նկարի նախատիպը, հայտնի չէ ինձ, բայց պետք է որ բավական հին լինի։ Փափագողները կարող են տեսնել «Լույս» օրացույցի 1904 տարվա մեջ կամ Հ. Ճաղարբեգյանցի «Հայոց պատմության» մեջ, տպ. Շուշի, 1895, էջ 53—54։ Նկարը ներկայացնում է Սահակին գլխաբաց, կրոնավորական հասարակ կապայով, ծնկի վրա բռնում է մի գիրք, որ կարծես կարդում է. ձախ կողմում խառնիխուռն թափված են թղթեր, գրիչ, գավազան և այլն։ Պետք է ասել, որ այս վերջին երկու նկարները շատ ավելի անհաջող են քան առաջինը, երեքի մեջ էլ բոլորովին պակասում է այն վեհ և ազդեցիկ կերպարանքը, որով երևակայում ենք Սահակին։ Մանավանդ վերջինը հասարակ, սովորական մի ծերուկից տարբերություն չունի։

Մեսրոպից ինձ հայտնի է վեց նկար, որոնք ընդհանրապես ավելի հաջող են քան նախորդները։ Առաջինը գտնվում է դարձյալ Հ. Հ. Թորոսյանի «Ընտիր Հայկաղունք»-ի մեջ, էջ 164, նույն իտալացի Oggioni ing. անուն անձի փորագրությամբ։ Մեսրոպի Մեսրոպը նստած է գլխաբաց, առջևը կա թևավոր մանուկ մի հրեշտակ, որ տախտակի վրա գրում է Ա, Բ, Գ և այլն. Մեսրոպի կրծքի վրա շրջանակաձև լույս է ցոլում. ոտների մոտ թափված են գրքեր, թանաքաման, վարդապետական սաղավարտ ու դավազան։

Երկրորդը գտնվում է ԺԲ դարում գրված այն հռչակավոր մագաղաթյա Ավետարանի կազմի վրա, որ Գևորգ Դ կաթողիկոսը նվիրեց ռուսաց Ալեքսանդր Բ կայսեր, իր թագավորության 25-ամյա հոբելյանի առթիվ։ Ավետարանը թեև հին, բայց կազմը նոր պատրաստել տրված էր, գեղեցիկ զարդանկարներով, չորս անկյուններում կան Թադեոսի, Բարթողիմեոսի, Լուսավորչի և Մեսրոպի նկարները. մեջտեղում նկարված է Դաստառակը՝ Քրիստոսի պատկերով։ Մեսրոպ գտնվում է ամենավերջին տեղը, այն է աջ կողմը, տակի անկյունում (ժամանակի կարգով ճիշտ է իր տեղը)։ Գլուխը դրված է վեղար, երկու ձեռքերն էլ բռնավորված միմի գրքով։ Ամբողջ կազմի պատկերը հրատարակեց «Փարոս Հայաստանի» թերթը (Բ տարի, 1880, Մոսկվա, էջ 89)։

Երրորդ նկարը, որ Մեսրոպի հայտնի նկարների մեջ ամենից տգեղն է, գտնվում է Գևորգ Դ կաթողիկոսի հաստատության հրովարտակի մեջ, տրված ռուսաց Ալեքսանդր Բ կայսրից։ Մեսրոպի նկարը գտնվում է հրովարտակի աջ կողմը, վեղարով ու վարդապետական զավազանով. մի ձեռքով բռնած է Ավետարան, իսկ մյուս ձեռքով մի տախտակ, որի վրա նկարված է ամբողջ այբուբենը։ Վերևը՝ աջակողմից լույս է ցոլում, որից արտափայլում են Մեսրոպի կրծքի վրա Ա, Ե, Է, Ը, Ի, Ո, Օ ձայնավորները։ Այդ նկարը 1866 թվից է։

Չորրորդ նկարը, որ գտնվում է էջմիածնի թանգարանում և 1896 թվականին նկարված է Պետրոս Սրապյան նկարչի ձեռքով, ներկայացնում է Մեսրոպին՝ ծնկաչոք և բազկատարած աղոթելիս. չորս կողմում ամպեր են կուտակված. լույսը ցոլում է վերևից և նրա միջից ցայտում են Ա, Ե, Է, Ը, Ի, Ո ձայնավորները։ Դիմացի սեղանի վրա երկու գիրք կա դրած և ոլորված մի մագաղաթ։ Անշուք նկար է։

Հինգերորդ նկարը ամենից ավելի տարածվածն է և Սահակի երրորդ նկարի իբրև ընկեր, նրա նման, առանձին թղթի վրա, մեծ գիրքով տպված և հանված է վաճառքի։ Նկարը շատ ավելի հաջող է քան մյուս բոլորը։ Մեսրոպ կրում է սևահեր գոռոզ մազեր և սև կարճ մորուք. գլուխը բաց, վիզը մերկ, հագած վարդապետական պարզ վերարկու, ձախ ձեռքը պարզած կրծքի վրա, աչքերը հառած դեպի երկինք, կարծես այնտեղից ներշնչվելով, աջ ձեռքով գրում է ծնկին դրած թղթի վրա հայերեն գրերը։ Վայելուչ է Մեսրոպի դիրքն ու կերպարանքը, աչքերի երկնասլաց հայացքը, վզի և ձեռքերի վրա ցցված ջղերը բավական ցույց են տալիս այն նվիրական անձի սրբությունը, վեհությունը և գործունեության եռանդը։ Այս նկարը կա Ե. Թոփչյանի «Մեսրոպ Մաշտոց» տետրակի սկիզբը, «Լույս» օրացույցի 1904 տարվա մեջ, ինչպես և Հ. Ճաղարբեգյանցի «Հայոց պատմության» մեջ (Շուշի, 1895), էջ 53—54։ Վերջապես օծված գտնվում էր էջմիածնի Տաճարում, Ավագ Խորանի ձախ կողմը, որի հակառակ կողմն էլ գտնվում էր Սահակի երրորդ նկարը։

Բայց այս բոլորից շատ ավելի գեղեցիկ ու շատ ավելի հուզիչ է Մեսրոպի այն նկարը, որ նկարել է նկարիչ Սագինյանը. սրա իսկականը գտնվում էր Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցու մեջ, խորանի ձախ կողմը. իսկ Սմբատյանի լուսանկարությամբ հրատարակված է Արամ Մելյանի «Հայոց մեծ վարդապետ Սուրբ Մեսրոպ» աշխատության սկիզբը (Թիֆլիս, 1883)։ Նկարի մեջ, աջ կողմում, կուտակված են սև-սև ամպեր, ամպերից այն կողմ լույս է ցոլում. աստվածային Աչը դուրս է կարկառվել ամպերի միջից և հանգչում է այն տախտակի վրա, որ լույսի մեջ կախված է և որի վրա նույն Աչը գրել է ամբողջ այբուբենը։ Այս հրաշալի երևույթի առջև, Մեսրոպ ծունր է իջել և զարհուրած նայում է տեսիլքին։ Մեսրոպի գլուխը բաց է. սպիտակ մազերը և ալեհեր միրուքը քամին դեպի հետ է ցրվում. հագել է վարդապետական շուրջառ և վերարկուի կրծքի վրա ճառագայթում են Ա, Ե, Է, Ը, Ի, Ո, Օ (վերջինը սխալմամբ դրված Ի-ի տեղ). մի մեծ գիրք և վարդապետական զավազանը ընկել են գետին. ամբողջը հուզյալ մի վայրկյանի զորեղ արտահայտությունն է։

§ 6

Վերոհիշյալ ինը նկարները զուտ արդյունք են երևակայության և ձևակերպված են վերջին ժամանակներում. բայց արդյոք հնե՞րն ինչպես էին երևակայել նույն սրբազան անձերին և արդյոք նրանց տված նկարը ճշմարտության ավելի մոտիկ չէ՞ր։ Այս

բանը պարզելու համար մտածեցի դիմել զանազան պատկերազարդ հին ձեռագրերի, ինչպես Շարական և «Յայսմաւուրք», որոնց մեջ հուսալի էր գտնել նաև Մեսրոպի և Սահակի նկարները։ Որոնք որ չիչ, թե շատ զբաղված են այլևայլ Շարականների և «Յաստմաւուրք»-ների նկարների համեմատությամբ, գիտեն, թե ինչպիսի մեծ կապակցություն կա այս նկարների մեջ։ Նրանք գրեթե մեծավ մասամբ իրարից են արտանկարված, այնպես որ կարելի է մտածել, թե մի նոր Շարականի կամ «Յայսմաւուրք»-ի մեջ եղած նկարը հնի շարունակությունն ու կրկնությունն է։ Այս մտածումով մեր որոնած նկարներն էլ պիտի լինեին հնագույն ժամանակի մնացորդ. ուստի իրականին շատ ավելի մոտ, կամ նույնիսկ իրականը, որ կարելի պիտի լիներ գտնել, եթե նկարի վրա բանասիրական աշխատանքներ կատարվեին։

Էջմիածնի ձեռագրատան մեջ Մեսրոպի նկարն ունեն Շարականներից Կարինյան ցուցակի № № 1573, 1575, 1579, 1583, 1587 և 1617 ձեռագրերը, «Ս. Թարգմանչաց» շարականի լուսանցքի վրա. բայց այս բոլորն էլ շատ աննշան գծագրություն ունենալով, արժանի չեն մանրամասն հիշատակության։ Այսպես է նաև Կարինյան № 1495 «Յայսմաւուրք»-ի մեջ, էջ 63, խազմզված Մեսրոպը։ Բայց կարելի է հիշել Կարինյան № № 1488, 1492, 1498, 1501 և Գևորգյան № 571 «Յաստմաւուրք»-ների մեջ նկարված Սահակի և Մեսրոպի նկարները, որոնք ավելի հաջող երևույթ ունեն։ Այս նկարները գտնվում են սեպտեմբեր 9, 17 (երկիցս), նոյեմբեր 25 և փետրվար 19 օրերում։

Սեպտեմբերի 9-ին գտնվում է Սահակի նկարը. № № 1492 և 1488 ներկայացնում են նույն ձևով. Սահակ լուսապսակված կանգնած է, սպիտակ մազերով, սպիտակ մորուքով, կարմիր շուրջառով, որի տակից հագել է դեղին գույնով մի զգեստ, խաչերով մի ուրար ունի վրան, ձեռքը բռնած է ուղիղ կոթով գավազան։ № 1498 ևս նույնն է, միայն առանց գավազանի։ № 1501 շատ տարբեր ձևով է. Սահակ այստեղ երիտասարդ է. սև մորուքով և երկար մազերով. գլխին ունի կապույտ սաղավարտ, հագած է կանաչ զգեստ, վրան բալի գույնով շուրջառ, ձեռքը բռնած կորագլուխ գավազան և Ավետարան։

Սեպտեմբերի 17-ին նկարված են Սահակ և Մեսրոպ միասին. № № 1488 և 1492 ձեռագրերում երկուսը կանգնած են կողք-կողքի և թև-թևի, լուսապսակված, շուրջառով և ուրարով. մին ավելի ծեր է (Սահակ) և մյուսը ավելի երիտասարդ (Մեսրոպ)։ № 1498 ձեռագրում Մեսրոպ մենակ է, լուսապսակված, սևահեր, սեամորուս և զգեստավորված։

Նույն որդ № № 1488 և 1492 ձեռագրերը ներկայացնում են նաև Մեսրոպի տեսիլքը։ Մեսրոպ ալեհեր, լուսապսակված ծերունի, հագած կարմիր հասարակ շապիկ և կապույտ վարտիք, ծունր է իջել մի սարի գագաթին. վերևում, ամպերի մեջ նստել է Հայր Աստված, նույնպես կարմիր շապիկով. նրանից ստացել է Մեսրոպ այբուբենի տախտակը, որ ձեռքերով բարձրացրել է։

Նոյեմբերի 25-ին նկարվում է դարձյալ Մեսրոպ մենակ. № № 1488 և 1492 ձեռագրերում մի ծերունի է լուսապսակված, հասարակ զգեստներով, ձեռքին մի գիրք, որի վրա կարդացվում են «Գիտացիք որ ի յառաջ բառերը։ № 1498 ձեռագրում զգեստավորված է Մեսրոպ և ձեռքին ունի գավազան։

Փետրվարի 19-ին Մեսրոպ նկարվում է նույնպես մենակ. № № 1488 և 1492 ձեռագրերի մեջ երիտասարդ, լուսապսակված, վեղարով և գավազանով. ձեռքից կախված է մի թուղթ, ուր կարդում ենք «Ելի ի Հորէ և եկիր»։ № 571 ձեռագիրը ունի այս՝ լուսապսակված, շուրջառով, ուրարով և ձեռքին մի գիրք բռնած։

Թավրիզում կա մի ձեռագիր («Յաղագս աստուածային բացարձակ կատարելութեանց», 1826 թվականից, սեփականություն Տիգրան Մելիք-Զոհրաբյանցի), որի սկիզբը դրված է Մեսրոպի տեսիլքի մեծադիր նկարը։ Այս նկարը բոլորովին նույն նյութն ունի, ինչ որ Մեսրոպի վեցերորդ նկարը. բայց նրանից շատ ավելի անարվեստ ու անճաշակ ձևով է նկարված։

ԱՄՓՈՓՈՒՄ

1. Սահակ և Մեսրոպ տոնվում են Լեղեցում տարին երեք անգամ։— 2. Այս առթիվ կա հատուկ շարական։— 3. Հնագույն անունն է Մաշտոց, որ հետո դարձավ Մեսրոպ.— 4. Այս բառերի ծագումը հայտնի չէ. կան բազմաթիվ սխալ մեկնություններ։— 5. Սահակից հայտնի են 3 նկար, Մեսրոպից 6 նկար։ 6 Բոլոր նկարները երևակայական են, նոր նկարիչների ձեռքով կազմած. հին նկարներ կան Շարականներում և «Յայսմաւուրք»-ներում։

(Շարունակելի)

Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ՕՐՄԱՆՑԱՆ ԵՎ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ*

14. «ՉԻԼԻ»-ՆՆ ՀԵՏՈ

«Չիլեա բառին հայերենը չկա։

Երբեմն նորընծաներուն սովորական քառասունքն է ան, երբ անոնք հոգևոր կյանք մտնելե առաջ, պահ մը կառանձնանան աշխարհը մոռնալու համար հոգեղեն իր վայելքներուն և իր հուզումներուն մեջ, և իրենց հոգին բանալու համար նոր աշխարհի մը, ուր կիրքերը այլևս տեղ չունին։

Ուրիշներու համար պարզապես ապաշխարանքի կարճ շրջան մըն է, զոր կանցնեն իրենց խուցին մեջ, չարչարելով իրենց խեղճ հոգին իր մեղքի պահերուն համար, և արիվուն ելլելով դարձյալ ցինչ ու մաքրված։

«Չիլեա»-ն տարրեր եղավ Օրմանյանի համար։ Ան իր խուցը մտավ որպեսզի պահ մը մոռնա կիրքերը, որ զուրան են, բայց և անոնց ժխորը միշտ լսե պատուհանին տակ, սփոփանք փնտռե անցյալին խորքը, բայց և չկրնա ճողոպրիլ օրվան հոգերեն, խաղաղիլ փորձե, բայց միշտ փոթորկած մնա. ճգնելու փոխան տքնի, և այս բոլորը քառասուն օր չէ, այլ չորս տարիներ ու դեռ ավելի...։

Եվ սակայն ան ալ ելավ «չիլեա»-ենն։

Համիդի լուծին տակ ճզմված խեղճ հոգևորականը չէր, որ իր խուցը մտեր էր ամբողջ շրջանի մը մեղքը շալկած. իր փոխարեն, ժամանակը քավեր էր մեղքերը, որ իրեն վերագրեր էին, և եթե ինքն ալ ունեցեր էր իրոք մեղքեր՝ դանոնք ալ ինքն էր քավեր լիուլի, բեղուն այն վաստակով, զոր խուցեն դուրս կբերեր հետը։

Խղճով հանդարտ էր և հոգվով հպարտ, երբ վերստին կմտներ ազգային կյանքի մեջ։

Օրմանյան ազգային կյանքի մեջ կմտներ կրկին իսկապես ոգևորիչ պահու մը։ Բացառիկ այն պահերեն մեկն էր հայ ժողովուրդի կյանքին մեջ, երբ կխաղաղեին մեկեն կրքերը մեծ հոգերու առջև։ Հայկական դատն էր, որ կարծարծվեր այդ պահուն ավելի քան 15 տարի մոռացության մատնված ըլլալե հետո։ Հայ ժողովուրդը պահ մը մեկ սիրտ էր դարձյալ այդ օրերուն, որովհետև շատ բուռն էր եղեր հուսախաբությունը օսմանյան ազատութենեն և շատ խոր էր մտատանջությունը, որ ամեն հայու ներսը կար վաղվան համար։ Գրեթե նույն այն օրերուն, երբ Ազգային ժողովը անսպարտ կարձակեր նախկին պատրիարքը իր վրա բարդված մեղադրանքներեն, Ազգային Երեսփոխանական ժողովը կորդեգրեր Հայկական դատը։

Օրմանյան անպարտության վճիռ ստացած էր 1912 դեկտեմբեր 21/1913 հունվար 3-ին։ Երեք ամիս հազիվ անցած էր, երբ 1913 մարտ 14/27-ին Եկեղեցական համադումարը ազգային երեսփոխան կընտրեր զայն։ Պաշտոնական իր մուտքն էր այս ար-

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1961 թվականի № № Ե-ից, Զ-ից, Է-ից, Ը-ից, Թ-ից, ԺԱ-ից, և ԺԲ-ից։

գային կյանքի ներս, քավարանի մը հետո, որ չորս ու կես տարի տևած էր։

Պաշտոնական այդ քողը անցյալին վրա իր նվիրագործումը պիտի ստանար սակայն մայիս 17/30-ին, երբ Օրմանյան իր հանդիսավոր մուտքը պիտի գործեր Ազգային ժողովի սեմին ներս։

Այսօրվան պես կհիշեմ պահը, երբ Օրմանյան Ազգային ժողով կմտներ իբրև երեսփոխան։ Խանդավառ շեղավ ընդունելությունը, որովհետև դեռ բոլորովին սառը կոտրած չէր։ Բայց զինք չերմ կերպով ընդունողներ ալ եղան։ Չորս տարվան «շիլեռ»-ի մը հետո, ազգային կյանքի մեջ կմըտներ Պոլսո նախկին պատրիարքը։ Շատ պարզություն կերևար. իբրև թե ոչինչ պատահած չըլլար այդ չորս տարվան ընթացքին, բայց ո՞վ գիտե ինչ հուզումներ կխռովեին զայն այդ պահուն։

Պատմած եմ առաջին այցս Օրմանյանին Ըթրր փողոցի իր մենարանին մեջ։ Անոր երկրորդ այց մը պիտի տայի տարի մը հետո, 1913-ի ամռան, զայն դասախոսելու հրավիրելու համար Եսայան սանուց միության կողմեն։ Այս անգամ արդեն համարձակ կմտնեի ներս, որովհետև Օրմանյան նոր մարդ էր արդեն։

Բերայի Եսայան սանուց միությունը, 1912-են սկսյալ, դասախոսությանց շարք մը կկազմակերպեր ամառները մասնավորապես գավառներեն արձակուրդով Պոլիս եկող հայ ուսուցիչներուն համար։ Դասախոսելու կհրավիրեինք այն օրերու լավագույն մտավորականները։ Ուզեցինք, որ այն տարին Օրմանյանն ալ քանի մը դասախոսություն ստանձնե մյուս դասախոսներու շարքին, ու ինձ վիճակեցավ դիմումը ընել։

Օրմանյան անմիջապես ընդունեց մեր առաջարկը, և հաջորդական երեք դասախոսություններ ըրավ Եսայան վարժարանին մեջ, ուր տեղի կունենար մեր դասընթացքը։ Իր դասախոսությանց նյութն էր «Հայ Եկեղեցվո հարաբերությունները ուրիշ եկեղեցիներու հետ», նյութ, զոր այնքան լարված ուշադրությամբ մոտիկ ըրին ունկնդիրները, որովհետև ոչ ոք պիտի չկրնար այնքան հմտությամբ զարգացնել զայն, որքան զարգացուց Օրմանյան, երեք փոքր ժամերու մեջ վերլուծելով բազմաթիվ դարեր։

Հրապարակային իր առաջին ելույթն էր այս, հորմեհետև Ազգը անպատասխանատու հոչակած էր զայն իր պատրիարքության տասներկու տարիներուն համար, կամ, ինչպես որ ոմանք կըսեին, նեռած էր անոր։ Պետք է դեռ ժամանակ անցներ, որպեսզի Ազգը, այս անգամ առանց չակերտի, դատեր զայն ինքն ալ, անպարտ ներկայացնելով զայն պատմության առջև։

1913 տարին նոր հանգրվան մըն էր իր կյանքին մեջ։ Լուռ էին իր հակառակորդները, ու լեզուն բացվեր էր արդեն իր բարեկամներուն։

1913 հուլիս 19/1 օգոստոսին Ազգային ժողովին կողմե, Վահան Թեքեյան։ Պատվիր Օրմանյանը, պաշտոն, զոր ան կմերժեր սակայն, փափագելով «վարչական ասպարեզի հեռու մնալ»[167]։

Մյուս կողմե հրավերներ կստանար գավառական պաշտոններու համար։ Առաջին անգամ Ադանան էր, որ իր հավանությունը կխնդրեր առաջնորդ ընտրելու համար զայն, բայց ան կմերժեր։

Նույն տարվան նոյեմբեր 3/16-ին Եգիպտոսի Գավառական ժողովը, առանց անոր հավանությունն իսկ հարցնելու, առաջնորդ կընտրեր զայն Եգիպտոսի հայոց թեմին, և սակայն նույնպես կմերժեր, հակառակ եղած կրկնակի ստիպումներուն։

Օրմանյան կմերժեր նաև Պոլսոյ Նուպար փաշայի հրավերը Փարիզ երթալու և գործակցելու իրեն Հայկական դատին ստացած նոր փուլին մեջ։

Հաջորդ տարի, 1914 փետրվար 28/13 մարտին, Ազգային ժողովը վերստին զայն կդներ լիազոր պատվիրակության մը, որուն մանյան այս անգամ կընդուներ, և մարտ 19/1 ապրիլին կընտրվեր առաջին առենապետ։

Երեկվան քարկոծյալն էր, որ քայլ առ քայլ կբարձրանար Տարպյան ժայռեն վեր։

15. ԴԵՊԻ... ՓԱՆԱՄԱ

Փանաման Երուսաղեմն էր,— անգամ մը ևս հիշելու համար պատմական մնալու կոչված այն մակդիրը, որով Ազգային ժողովին մեջ որակված էր Երուսաղեմի շարաբաստիկ խնդիրը։

Օրմանյանին վիճակված էր այդ խնդիրը արծարծել ժամանակին, երբ դեռ կգտնվեր Պատրիարքական Աթոռի վրա, և հիմա, հաղիվ վերստին մտած պաշտոնական կյանքի մեջ, իրեն կվիճակվեր հիմա ալ հաշվեհարդարի ենթարկել զայն։

Ազգային վարչությունը զինքը դլուխ կընտրեր Կրոնական ժողովի անդամ։ Որկընկերանար, Ազգային-երեսփոխանական ժողովը Կրոնական ժողովի անդամ-կընտրեր բակության երրորդ անդամն էր փաստաբան

[167] «Հանդէս և խոսք», էջ 301։

«Գեորգ Կյուրեղյան։ Ասոնք Երուսաղեմ կուգային վերջնականապես հարթելու համար ամեն կնճիռ՝ թնճուկներու այս օջախին մեջ։

Օրմանյան Երուսաղեմ կմեկներ պահու մը, երբ հայ ժողովուրդը կգտնվեր իր հույսերուն ամենեն վառ հանգրվանին մեջ։ Երկու տարի մաքառելե հետո բարգավաճ կյանքի մը հնարավորությունները ապահովելու համար, հայ ժողովուրդը հասած ըլլալ կկարծեր իր երազներուն պսակման։ Պետությունները երկու տարի վիճելե հետո հայկական բարենորոգումներու մասին, կրցեր էին հասկացողության մը գալ իրարու միջև, և դիջելու հարկադրել թուրքը։

Պետք է ըսել, որ առաջին իսկ պահեն չկրցա՞վ հասկցվիլ Թեքեյանի հետ։ Ազգային վարչության և Ազգային Երեսփոխանական ժողովի լիազորները չկրցան հաշտեցնել իրենց իրավասությունները, և Թեքեյան շունչը Եդիպտոս առավ։ (Երուսաղեմի խնդիրը ոչինչ չէր կորսնցներ Թեքեյանի մեկնումով։ բայց հայ դրականությունը շահեցավ իր լավագույն դեմքերեն մեկը։ հայաջինջ եղեռնին ժամանակ Թեքեյան ազատ երկիր կգտնվեր, և սպանդին զոհ չեղավ։ Թեքեյան ադեն հետո էր, որ տվավ իր գմայլելի քերթվածներեն շատերը)։

Պատվիրակության երրորդ անդամը ևս երկար չմնաց Երուսաղեմի մեջ։ Ան շուտով Պոլիս վերադարձավ, ամիսի մը չափ հին մուրհակները, հրովարտակներն ու կալվածագրերը պրպտելե և անոցմե ամփոփում մը բաղելե հետո։

Օրմանյան մինակն էր ուրեմն Պոլսո իշխանությանց իրրև ներկայացուցիչ։

Երուսաղեմի իր գործունեության ակնարկելով Օրմանյան կըսե. «Շատ դեղեցիկ ծրագիրներով և շատ ընդարձակ միտքերով ճամբա ելած էի Կոստանդնուպոլիսե. տիրող խնդիրները վերջացնել, հաշվական կացությունը բացատրել, համերաշխություն գոյացնել, միաբանությունը ոգևորել, վանական հոգին վառել, բարեկարգությունները լրացնել, վարժարանը բարձրացնել, և տիպար վանքի մը պահանջած պայմանները լրացնելով՝ արժանավոր գլուխի մը հանձնել»[168]։

Պարագաները սակայն չժպտեցան իր առաքելության և իր ծրագիրներուն։

«Երուսաղեմ հասած եմ 1914 մայիս 6/19-ին։ Պաշտոնս է լիազոր պատվիրակություն, Երուսաղեմի խնդիրը վերջացնելու և Երուսաղեմը կարգադրելու հանձնարարությամբ, բայց ինը ամիս է, նշանավոր գործ մը եղած չէ, վի ընդհանուր պատերազմը և Ազգային Պատրիարքարանի ուղղությունը դժվարացուցին գործունյա դեր մը վարել։ Ուստի լավագույն պարագաներու սպասելով, առ այժմ կրավականանամ վանական վարչության հսկել և ներքին հանդարտությունը պահել»,— կգրեր 1915 փետրվար 12/25-ին[169]։

Արդարև, Օրմանյան նոր էր գործի ձեռնարկեր Երուսաղեմի մեջ, երբ խառնակիլ սկսավ աշխարհը։ Սարայևոյի սպանությունը կպատահեր հայ ժողովուրդին համար ճակատագրական պահու մը. նոր էին նշանակվեր զույգ մարզպանները՝ Հոֆն ու Վեսթենենգը, որոնք պիտի երթային հայ ժողովուրդի բարօրության ճամբան հարթել՝ հայկական լոթը նահանգներու բարեկարգության հսկելով։ Պատերազմի առաջին ոումբը կփլցներ հայկական հույսերուն շենքը։ Երկու մարզպանները ձեռնթափ կըլլային իսկույն, բարենորոգումներու ծրագիրը պատառ-պատառ կըլլար անգամ մը ևս, և ամպերը կդիզվեին հայ հորիզոնին վրա։

«Այսպիսով նախնական ծրագիրիս հիմերը քարուքանդ կտապալեին, պաշտոնական գործունեությունը անհնարության կմատնվեր, նյութական գործության ակերը ու խողովակները կխցվեին, անձնական և անհատական գործունեությունն, և սեղմ շրջափակին տկարացած ուժերեն զատ առձեռն պատրաստ միջոց չէր մնար, գեղեցիկ ծրագիրները երազ կդառնային։

Այս բռնադատյալ կացության առջև հարկ կըլլար ինքներիս մեջ ամփոփել, վանական կյանքին կանոնավորությունը ապահովել, վարժարանին ընթացքը չխափանել, ներքին համաձայնությունը պահպանել, եկեղեցական պաշտամունքը թերի չթողուլ, Աթոռին դիրքը չվտանգել, միջադեպեր ստեղծողներուն ու գլուխ վերցնողներուն ասպարեզ չտալ։ ...Ասկեց ավելին ալ չէր կրնար պահանջվիլ խանգարյալ և խաթարուալ պարտականներու բռնակալ տիրապետության ներքև»[170]։

Օրմանյան Երուսաղեմ իր բնակությունը սակայն այլապես օգտակար դարձուց։

Իր առաջին մտահոգությունն եղավ առողջ հիմքերու վրա դնել ժառանգավորաց վարժարանը, որ բազմաթիվ տասնյակ տարիներե ի վեր անբաղձալի վիճակի մը մատնված էր, դարձած էր բոլորովին անպտուղ։ Օրմանյան ուզեց հոգևոր ճեմարանի վերածել դայն, ինչպես պահ մը փորձեր էր ընել Գեորգյան ճեմարանը Էմիածնի մեջ, ինչպես որ հաջողեցավ ընել Արմաշը։

[168] «Նոր և խոսք», էջ 329։

[169] Անդ, էջ 2։

[170] Անդ, էջ 330։

Ուսուցչական ասպարեզին հանդիպ իր զգացած ծարավը պիտի հագեցներ Արմաշեն բաժնվելե երկու տասնյակ տարիներ հետո, իր ծերության օրերուն, երբ Ազգը Երուսաղեմ քշած էր զինքը պաշտոնով։ Իր վարչական հոգերուն մեջ անգամ, ուսուցչական ամբիոնն էր, որ կախարդեց զինքը կրկին։

Ահա թե Օրմանյան այս մասին ինչ կորե. «Վարժապետությունը կամ ուսուցչությունը ինձի բնածին ախտ մը դարձած է, և ամեն պաշտոններուս մեջ դպրոցական զբաղումներու լայն բաժին տված եմ։ Տարբեր չէր կրնալ ըլլալ Երուսաղեմի պաշտոնն ալ, ուր Ժառանգավորաց վարժարան մը կար, շատ համեստ ու պարզ նախակրթական ծրագիրով։ Քիչ մը շարժում ազդելու համար [1914] մայիս 19/1 հունիսեն, այսինքն հասնելիս եկու շաբաթ ետքը, սկսա շաբաթական ազատ դասախոսություններ ընել, որուն միաբաններն ալ կարևոր թիվով կունկնդրեին։ Նյութ ընտրած էի Հայ եկեղեցվո պատմությունն ու վարդապետությունը։ Իսկ ավելի հիմնական բան մը ըրած ըլլալու համար լրացուցիչ դասարան բանալու աշխատեցա։ Հուլիս 28/10 օգոստոսին շրջանավարտներ զատեցի, և առաջին հարկաբաժնի մեջ զետեղեցի, և սեպտեմբեր 25/5 հոկտեմբերին դասախոսել սկսա, նյութ ունենալով Ավետարանի ներածություն, տրամաբանություն ու հոգեբանություն, և բնական ու ջատագովական աստվածաբանություն։ Իսկ 1915 հոկտեմբեր 14/27-ին նույն տարվո շրջանավարտներեն երրորդ դասարան մը կազմեցի, և առաջիններուն սկսա տեսական ու բարոյական աստվածաբանություն, առաքելական թղթոց ներածություն, գրաբարի վարժություն և ատենաբանություն. իսկ 1916 հոկտեմբեր 24/6 նոյեմբերին լրացուցիչ դասարանները կամ լսարանները եղան երեք, և երկրորդ տարվո նյութերու շարունակությենեն զատ՝ կանոնագիտություն կամ եկեղեցական օրենսգիտություն ալ ավելցավ։ Այդ ուսուցչական աշխատությունները կատարեցի միշտ սիրահոժար հանձնառությամբ, առանց որևէ փոխարինության։ Ուսուցչական զբաղումներս դադրեցան 1917 ապրիլ 12/25-ին, երբոր դպրանոցի աշակերտները նոր օրենքներու զորությամբ զինվորագրվի ու մեկնիլ պարտավորվեցանՀ[1]։

Երկու տարի տևեր էր Օրմանյանի պաշտոնական դիրքը Երուսաղեմի մեջ, դժնդակ պայմաններու տակ։

«Երուսաղեմի պաշտոնավարության միջոցը թեպետ երկու տարի երկարեցավ, բայց պետք է խոստովանիմ, թե ոչ պահանջվածին և ոչ փափագածիս չափ արդյունավոր չէ եղած»[172]։

Դժնդակ այդ պայմաններուն մեջ հոգս ցնդած էին իր հյուսած երազները, ու նոր դեպքեր պիտի գային վերջ տալ դույզն ծառայության ալ, զոր դեռ կրնծայեր Երուսաղեմին ի հեճուկս բոլոր դժվարությանց։

16. ՀԱՅԱՋԻՆՋ ՍԱՐՍԱՓՆԵՐՈՒ ՕՐԵՐՈՒՆ

Հայաջինջ սարսափները Օրմանյանը Երուսաղեմի մեջ գտան։ Հայ ժողովուրդի պատմության ամենեն եղերական պահն սկսեր էր։ Ազատ այլևս ամեն կաշկանդումե, երիտասարդ Թուրքերը հասած ըլլալ կարծեցին Հայկական դատի մղձավանջեն խպառ ազատելու վայրկյանը։ Պետք էր չքանար հայ ժողովուրդը քարտեզին վրայեն, որպեսզի խաղաղ քնանային և այլևս որևէ խոչընդոտ չըլլար իրենց ցնորքներու Թուրան տանող ճամբուն վրա։ 1915 ապրիլ 24-ը ազգանշան եղավ։ Այդ օրն էր, որ սկսան գլխատել հայ ժողովուրդը, որպեսզի մարմինը ավելի դյուրավ հոշոտեն։

Թուրք կառավարությունը, տապարը իջեցնելե հետո հայ ժողովուրդին ու չքացնելե հետո արևմտահայ գանգվածին ավելի բան կեսը, վայելատուն հոտերու վերածեց անոր մնացորդացը, իրենց երդիկին տակ ձգելով միայն քանի մը քաղաքներու հայերը։ Գամոկլյան սուրը միշտ կախ սակայն ամենից գլխուն։

Թուրք կառավարությունը այդ օրերուն էր, որ ուզեց հաշվեհարդարի ենթարկել նաև հայ ազգային իշխանությունը։ Ինչ հարկ այլևս Հայոց Ազգային Սահմանադրության, երբոր Հայոց Ազգ չկար։ Ի՞նչ հարկ Պատրիարքարան մը Պոլիս, հատ մըն ալ Երուսաղեմ, և ասոնց կողքին Կաթողիկոսություն մըն ալ Կիլիկիո մեջ, ի՞նչ հարկ այսքան հովիվներու, երբոր հոտ չկար կամ պիտի չմնար։

Եվ ահա բոլոր այս պաշտոնները պիտի միանային Կիլիկիո Սահակ կաթողիկոսի անձին վրա, որ պիտի երթար Երուսաղեմ նստեր, վերապրող քանի մը հայ հոգևորականներե սինոդ մը ունենալով իր կողքին, և փոխանորդ մըն ալ Պոլիս, իսկ Զավեն պատրիարքը թող երթար այլևս հանգիստ ըներ Բաղդադ, իր ընտանիքին մոտ...։

---

171 «Հոգ և խոսք», էջ 322—323։

172 Անդ, էջ 329։

Ակնարկելով իրավական այս նոր վիճակին, զոր «Երիտասարդ Թուրքա»-երը կպարտադրեին հայ տարրին՝ մեկ հարվածով շնչելով դարերու ընթացքին նվիրագործված օրինական կացություն մը, Օրմանյան կգրե· «Հայության դեմ հալածանք բացողը բավական չսեպեց հայ անհատներու կյանքին ու ինչքերուն, Հայ Եկեղեցվո պաշտամանց ու հաստատությանց դեմ ուղղել իր փքիններր, և նույնիսկ պետական սկզբունքով, նախնական ավանդությամբ և կայսերական հրովարտակով ճանչցված ու հաստատված հայությունը ուզեց իր կազմեն զրկել, և անոր նոր կազմակերպություն մը տալ, որով յուր կարևորությունը կորսնցնե, և, եթե հնար ըլլար, գոյությունն իսկ վտանգե։ Այդ նպատակով կազմված է Հայոց Կաթողիկոսության ու Պատրիարքության Կանոնագիրը, որ 1916 հուլիս 19/1 օգոստոս թվականը կկրե, և կայսեր ու բոլոր նախարարներու ստորագրությամբ վավերացված է»[173]։ Առժամյա օրենքի մը բնույթը չունի ան, այլ պարզապես կշնչե 1863-ի Ազգային Սահմանադրությունը, հիմնական նպատակ ունենալով Թրքահայերը Մայր Աթոռեն բաժնել, հասարակության առջև յուր գործերուն միջամտելու դուռերը փակել, ժողովրդական քվեարկությունը իսպառ խափանել, և պատրիարքական վարչության վրա Ազգը հսկող և համարառու չճանչնալ։

Երբ Սահակ կաթողիկոս, այս անգամ իր վրա ունենալով Թուրքիո Ամենայն Հայոց Պատրիարքի տիտղոսը ևս, Երուսաղեմ կուգար զետեղվիլ, Օրմանյանի դերը կվերջանար այլևս Ս· Հակոբի վանքին մեջ։ Ատենին Սահակ կաթողիկոսը ինքն էր եղեր Օրմանյանի հրամաններուն տակ, երբ ան Թուրքիո հայոց պատրիարք էր, իսկ ինքը Մեծի Տանն Կիլիկիո մեծ տիտղոսին ներքև հոգևոր պետ մը Սիսի մեջ, որուն վրա Պոլիսը կիշխեր վարչապես։ Նույն այդ Օրմանյանը, զոր երբեք հանդուրժած չէր, հիմա պարզ հոգևորական մըն էր իրեն ենթակա, և զայն սինոդի անդամ իսկ նշանակած չէին։

Օրմանյան, այլևս իբր պարզ վանական, իր հոգևոր պարտականությունները կկատարեր լրիվ, մեկ կողմե զբաղելով իր գրական աշխատանքներով, և մյուս կողմե շարունակելով իր դասախոսությունները աշակերտության, որուն վրա ավելցած էին Արմաշի դպրեվանքին աշակերտներն ալ, նոր Երուսաղեմ հասած։ Դասախոսությունները ընդհատվեցան սակայն 1917 ապրիլ 12/25-ին, աշակերտները զինվորագրվելու կանչված ըլլալով, և անկե հետո Օրմանյան ամբողջապես կլանված մնաց գրական աշխատանքներով։

Պետք է ըսել այստեղ, թե Սահակ կաթողիկոս մինակը չէր գար, անոր հետ միասին Երուսաղեմի մեջ ուժի կանցներ շուտով հին օրերու իր օծակիցը Ղևոնդ Մաքսուտյան, Ազգը տասնյակ տարիներ հոգերով բեռնավորելե, դատվելե ու դատապարտվելե, այնքան վեճ ու կռիվ ստեղծելե հետո։ Օրմանյանի վաղեմի կոշմարը Երուսաղեմի ելևմուտքը ձեռք կառներ, մինչ Օրմանյան կկարծեր, թե իրերը սկսած էին իրենց բնական հունը մտնել Ս. Հակոբի մեջ։ Իր դեղծումներուն համար դատապարտված մը տեր ու տիրական դարձած էր կրկին վանքին մեջ Օրմանյանի աչքին տակ։ «Խապայան հոգվով սրտով Մաքսուտյանի կապված, և ոտքով ձեռքով անկե կաշկանդված, ո՛չ ձեռնարկեց և ո՛չ մտաբերեց արդիլել կամ մտադրություն դարձնել հաշիվ պահանջելու, և հաշիվ քննելու պայմանն ալ մոռցավ, թեպետ յուրովի Տնօրեն ժողով մըն ալ անվանեց անվանական կերպով։ Մաքսուտյանի բարեկամներեն դիտողություն չէր սպասվեր, իսկ նախկին հաշվեպահանջներն ալ, ժամանակին դժնեության և նոր կազմակերպության հարվածին ներքև, խոհեմություն սեպեցին լռել ու չխոսիլ, քանի որ հակառակ ուժ մը չկար, ուսկից պաշտպանություն հուսացվեր. իմ ալ ուղղությունս ու հորդորներս նույն եղան, անպտուղ ձեռնարկներեն զգուշանալ և թողուլ, որ ժամանակը, եթե հասնի, ինքն կարգադրե անկարգ եղելությունները»[174]։

Եթե իր մեկուսացման դժբախտ օրերուն Օրմանյան հնարավորություն ունեցավ գրչի աշխատանքով պարապելու և լրացուց երկու ընտիր երկեր՝ «Համապատում»-ն ու «Հայոց Եկեղեցի»-ն, և երկու երրորդ մասով ավարտեց իր ստվարագույն գործը՝ «Ազգապատում»-ը, Երուսաղեմի մեջ իրեն պարտադրված դադարը ան օգտագործեց այս վերջին աշխատանքը լրման հասցնելու համար։ Շատ ալ անիրավ չէ երբոր ամեն չարիքե բարիք մը կսպասե ժողովրդական իմաստությունը։ Օրմանյան Երուսաղեմի մեջ էր որ «Ազգապատում»-ը հասցուց մինչև 1909, և ստիպվեցավ հոդ ալ կանգ առնել, հարկադրված ըլլալով Երուսաղեմեն մեկնիլ։

Օրմանյանի վերջին հանգրվանը Դամասկոսն եղավ։ Երբ դաշնակից զորքերը Երուսաղեմի սկսած էին մոտենալ, հենկե Դամասկոս փոխադրած էին Սահակ կաթողիկոսը իր սինոդին քանի մը անդամներուն հետ, ու բարեհաճեր էին միասին բերել և

[173] «Հոհոհ և իսարբ.», էջ 339։

[174] Անդ, էջ 347։

Օրմանյանը։ Ան Դամասկոս կհասներ 1917 նոյեմբեր 16/29-ին։ Ջարդերը պահ մը գադրեր էին, բայց դիակները կմնային դեռ փռված հայոց անցած ճամբաներուն վրա։ Վերապրողները նույնքան դժբախտ էին, որքան սպանդին զոհ զացողները։ Մահը կրսպառնար և անոնց։

Թշվառությունը փռված էր Դամասկոսի փողոցներուն մեջ, երբ հայ հոգևոր պետերը հասան։ Խուց մըն ալ Օրմանյանին շնորհեցին։ Գրիչ կաղամար բավական եղան, որ ան դարձյալ սեղանին վրա հակի, շարադրելու համար ինչ որ մոտալուտ մահը իրեն տուն կուտար. «Խոհք և խոսքա»-ը, զոր լրացուց Դամասկոսի մեջ, արդարև իր «հուսկ բանքա»-ն եղավ։

Օրմանյան երբ իր «Խոհք և խոսքա»-ը կփակեր Դամասկոսի մեջ, իր հոգեվարքը կապրեր Երուսաղեմի դժբախտ խնդիրը, որուն լուծման համար տքներ ու պայքարեր էր երկու տասնյակ տարի, այնքան թշնամություններ ստեղծելով իրեն դեմ։ Քիչ հետո, գինադադարին հետ, կազատեր Երուսաղեմը իր վեճերեն ու իր մեղքերեն։ Պայքարներուն գլխավոր դերակատարները տակավ կնոսրանային, մյուսներուն մեջ կիրքը կխաղաղեր ու Ս. Հակոբի վանքեն ներս բարի շունչ մը կմտներ 1921-ին Դուրյան Եղիշե պատրիարքին հետ։

17. ՕՐՄԱՆՅԱՆ ԵՎ ՀԱՅ ԱՊԱԳԱՆ

Մեկը, որ իր բովանդակ կյանքը անցուցած էր հայ ժողովուրդի հուզումներուն հետ, մաս առնելով անոր հույսերուն և հուսախաբությանց, անոր վերելքի ճիգին և կսկիծներուն, չէր կրնար չմտահոգվիլ անոր ապագայով ալ, այնպիսի պահու մը, երբ հայ ժողովուրդը զոհ տված էր իր ամբողջ կեսը, իսկ ջարդերեն վերապրողները կգալարվեին հոգերու և անստուգության մեջ, երբ ավերակ էր Հայ Հայրենիքը, ու հայ ժողովուրդին բեկորները կտվալտեին հեռավոր անապատներուն մեջ։

Երբ 1918 մայիս 4/17-ին՝ իր «Խոհք և խոսքա»-ը կավարտեր Դամասկոսի մեջ, հայ ժողովուրդը կապրեր իր հուսահատության ամենեն դժնդակ պահը, ու մշուշի մեջ էր անոր ապագան։ Այդպիսի պահու մը Օրմանյանի մտածումները չէին կրնար թաթավուն չըլլալ հոգեկան խոր դառնությամբ։

Այն զարհուրելի պատկերը, զոր հայ ժողովուրդի բեկորները կներկայացնեին «Խոհք և խոսքա»-ը գրի առած օրերուն, տեսակ մը հոռետեսություն ներշնչած են անոր։ Տեղյակ սակայն հայ ժողովուրդի անցյալին, երբ ան հաճախ ճգնաժամերե և մահացու տագնապներե անցավ այսպես և այնուամենայնիվ հաջողեցավ կրկին դուրս ցատկել ան դագաղեն, շնորհիվ իր հոգեկան կորովին ու ապրելու տևական կամքին, Օրմանյան կփորձե հույսի տարտամ կայծ մը պահել իր ներսը։

Ինչ որ դժվար կթվի Օրմանյանին, ելք մը գտնել է այն մառախուղին մեջեն, որով շրջապատված է։ Այդ պահուն դեռ հայ ժողովուրդը տեղյակ չէ զարհուրանքին, որուն զոհն եղավ, և ուժերուն, որոնք դեռ կմնան իրեն վաղվան տոկալու համար։ Անծանոթ են իրեն նույնպես պայմանները, որ այդ պահուն կան Թուրքիո սահմաններեն դուրս, և հնարավորությունները, որոնց կրնա հասալ ոտքի կանգնելու համար կրկին։

Օրմանյան այդ մոայլ պահն է, որ կապրի ինքն ալ, երբ կփորձե մտածել հայ ժողովուրդի ապագային մասին։ Ոչ լրիվ տեղյակ է հայ ժողովուրդի հուսկ ուժերուն, որոնք ճողոպրեցան մեծ սպանդեն, և ոչ դուրսի պայմաններուն, որոնք կրնան նպաստել, կյանք տալու համար մահամերձի մը։

Եվ սակայն կփորձե մշուշին մեջեն ճամբա մը գտնել, հայ ժողովուրդի ապագային մասին գոնե ենթադրություններ ընելու, քանի իր ուժերը կներեն իրեն գրիչ բռնելու։

«Ներկայն ոգեորող ապադայն է, և եթե հայուն զգացումն ալ փնտռենք, իր այսչափ տառապանքներուն մեջ, ապագային ակնկալությունը պիտի գտնենք իբրև զինքը ողևորող կենսական զորություն։ Ներկա տառապանքը կսիրե նկատել իբրև երկանց ցավեր, որոնց վերջը խնդություն պիտի հաջորդե, և պիտի ուրախանա թե՝ ծնաւ մարդ յաշխարհ, հայ աշխարհը լույս տեսավ։ Այս տեսակետն ալ ուրեմն զննենք, ոչ թե լոկ զգացմանց և ըղձից շրջանակին մեջ փակվելով, այլ քաղաքագիտական պարունակեն և դիվանագիտական եղանակեն ալ քննելով, որչափ մեր միտքը կզորե, անցյալը կթելադրե և ներկայն կտրամադրե»[175]։

Դժվար էր անշուշտ, Օրմանյանի համար, որևէ կարծիք բանաձևել հայ ժողովուրդի ապագային մասին ճիշտ այդ օրերուն, ինչպես ինքն կխոստովանի, ըսելով, որ «ասա և այժմ ոչ մերձավոր անցյալին համար ճշտված և վավերացված տեղեկություններ ունիմ և ոչ մոտակա ապագայի համար

[175] «Խոհք և խոսքա», էջ 472։

վստահելի ու ապահով ծանոթություններ ունիմ»[176]։

Եվ սակայն ան ստիպված կզգա ինքդինք իր մտածումները թուղթին հանձնելու, «ոչ իբրև ստուգություն և ոչ իսկ իբրև մեծ հավանականություն, այլ լոկ իբրև հիշատակություն մը»։ Այնուամենայնիվ շահեկանութենե զուրկ չեն այդ պարզ նշմարներն ալ, իբրև վերջին մտածումները մարդու մը, որ այնքան փոթորիկներե անցավ և արդեն իր վերջին օրերը կապրի։

Թուրքերու հետ համակեցության մը գաղափարը այդ օրերուն ալ կհաճախե իր մտածումներուն։ Ու կտեսնես, որ խոր դառնություն կա իր հոգիին մեջ, երբ կմտածե երկու ժողովուրդներու վազվան կապերուն։ Բացված վիհը շատ խոր էր, որպեսզի զայն կարելի ըլլար լեցնել այնքան դյուրին։

«Կարծողներ կան,— կըսե Օրմանյան,— որ հայու ապագա բարօրության մեկ հավանական գործիքը օսմանցին կամ տաճիկը կրնա ըլլալ, և թե հայուն առջև միակ բաց ճամբան տաճիկին փարիլ ու տաճիկեն հուսալն է։ Արդ, եթե տաճիկը իր այսօրվան քաղաքականությամբ պիտի մնա, այդ ենթադրության հավանականությունը. կքիչնա. այժմյան քաղաքականությունը Թուրքիա ըսված տերությունը ամբողջապես թրքացնելն է. հայն ու քրիստոնյան բնաջինջ ընել կամ աննշանակ գոյության վերածել, որ խոսքի նյութ իսկ չկարենա ըլլալ»[177]։

Հակառակ Թուրքերը չդգոնելու իր ավանդական սկզբունքին ու զանոնք սիրաշահելու իր վաղեմի քաղաքականության, Օրմանյան ընդգումի ահավոր պահեր ունեցած է հայաջինջ սարսափներու օրերուն գազանային այն մեթոդներուն առջև, որոնցմով «Երիտասարդ Թուրք»-երը խողխողեցին հայ ժողովուրդը։ Ան չի կրնար միևնույն ժամանակ իր սրտմտությունը զսպել այն կեցվածքին առջև, զոր խումբ մը հայեր այդ օրերուն ունեցան, զօրավիգ դառնալով հայ դահիճներուն կամ զանոնք արդարացնելու փորձեր ունենալով։ Բացասական է անշուշտ իր վերաբերումը դեպի «Տաճար» թերթը, զոր հրատարակողներուն մեջ հոգևորականներ ալ կային, ավա՜ղ։

«Հայուն համար տաճկական ձեռնտվության գաղափարը տարածելու հատուկ բերան եղավ Տաճար երբեմնի կրոնաթերթը, որուն կառավարությունը հատուկ խմբագրությունն ալ կազմից, ծախքն ալ հոգաց, ուղին ալ պատրաստեց, սակայն այն այնչափ հառաջ տարավ յուր պաշտպանած կետը, որ փոխանակ հայը հրապուրելու և գգվելու, անոր ավելի սիրելի և ավելի սրտին մոտ կետերը սկսավ անարգել, մինչև իսկ անոր առաքելական նվիրապետությունը և անոր կրոնքին հիմնակետը խախտելու ձեռնարկեց, այնպես որ եթե այս պիտի ըլլա տաճկական ձեռնտվությունը, անկե խորշեցնելու քան թե հրապուրելու ծառայած պիտի ըլլա անոր փաստաբանը»[178]։

Օրմանյան վերապահ է նաև դեպի Եվրոպան։ Փորձառությունը, զոր անցյալ տասնամյակները տվին հայ վարիչներուն, սկեպտիկ ստիպված է ընել զանոնք դեպի բարիքը, որ երբևիցե Եվրոպային կրնար գալ հայ ժողովուրդին։ Օրմանյան ես սկեպտիկ է բարիքին մասին, զոր արևմտյան տերությունները կրնային բերել հայ ժողովուրդին. երբ անոր դատը վերստին գար իրենց սեղանին վրա։

«Մինչև որ հայտնապես չցուցվի կամ չտեսնվի, որ եվրոպական տերություններ Հայաստան մը կազմելու կամ Հայաստան մը բարվոքելու մեջ իրենց օգուտ մը ունին,— կըսե Օրմանյան,— ո՛չ խոսքերուն հնար է հավատալ, և ո՛չ խոստումներուն վստահիլ։ Ահա իմ փորձառական հավատքի առաջին կետը»[179]։

Օրմանյան ինքն ալ կզգա, որ չափազանց մոայլ դարձան իր մտածումները հայ ժողովուրդի ապագային մասին, և կրրնան հուսահատության մատնել և զանոնք, որոնք օր մը պիտի կարդան իր այս խորհրդածությունները. «Իմ հոգվածս կատարյալ հոռետեսություն մը եղավ, և ամեն ենթադրությունները դժվարության ենթարկելով, հայուն ապագային ճամբա մը չթողած եղա. սակայն ես եղելությունները հառաջ բերի, անցյալեն ապագայն չափել թելադրեցի, և փորձառությամբ գործնականը լուսաբանել ջանացի։ Իմ սիրտս ու միտքս ալ կրմրոստանա հուսաբեկ գաղափարներու դեմ, որ կյանքերը կթուլցնե և ջիղերը կրնգարմացնե»[180]։

Եվ ահա իր մտածումները կպլլվին հույսի շողի մը. «Մյուս կողմեն գիտեմ, որ աշխարհի մեջ անհնար բան չկա, ուստի անհավատալի չէ, որ հանկարծական մտայնության մը և սիրտի բուռն շարժումի ներքև և համակրության արտակարգ ցոլացումի զորությամբ այնպիսի լուծում մը տրվի՝ որ առաջին տեսությամբ դժվարին կամ անհնարին պիտի երևար։ Այսպիսի մի վերջավորության համար համաձայնական միու-

176 «Խոհք և խոսք», էջ 465։

177 Անդ. էջ 477։

178 Անդ։

179 Անդ. էջ 475։

180 Անդ. էջ 477։

թյան հաղթանակը և անոր հակատակկական միտքը իրրև իրենց դյուրին լուծում կարենան գտնել հայկական գավառներու ինքնորենությամբ անջատմամբը, և այս ձևն է, որ կհեղհեղվի այսօր հայասերներու բերանը, և հայուն համակիր տերությանց ծրագրին մեջ։

Պատերազմներուն վերջավորությունը, հաշտության սեղանին շուրջը պատգամավորներուն համախմբությունը մոտ օրերու մեջ հավանական չերևար, բայց մոտ կամ հեռու, օր մը չէ օր մը իրականություն պիտի ըլլա. հույսով և ակնկալությամբ սպասենք այն օրվան. զի ո՛վ որ կապրի, նկը կտեսնա (Qui vivra verra)»[1]։

Երբ 1918 մայիսին Օրմանյան կդառնար Պոլիս, նոր կլիմային հետ տակավ կփոխվեին իր հոգեկան տրամադրությունները նաև։ Գավառներու մեջ հայ խլյակներու և տառապանքի միայն հանդիպեր էր։ Հիմա հոծ հայություն մը կգտներ մայրաքաղաքին մեջ, որ կրնար իր օրապահիկը շահիլ։ Պոլիսն ալ դառն օրեր էր տեսեր սուլթան չորս տարվան մեջ. իր ծոցեն խլեր ու տարեր կոտորեր էին մտավորականությունը, և ավելի քան երեսուն հազար հայեր աքսոր էին ղրկեր. ու հիմա դարձյալ մղձավանջը չէր փարատած իր ներսեն։ Եվ այնուամենայնիվ հայության դեռ հոծ թիվ մը կար հոն, ու մեծ բան էր այդ արդեն այնպիսի պահու մը, երբ Թուրքիո հայությենեն բեկորներ միայն մնացեր էին։

Եվ ասկե զատ հայտնի էր, որ պատերազմը իր վախճանին կմոտենար տակավ. արևելյան ճակատը կսկսեր արդեն ճաքճատիլ, Գերմանիո զինակիցները իրենց դառնությունը արդեն կզգացնեին, ու բոլոր ասոնց շշուկները կսպրդեին նաև Պոլիս, հույսի ալիք մը պտտցնելով գաղտուկ հոգիներե ներս։ Եվ ամեն օրվան հետ բարի նոր լուր մը ման կուգար տուներ տուն, ու չորս տարին ի վեր հոգի ու տվայտանքի մեջ գալարվող հայ հարկերեն ներս դարձյալ կհյուսվեր երազներու ոստայնը։

Այս միջոցներեն չէր կրնար չվարակվիլ Օրմանյան ալ։ Չորս տարի ամբողջ սուգ ու կսկիծ տեսեր էր, և ապրեր էր չարդերուն մոտիկ։ Հիմա արդեն լավատեսություն կտեսներ շուրջը և հույսերով կլեցվեր ինքն ալ։

Դեռ սեղմ էին կապերը Պոլսո մեջ առջի օրերուն։ Ստիպված էր տակավին զգույշ ըլլալ, որովհետև մարդիկ դեռ կվախնային իրարու բացվիլ։ Իր միակ մտերիմը բժիշկ Վահրամ Թորգոմյանն էր, հին օրերու իր լավագույն բարեկամներեն մին, և մեկը այն ազնիվ և անձնվեր հոգիներեն, որոնք երբեմն հայտնված ըլլան մոայլ օրերու մեջ։

Օրմանյան հետաքրքրվեր էր ի միջի այլոց սպանդեն ճողոպրած մտավորականներով։ Թորգոմյան տատամսեր էր ի սկզբան անուններ տալ։ Ան դիտեր իմ մասին, և պահապան հրեշտակի մը պես այցի կուգար ինձ հաճախ թաքստոցիս մեջ։ Երբ հայտնեց ինձ Օրմանյանի հետաքրքրության մասին, ըսի անոր, թե կրնա իմ անունս ալ տալ անվարան։ Եվ անկե հետո Օրմանյանի ողջույնները կստանայի թաքստոցիս մեջ։

Եվ օր մըն ալ Թորգոմյան եկավ հանդիսավոր ձևով մը։ Օրմանյան ուզեր էր զանազան մարդոց կարծիքն իմանալ իր մեկ տարօրինակ գաղափարին մասին։

«Դիպվածը Հայաստան մը ստեղծեց,— ըսեր էր Օրմանյան.—բայց այդ Հայաստանը չապրիր. շատ փոքր է նախ, ու հետո պաշտպան մը չունի. լավ չըլլա՞ր Թուրքերուն առաջարկենք զայն մեծցնել իրենց հողերով, ու բոլորին վրա Թուրք իշխան մը դնել թագավոր...»։

Եվ իր գաղափարին անհնթեթությունը ինքն ալ զգալով, Օրմանյան ավելցուցեր էր.

«Սեպե՛ Թե զառամած մարդու մը մեկ ցնորքն է աս բանը... Ու հաշվե, թե դայս բնավ ալ չըսի...»։

Անշուշտ, որ զառամած մարդու մը մեկ ցնորքն էր աս, և անոր վրա ծիծաղիլ միայն կարելի էր։ Բայց Թորգոմյան, որ իր խորքին մեջ շատ միամիտ մարդ էր իր գիտական պաշարին հակառակ, ինչպես գիտեն բոլոր գինք ճանչցողները, լուրջի առավ Օրմանյանի կատակը։

Հաջորդ օրն իսկ իշխան Մեջիդ էֆենդիի կերթա, որ գահաժառանգ իշխան էր այդ պահուն և որուն հետ մտերմական կապեր ուներ ինքը իրրև անոր անձնական բժիշկը երկար տարիներե ի վեր, և անոր կհայտնե Օրմանյանի գյուտը իրրև իր իսկ կողմե առաջարկված։

Մեջիդ էֆենդի, որ, ըսենք ի միջի այլոց, շփում ուներ հայ դեմքերու հետ, և ինքն ալ արվեստագետ մարդ, ջերմ հիացող էր Կոմիտասին և Թերլեմեզյանին ու հայ հանդիսությանց հրբեմն ներկա իսկ կըլլար, պահ մը շատ լուրջ ու խոժոռ մտիկ կընե այս անսպասելի առաջարկը, հետո, քիչ մը ավելի մեղմացած, կհարցնե.

— Հայերը համաձայն կըլլա՞ն ադոր...։

— Մեծ երախտագիտությամբ,— կպատասխանե Թորգոմյան,— մանավանդ երբ դուք, որ վաղը Սուլթան պիտի ըլլաք, հայոց թագավոր ընեք ձեր մեկ զավակը...։

Պահ մը նորեն կկնճռոտի Մեջիդ էֆենդիի դեմքը, և սակայն կպայծառանա շու-

[1] տեսեք և խոսքս, էջ 478։

տով, և այս անգամ, արդեն խանդավառված, ձայն կուտա ներսի սենյակը իր տղուն.

— Ֆարո՛ւք, Ֆարո՛ւք, կել, սենի էրմենիլերե փաղիշահ յափաճայըզ... («Ֆարո՛ւք, Ֆարո՛ւք, եկուր, քեզ հայոց թագավոր պիտի ընենք»)։

Այսպես պատմեց ինձի Թորգոմյան, երբոր իշխանին Սկյուտարի պալատեն Բերա դարձին, եկավ ուղղակի ինձ ալ «ավետիս» տալու...։

Շատ մեծ եղավ զարմանքս, երբոր տարիներ հետո իր հիշատակները գրի առած ատեն բժիշկ Թորգոմյան քիչ մը տարբեր կպատմե այս տարօրինակ դիպքը, ցույց տալով, որ գաղափարը իրմե իսկ բխած է և Օրմանյանը դայն իրմե է որ որդեգրած է։

Թորգոմյան իր հուշերուն մեջ կպատմե այնուամենայնիվ, թե առաջարկը դահաժառանգ իշխանին ներկայացուցած է իբրև Օրմանյանի կողմե թելադրված. երբ 1918 սեպտեմբեր 13-ին ունկնդրության ընդունված է իշխանին։

«Խոսքս ավարտեցի թե ոչ, իշխանը, հանկարծ, նստած տեղեն խենդի պես դատկելով, առաջացավ դեպի ինձ. առաջին վայրկյանին այնպես կարծեցի, թե առաջարկես նեղացած ըլլալով, դիս դուրս պիտի վաներ, մինչդեռ ձեռքերը ուսերուս վրա դնելով, «Այս ի՞նչ սքանչելի գաղափար է»,— ըսավ»։

Հետո, երբ Թորգոմյան հրաժեշտ կառներ, իշխանը ըսած է անոր.

«Բարևներս տարեք Օրմանյան էֆենդիին և հաղորդեցեք իրեն, թե Մեջիդ էֆենդին այս առաջարկին ուժ պիտի տա ու աշխատի անոր հաջողությանը»։

Ցնորքները ևս վարդերու պես են, կապրին առտու մը միայն...։

Զինադադարին արդեն բոլորովին տարբեր էր Օրմանյան իր տրամադրությանց մեջ։ Ան արդեն սկսած էր հավատալ լուսավոր ապագայի մը հայ ժողովուրդին համար։ Ափսոս որ փակած էր արդեն «Խոհ և խոսք»-ը Դամասկոսի մեջ, և վերստին գրիչ ձեռք չառավ Պոլիս հասնելի հետո. շատ շահեկան պիտի ըլլար դինք կարդալ նոր օրերու մասին ալ։ Վերջին օրերու իր մտորումները շուրջի մարդիկը միայն գիտցան։

18. ԵՐԲ ՕՐՄԱՆՅԱՆ ԿՔԱԺՆՎԻ ՄԵՋՄԻ

Եվ ահա զինադադարը։ Իր ստեղծած ցնծության հետ, ան բերավ նաև սուգ ու հոգեր։ Պատերազմի ժխորին և անոր հրահրած սարսափներուն մեջ, մենք չէինք կրցած չափել աղետը, որ պայթեր էր մեր գլխուն։ Պետք էր զար զինադադարը, պահ մը ժխորը դադրեր, որպեսզի աղետն զգային լրիվ, ու մեր զոհերը հաշվեինք։ Թիվ չունեին զոհերը. մենք ստիպված էինք ողջերը համրել, ջարդեն ու հարակից աղետներեն ճողոպրածները։

Եվ ահա դավառներեն Պոլիս սկսան լեցվիլ որբերն ու տարագիրները։ Շշմած էինք բոլորս, որովհետև ամեն օր կլայնար հոգը նոր կարավանի մը հետ։ Ջանացան հոսանքի մարդիկ կազմեցինք իսկույն խառն մարմին մը, որ «Հայկական լիգա» անունը կրեց, զինադադարին հետ ստեղծված այլազան հոգերուն համար, բայց անհրաժեշտ էր ուրույն կազմակերպություն մը որբերուն ու տարագիրներուն համար ալ։

Այդ օրերուն է, որ պետք զգացվեցավ Օրմանյանին ևս խորհուրդին։

Բժիշկ Թորգոմյանի հետ պաշտոն ունեինք Հայկական լիգայի կողմե հրավիրել դինքն ալ մեր մեջ, ու մասնավորաբար խնդրել, որ իր աշակցությունը բերե Ազգային խնամատարության, զոր կծրագրեինք կազմել, անոր հանձնելու համար հոգը տարագիրներուն. որոնք կհասնեին դավառներեն ստվար խումբերով և հետզհետե երևան եկող որբերուն, որոնց թիվը կաճեր օրե օր։

Թորգոմյան կպատմե իր հուշերուն մեջ. «1918 նոյեմբեր 14-ի օրը գացի իր մոտ, հետս առնելով Հ. Ճ. Սիրունին և ուրախությամբ տեսանք, որ սրբազանը չմերժեց ներկայացված առաջարկը։ Օրմանյան անմիջապես լծվեցավ գործին. անցավ նախ Գաղրդյուղ 16 նոյեմբեր 1918, շաբաթ երեկո. հոն դիշերեց և հետևյալ առավոտ, կիրակի, Ս. Թագավոր եկեղեցվո բեմեն կարտասաներ խիստ սրտառուչ քարոզ մը, կոչ կրներ ժողովուրդին փութալ նպաստից հանձնաժողովին հասցնել օգնության առատ զումարներ, որպեսզի մեր ծնողազուրկ, տառապանքի մեջ տվայտող որբ ու որբուհիները փրկեինք օտարոտի ճիրաններեն»։

Իր այս քարոզը Օրմանյանի կարապի երգը եղավ սակայն։ «Սրբազանը,—կշարունակե Թորգոմյան,— իր այս քարոզը կամ կոչը այնքան հուզումնալից կերպով ու հոծ արցունք թափելով խոսած է եղեր, որ եկեղեցվո ավարտումեն անմիջապես վերջը, սաստիկ սարսուռներ է զգացեր նվաղելով»։

Արդարև այն իրիկունն իսկ անկողին կիյնար Օրմանյան, և ա՛լ չէր վերականգներ։ Ան հոգին կավանդեր նոյեմբեր 6/19 գիշերը։

Օրմանյան իր աչքերը կփակեր պահու մը, երբ հայ ժողովուրդը մղձավանջ մը նոր կարթնար. սոսկալի և հյուծած. բյուր

վերքերու և հոգերու մեջ, հոգին վերստին բռնկած, սակայն հույսերով ու երազներով, մեկ կողմե սրբելով արցունքը և մյուս կողմեն նոր օրերու նրգը շրթունքին։

Երբ վերջին անգամ կայցելեինք իրեն բժիշկ Թորգոմյանի հետ, չէր ծածկեր իր երկյուղը փոթորիկներուն համար, որոնք դեռ իր ներսը կպահեր այդ ժողովուրդը, որպեսզի դիմագրավե ամեն փորձության։ Ան կհավատար հայ ժողովուրդի կենսունակության ու տեսելու կամքին։

Վերջին իր ուժերով կուզեր ինքն ալ բաժին առնել այդ ճիգերուն մեջ, որոնց պետք էր լծվիլ ամոքելու համար հայ ժողովուրդի մնացորդացը, եղբայրական ձեռք կարկառելու համար տարագիրներուն և որբերուն, որոնք ամեն օր կհասնեին գավառներեն։ Իր ուժերը սակայն դավաճանեցին իրեն ու չկրցավ այդ ճիգերուն մասնակցիլ։

Բայց ան իր աչքերը փակեց հուսալից դեպի իր ժողովուրդի ապագան, այդ ժողովուրդին հանդեպ իր պարտքը կատարած ըլլալու գոհունակությամբ։

Դեռ առիթը պիտի ունենանք նժարը դնել իր մտքի վաստակը, և ուրվագծել մարդը այնպես, ինչպես որ էր։ Բայց գերեզման դրած ատեն դայն, չենք կրնար բնորոշումը շրջանել իր կյանքին վերջին շրջանին ևս, բացառիկ դեպքերով լեցուն տասնամյակ, որ ոչ նվազ կարևոր շրջան մըն է անոր կյանքին ու գործունեության մեջ։

Շրջանը կհատկանշե նախ համբերատար ոգին մարդու մը, որ այնքան ամոթալի ցույցերու և հալածանքներու, մեղադրանքներու և ամբաստանությանց, դատ ու դատաստանի պահուն անգամ չի լքեր իր հոգեկան կորովը, ջիղերը կամլացնե և հույսով կսպասե արդարության ժամուն։

Ան խորհրդանշանն է նաև իր կրած հալածանքներուն մեջ իսկ ուժեղ մնացած մարդու մը, որ դառնանալու պատճառներ ունի, բայց որ քեն չի պահեր Ազգին դեմ, այլ իր սենյակը կառանձնանա դուրսի աղմուկին դեմ փեղկերը փակած ու գսպած մարգկային բոլոր հուզումներն իր ներսը, կփորձե տքնության մեջ մոռնալ բոլոր դառնությունները։

Ան կխորհրդանշե վերջապես ճիգը մարդու մը, որ կմաքառի ժամանակին դեմ, կհեգնե մարդոց հայհոյուշը, կփորձե փաստերու հեղեղին մեջ խեղդել բոլոր նախատինքները, և այս բոլորին հետ մեկտեղ աչքերուն ու մտքին լույսը քամել հայ մատենագրության ընծա բերելու համար այնքան թանկագին երկեր, կարկամեցնելով այսպես իր թշնամիները և հակառակորդները դարձնելով ավելի զուսպ, ու միևնույն ատեն մոռցնել տալով անոր վրիպումները և մարդկային բիծերը։

Անշշմար անցավ Օրմանյանի մահը։ Ան աչքերը կփակեր պահու մը, երբ կրկին փոթորիկի մեջ էր հայ կյանքը։ Զինադադարը գինովության օրեր էր բերեր հայ ժողովուրդին, ինչպես բերած էր Օսմանյան «Հուրրիեթ»-ը տասը տարի առաջ։ Ազատության խաբուսիկ լույսը զինքը հանկարծ կուրցուցեր էր այն ատեն, մեկ պահի մեջ մոռցնելով տառապանքներն ու հալածանքները, որոնց նշավակ էր եղեր Համիդի զարհուրելի լուծին տակ, ու անձնատուր ընելով զայն հույսերու և ցնորքներու։ Այդ պահուն ոչ ոքի մտքեն չէին անցեր հուսախաբությունները, որոնք հեղեղի նման պիտի սկսեին շուտով գալ, և աղետները, որոնց մեջ իր ցնորքները պիտի արթննային։

Տասը տարի հետո կրկին փոթորկած էր հայ ժողովուրդը։ Նոր հույսեր ու նոր երազներ անգամ մը ևս արբեցուցած էին զայն, մեկ վայրկյանի մեջ մոռցնել տալով դարձյալ չորս տարիներու ահավոր սարսափները, և միլիոն մը զոհերու սուգը ևս։ Ցնորքները, զորս ան կհյուսեր մտքին մեջ, կսփոփեին կարծես վերքերը, ու թեթև կուգար բեռը, զոր ժառանգեր էր աղետներեն։ Լուրջի կառներ ժպիտը, որով Եվրոպան կնայեր իրեն ու կհավատար անոր ծափերուն, ինչպես անկեղծ էր կարծեր «Երիտասարդ Թուրք»-երու համբույրը տասը տարիներ առաջ։ Ցափազանց կուրցած էր նորեն, որպեսզի զգար, թե այդ ժպիտը շուտով կրնար հեգնության փոխվիլ, ինչպես մտքեն չէր կրնար անցնիլ այն ատեն, թե թույն կար «Երիտասարդ Թուրք» համբույրին մեջ։

Այդպիսի պահու մը Օրմանյան ստիպված էր մոռցվիլ։ Կանուխ էր դեռ, որպեսզի մարդիկ պահ մը ետև դառնային դիտելու համար ճամբան, զոր կտրեր էին։ Ծափերուն և կեցցեներուն պահն էր տակավին, և ոչ մեկուն հոգը անշուշտ չեղավ, երբ հողը կդնեին ծերունի հոգևորական մը, Ի՞նչ փույթ, որ տասներկու տարի պատրիարքություն էր ըրեր ան, և ամբողջ կյանք մը տքներ։ Որո՞ւն մտքեն կրնար անցնիլ այդ պահուն, թե մտքի վաստակ մը կթողու ան իր ետին, երբ այդ վաստակը ծանոթ իսկ չէր լրիվ։ Պետք եղավ, որ գինովությունը անցնի, անգամ մը ևս ցնորքները փարատին, խաղաղին կերքերն ու հուզումները, որպեսզի մեր ակնարկը ետև դառնա ու զննենք մեր կտրած ճամբան։ Այն ատեն է, որ մեր միտքը եկավ և Օրմանյանը, ուզեցինք նժարը դնել անոր ալ կյանքն ու գործը, և փորձեցինք ճանչնալ նոսն մտքի և գրչի մարդը անոր մեջ։

(Շարունակելի)

Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՎԻՄԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հովհաննու Կարապետի անվան վանքը գտնվում է այժմյան Վեդու շրջանում, Ջնջուլու գյուղից մեկ կիլոմետրաչափ դեպի հյուսիս-արևմուտք։ Վանքը տեղադրված է մի հարթակի վրա, որը հյուսիսային կողմից եզերվում է բարձրավանդակով, իսկ մյուս կողմերից՝ լեռնային հեղեղատի փոքրիկ ձորակով։

Վեդու շրջանը կազմում է պատմական Հայաստանի Այրարատյան նահանգի նույնանուն գավառը։ Ավելի վաղ այդ գավառը կոչվել է Ուրծ և Արած, ընդ որում Ուրծն ընդգրկել է գավառի լեռնային մասը, իսկ Արածը՝ դաշտային։

Պատմական աղբյուրները ոչ մի տեղեկություն չեն հաղորդում այդ հետաքրքրական մենաստանի մասին. այն աչքաթող են արել նաև ճանապարհորդներն ու տեղագիրները. միայն Հ. Ղևոնդ Ալիշանը սոսկ թուցիկ կերպով հիշատակում է նրա անունը՝[1] Հուշարձանների վրա փորագրված սակավաթիվ արձանագրություններն էլ, անգամ աղոտ կերպով, լույս չեն սփռում նրա անցյալ պատմության վրա։ Մի արձանագրության համաձայն (արձանագրություն Ա.) վանքը հիմնել են Օրբելյանները ԺԴ դարի սկզբներին, որպես իրենց տոհմի գերեզմանատեղի։ Այդ ժամանակ, ինչպես հայտնի է, Վեդի գավառը գտնվում էր Օրբելյանների իշխանության ներքո։ Մյուս արձանագրությունները սոսկ նվիրատվական են։ 1593 թվականը կրող մի այլ արձանագրությունից (արձանագրություն Ը) իմացվում է, որ այդ ժամանակ շեն է եղել մենաստանը։ 1725 թվականը կրող մի այլ արձանագրության (արձանագրություն ԺԱ) կարճ բովանդակությունից հասկացվում է, որ այդ ժամանակ վանքը եղել է ավերակ և լքված վիճակում։ Անկասկած է, որ այդ մենաստանը նույնպես, ինչպես նրան մոտիկ գտնվող մյուս վանքերը, ավերվեցին 1679 թվականի մեծ երկրաշարժի ժամանակ։

Սակայն, ինչպես երևում է, 1896 թվականին կառուցված վանքի միաբանության բնակելի շենքերը, 1897 թվականին՝ վանքի պարիսպը և 1898 թվականին՝ հացահատիկի հորերը, հավանական են դարձնում, որ վանքը ԺԹ դարին որոշ ժամանակով վերականգնված պետք է լինի։

Հովհաննու Կարապետի վանքը բաղկացած է մեկ եկեղեցուց, զանգակատնից, դամբանատնից, պարսպապատ է, պարսպից ներս պահպանվել են վանքի միաբանության բնակելի շենքերի մնացորդները և փոքրիկ գերեզմանոցը։

Եկեղեցին արձանագրությունների մեջ կոչվում է Սպիտակավոր Ս. Աստվածածին և, ինչպես ցույց է տալիս եկեղեցու ներսում, հարավային պատի վրա փորագրված արձանագրությունը (արձանագրություն Ա.), այն կառուցել է Օրբելյան Տարսայիճ իշխանի որդի Ջալալ իշխանի կին Գոնցան 1301 թվականին։

Եկեղեցին գմբեթավոր մի կառուցվածք է, որն ունի բիլ նրկարաձիգ ուղիղ քառանկյու-

[1] «Այրարատ, բնաշխարհ Հայաստանեայց», տեղագրեաց Հ. Ղևոնդ վարդապետ Մ. Ալիշան, Վենետիկ, 1890 թ., էջ 445։

նի հատակագիծ։ Հարավային և հյուսիսային պատերը ներսից՝ արևմտյան ծայրերին մոտիկ ունեն ելուստներ, որոնց կից, ինչպես և արևելյան աբսիդի եզրերից ձգվող կիսասյուները միանալով կամարներով, իրենց վրա են կրում գմբեթը՝ կլոր թմբուկով և սրածայր վեղարով։

Արևելյան ծայրում տեղադրված է կիսակլոր աբսիդը՝ բարձր, ներս ընկած բեմով. վերջինիս վրա կառուցված է պատարագամատույց քարե սեղան՝ կամարակապ բացվածքներ ունեցող ծածկապատով։ Բեմի հարավային և հյուսիսային կողմերում տեղադրված են երկհարկանի խորաններ. ստորին հարկի խորանների մուտքերը բացվում են դեպի արևմուտք՝ եկեղեցու մեջ, իսկ վերին հարկի խորանները՝ բեմի վրա, ուր բարձրանում են եռաստիճան քարե սանդուղքներով։ Ստորին հարկի խորանների արևելյան պատերի մեջ փորված են կիսակլոր փոքրիկ աբսիդներ. վերի հարկի խորաններն աբսիդներ չունեն։ Աբսիդի կողերի պատերի մեջ կան մեկական մեծ խորշեր, նույնաձև մեկական փոքր խորշեր էլ կան բոլոր խորանների հարավային պատերի մեջ։

Միակ մուտքը արևմտյան կողմից է՝ կիսակլոր ճակատակալ մեծ քարով և գծավոր զարդեր ունեցող շրջանակով։ Մուտքի ճակատակալ քարը պատած է բարձրաքանդակ, շատ գեղեցիկ ու նուրբ մշակված սրբապատկերներով, ուր, ծաղկեհյուս-մանրանկար ֆոնի վրա, պատկերված է Աստվածածինը բազմած բարձի վրա՝ Մանուկ Հիսուսը գրկին, իսկ կողքերին մի-մի հրեշտակ կանգնած և ձեռները տարածած դեպի Տիրամայրը։ Դրանից վերև պատկերված է Աղամը, շուրջը բազմապիսի կենդանիների գլուխներ. աջ կողմում մեծ տառերով գրված է ԱԴ։ Ըստ երևույթին դրա շարունակությունը ԱՄ ձևով պետք է լիներ ձախ կողմում, սակայն չի նկատվում։

ՀՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՔԸ

Ճակատակալ քարի վրա եղած արձանագրությունը (արձանագրություն ժ) հավաստում է, որ հիշյալ պատկերը քանդակել է Սարգիս վարդապետը։

Յուրաքանչյուր պատի կենտրոնական մասում բացվում է մեկական երկար ու նեղ լուսամուտ. դրանց համապատասխան մեկական լուսամուտներ էլ բացվում են գմբեթի թմբուկի մեջ և մեկական փոքր լուսամուտներ էլ յուրաքանչյուր խորանի արևելյան պատի մեջ։ Արևելյան և հարավային պատերից բացվող լուսամուտները կամարակապ դաղաթով են և ունեն գծավոր շրջա-

նակներ. մյուս բոլոր լուսամուտներն ուղղանկյուն են և առանց շրջանակի։ Գմբեթի թմբուկի լուսամուտների կողքերին մեծ տառերով փորագրված են հետևյալ փակագրերը. հյուսիսային կողմում ՏԻ ՅԵ, արևմտյան կողմում ՓՈ ՇՁ. հարավային կողմում ՉԱ ԳՀ. արևելյան կողմում ԿՈ (վերջին երկու տառը հողմահարված լինելու հետևանքով չի կարդացվում)։

Եկեղեցու ներսում ընկած է մի մեծ քար, որի մի կողքի վրա եղած բարձրաքանդակը պատկերում է թևատարած արծիվը՝ խոյը ճանկերում բռնած։ Այդ բարձրաքանդակ պատկերը հանդիսանում է Պռոշյանների կառուցման ստույգ ժամանակը և թե ովքեր են եղել նրա կառուցողները, պարզ չէ. հուշարձանի վրա փորագրված 1346 թվականը կրող նվիրատվական արձանագրությունը (արձանագրություն ԺԲ) հավաստում է, որ այն կառուցված պետք է լինի ԺԴ դարում, մինչև 1346 թվականը։

Դամբանատան հատակագիծը արտաքուստ ուղիղ քառանկյունի է, ներսից խաչաձև՝ ուղղանկյուն խաչթևերով։ Ծածկը թաղակապ է՝ գավիթների ծածկի նմանությամբ, առանց տանիքի կենտրոնում եղած լուսանցքի։ Միակ մուտքը հյուսիսային կողմից է՝ եկեղեցու մուտքի դիմաց, գոբշագույն բաղալտի

ՀՈՒՀԱՆՆԻՍ ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ԴԱՄԲԱՆԱՏՈՒՆԸ

տոհմանիշը։ Հետազոտությունները ցույց են տալիս, որ այդ հնագիտական հետաքրքիր բեկորը պետք է բերված լինի վանքից ոչ հեռու գտնվող Կարախաչ գյուղից, ուր պահպանվել են ընդարձակ եկեղեցու մնացորդներ և ուրիշ շատ հուշարձաններ, որոնց նյութը և մշակման ձևը խիստ նման են եկեղեցու ներսում եղած բեկորի նյութին, որպիսի հանգամանքը վկայում է մի խոշոր քաղաքական կենտրոնի երբեմնի գոյությունը այդ վայրում։

Դամբանատունը գտնվում է եկեղեցու արևմտյան կողմում, կիսավեր վիճակում, սլաքաձև գագաթ ունեցող ճակատակալ քարով։ Արևելյան պատի մեջ բացվում է մի երկար ու նեղ լուսամուտ և մի կլոր լուսանցք։ Նույնաձև մի երկար ու նեղ լուսամուտ էլ բացվում է հարավային պատի մեջ։ Տանիքի վրա հետագայում կառուցված է մատռանման մի փոքրիկ շենք։ Պատերի արտաքին անկյունները դլանաձև են։ Ամբողջ շենքը կառուցված է կաթնագեղնագույն հանքաքարի մաքուր տաշված քարերով՝ կրաշաղախով մածուցված։ Հյուսիսային պատի վրա նկատելի է ուժեղ ճեղք, որը, հավանաբար, հետևանք է 1679 թվականի երկրաշարժի։ Հա-

տակը ծածկված է փլատակներով, ուստի նրա ներսի բավանդակությունը պարզ չէ։

Զանգակատունը գտնվում է դամբանատան արևմտյան կողմում՝ նրան կից այնպես, որ վերջինիս արևմտյան պատը ընդհանուր է երկու շենքերի համար։ Թե ե՞րբ է կառուցվել զանգակատունը և ովքե՞ր են եղել նրա կառուցողները որոշ չէ, հավանաբար այն նույնպես պետք է կառուցված լինի ԺԴ դարում։

Զանգակատունը կենտրոնագմբեթ, երկհարկանի մի կառուցվածք է, շատ հետաքրքրքրական կառուցողական ձևերով։ Հատակագիծը արտաքուստ քառակուսի է, ներսից խաչաձև՝ ուղղանկյուն, կարճ խաչթևերով։ Երկու հարկերի ծածկն էլ թաղակապ է, վերին հարկի տանիքի կենտրոնում բացվում է մի կլոր մեծ անցք, որի վրա որպես ծածկույթ կառուցված է եղել սյունազարդ գմբեթ։ Վերջինիս սյուների բները գլանաձև են, ունեն ուղղանկյուն խարիսխներ ու խոյակներ, որոնց անկյունները զարդարված են ստալակտիտ քանդակներով (գմբեթն ամբողջովին քանդակված է, միայն սյուների խարիսխներն են պահպանվել՝ կլոր անցքի շուրջը)։

Ստորին հարկը մուտք չի ունեցել, այլ դամբանատան արևմտյան պատը քանդել և փոքրիկ մուտք են բացել դեպի զանգակատան ստորին հարկը։ Վերի հարկի մուտքը արևմտյան կողմից է, ուր բարձրանալիս են եղել փայտյա սանդուղքով։ Երկու երկար ու շատ նեղ լուսամուտներ բացվում են ստորին հարկի հարավային պատի մեջ. մի փոքրիկ, ուղղանկյուն լուսամուտ էլ բացվում է վերի հարկի արևմտյան պատի մեջ՝ մուտքի վերևում։ Զանգակատան շենքի կառուցումը հարմարեցված է այնպես, որ դամբանատան տանիքի վրա կառուցված մատռանման շենքը ծառայի զանգակատան վերին հարկի համար որպես արսիդ։

ՀՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՄՈՒՏՔԻ ՎԵՐԻՎԻ ԲԱՐՁՐԱՔԱՆԴԱԿՆԵՐԸ

Զանգակատան ամբողջ շենքը կառուցված է կաթնագեղնագույն հանքաքարի մաքուր տաշված քարերով՝ կրաշաղախով մածուցված. պատերը հարթ են (ինչպես և դամբանատան), առանց զարդարանքների. մուտքի ճակատակալ քարը և կողերի ամբողջական քարերը դորշ բազալտից են։ Սալահատակված է եղել. վերի հարկի տանիքը և գմբեթի վեղարը պատած է եղել սալաքարերով։ Շենքը կիսավեր վիճակում է, քանդված մասերը թափված են տեղում՝ փլատակների ձևով։

Պարիսպը ձգվում է հուշարձանների խմբի շուրջը՝ քառանկյունի ձևով, արևելքից դեպի

արևմուտք երկարությամբ։ Պատերը շարված են տեղական անմշակ լեռնաքարերով, ցեխով։ Գլխավոր մուտքը հարավային կողմից է, որի մոտ ընկած մի փոքրիկ քարի վրա փորագրված է. «շինեցի 1897 ամիս։ Հավանական է, որ դա եղած լինի մուտքի վերևում կամ կողքին և անկասկած վերաբերում է պարսպի կառուցմանը։

Միաբանության բնակելի շենքերը գտնվում են պարսպի ներսում, վանքի հուշարձանների խմբի արևմտյան կողմում։ Բոլոր շենքերն էլ շարված են նույն տեղական անմշակ լեռնաքարերով՝ ցեխով, եղել են փայտածածկ։ Կառուցված են 1896 թվականին, որի վերաբերյալ արձանագրությունը փորագրված է զանգակատան արևմտյան կողմում գտնվող սենյակի արևելյան պատի մեջ դրված մի փոքրիկ քարի վրա, հետևյալ ձևով «շինեցի 1896 ամիս։

Վանքն ունեցել է իր առանձին ջրմուղը։ Ջուրը կավե թրծած խողովակներով բերված է եղել արևմտյան կողմից, ուր պարսպից ներս, անմիջապես արևմտյան պատին կից պահպանվել է ջրամբարը՝ ներսից ծեփած կրաշաղախով։ Վերջինիս արևելյան պատի տակ դրված է քարից փորված ջրի մեծ ավազանը։ Պարսպից դուրս, գլխավոր մուտքի հարավային կողմում քիչ ներքև նկատվում են քարից փորված երկու մեծ ջրավազաններ՝ հավանաբար անասուններին ջրելու համար։ Պարսպի ներսում, վանքի հուշարձանների և միաբանության բնակելի շենքերի արանքում պահպանվել է հացահատիկի ամբարը՝ կարասաձև հորի նման, քարաշար, ներսից կրաշաղախով սվաղած։ Բերանի եզրին դրված մի քարի վրա փորագրված է. «շինեցաւ 1898 ամիս։

Հովհաննու Կարապետի վանքին մոտիկ գտնվող Զնջղու գյուղում և նրա շրջակայքում տարածվում են բազմաթիվ գերեզմանոցներ՝ մահարձաններով ու կոթողներով։ Առանձին՝ շքեղորեն քանդակազարդված խաչարձաններ. նկատելի են նաև սահմանանիշ քարեր։ Առանձնապես ընդարձակ է գյուղի հարավային կողմում գտնվող գերեզմանոցը, ուր կան բազմաթիվ մահարձան-խաչարձաններ, որոնք պատած են զանազան ձևերի նուրբ մշակված զարդաքանդակներով։ Հատկապես հետաքրքիր ու արժեքավոր են գերեզմանաքարերի վրա քանդակած կենցաղային պատկերները։ Այդ բոլորը վկայում են, որ Զնջղուն եղել է Հայաստանի հնագույն և նշանավոր բնակավայրերից մեկը. իսկ թե ի՞նչպես է նա կոչվել հնում, հայտնի չէ։

ՀՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ ԽԱՉՔԱՐ ԵՎ ԳԵՐԵԶՄԱՆԱՔԱՐ

ՎԻՄԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Մեջ ենք բերում վերծանված ձևով)

Ա. ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐՍՈՒՄ, ՀԱՐԱՎԱՅԻՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ԼՈՒՍԱՄՈՒՏԻՑ ՆԵՐՔԵՎ

1. Թվ: ՉԾ: Աստուծոյ ամենակալին կամաւ ես Գոնցա ամուսին ճգաւր իշխանի Ջալալին, որդոյ Տարսայինիս. դուստր Իվանէի, թոռին մեծին Զաքարէի
2. Հայոց սպարապետի, որոյ ամիր սպասալար Շահանշահի, յիմ հայրենի դարձուց զՄոշաղբիւրն գնեցի վասն երկար կենաց գլխոյ իմ Ջալալին,
3. եւ որդոց մերոց Տարսայինին, Շահանշահի և էլուկումին: Զեկեղեցիս շինեցի՝ անուամբ Սպիտակաւոր Աստուածածնին,
4. որ ի ձեռն ըստ հոգոյ որդոյ մեր Կիրակոս վարդապետին: Եւ եւոու հայրենիք իմ գերեզմանատանս զիմ շինած գեղն

5. գՔալասն :Ա: ձիրաճանք :Բ: այգի յՈւրծ և ի Վէդի :Բ: ջրաղաց գՇեղչիկեր
:Ռ: դեկան գնեցի զկէս
6. ճոդին էլ իմ եկեղեցոյս ճանդ տվի: Մոշաղբիւր յեա իմ մանուանն իմ վա-
նացս ճայրենիք լինի և առնեն
7. Մեզ պատարագ: գՄեուանդն: Մառգարդարին: Ջատիկն՝ անիւափան: Եւ զտաւն
Աստուածածնին Միանին: եթէ ոք ի մեր ծն-
8. ընդոց կամ յայլ ազգաց զտվեալ ճայրենիք եկեղեցոյս խափանէ կամ ճարկ
դնէ՝ յԱստուծոյ և :Զ: սուրբ ժողովոյն
9. նզոված, Ցուդաի և խաչահանուացն մասնակից: Եւ կատարիչքն աւրհնին ի
Տեառնէ, ամէն:
10. Տիրացու զրիչ յիշեցէք ի Քրիստոս Ցիսուս:

Բ. ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐՍՈՒՄ, ԱԲՍԻԴԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՊԱՏԻ ՎՐԱ

1. Անվամբ և յոյսով Սուրբ Աստուածածնիս, ողորմութեամբ իմ պարոնացն
Ջալալին և Գոնցաին ես Կիրակոս
2. վարդապետ Գետնեցի, անձամբ և ընչիւք աշխատեցա ի շինութիւն վանացս
և եկեղեցոյս որ Ճ. սպիտակի գն-
3. եցի զՍայրէն ճողն ի գետառէն մինչ ի ծայր :Բ: բլրին յիմ մեռոնաշնորհ
մատ լինի Գոնցաէն ճայր-
4. ենիք եկեղեցոյս: Սպասատրք սորա պարտին ինձ պատարագ զեկեղեցիս
զնոր կիրակէին և զգալուստ Սուրբ
5. Հոգոյն՝ անխափան: զՍարտիրոս և զՎարդիոս ընձա եկեղեցոյս յիշեցէք:
Կատարիչք աւրհնին ի Տեառնէ:

Գ. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ՆԱԽՈՐԴԻՑ ՆԵՐՔԵՎ, ՇԱՐՈՒՆԱԿԱԲԱՐ.

Թ. Հայոց ՉԳ ի տաւնի խաչին :Ա: պատարագ Ալան ափին :Ա: Թամբէ՝
վարդապետին մատն:

Դ. ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐՍՈՒՄ, ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀՈՐԱՆԻ ՄՈՒՏՔԻ ՎՈՐԵՎՈՒՄ.

1. Աստուած գթայ Ալանա.
2. ի տաւնի Սուրբ Ստեփանոսի
3. :Դ: պատարագ Վարդանա:
4. Կատարիչքն աւրհնին ի Տեառնէ:

Ե. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ՆԱԽՈՐԴԻ ԿՈՂՔԻՆ.

1. Ցայսմ խորանի պատարագ
2. յորս անուն հասարակաց
3. առնեն հանապազ:

Զ. ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐՍՈՒՄ. ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՊԱՏԻ ԵԼՈՒՍՅԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿՈՂԻ ՎՐԱ.

1. Ի տաւնի Հռիփսիմեանց
2. :Ա: Պատարագ Մնոնայ.
3. Գայիանեանց :Ա: պատարագ Խաբու-
4. նա. ի տաւնի Խաչիցն :Ա: Գրգ-
5. արին :Ա: Աբազին :Ա: Սիրուն-
6. կանն . . . . . :

Է. ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐՍՈՒՄ, ՀԱՐԱՎԱՅԻՆ ՊԱՏԻ ԵԼՈՒՍՅԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿՈՂԻ ՎՐԱ.

1. Ի տաւնի Սուրբ Գրիգորի
2. :Ա: պատարագ Բուտ
3. վարպետին՝ ժրաչան
4. աշխատողին:
5. Կատարիչքն աւրհնին Աստուծոյ:

Ը. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ՆԱԽՈՐԴԻ ՄՈՏ, ՉԵՌԱԳԻՐ ՏԱՌԵՐՈՎ.

1. Նա Սուրբ Կարապետիս ծառայ ենաւմս
2. տյոր դասի գրեցի Թվ. :Ռ:Խ:Բ:

Թ. ԵԿԵՂԵՑՈՒ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՊԱՏԻ ՎՐԱ. ԱՐՏԱՔՈՒՍՏ.

1. Վիրաւորեալ շատ մանր եկի փուն աշխարհն, .Կէ
2. ոչ մի տեղ չգտուա ի ճոգոյս դեղոյ ճարն. .Վ
3. թէ բիւր բժիշկ լինի (Կոյս) ինչ մոտ է ճնարն, .Տ
4. ճայցեմ Տեառն ի Մարէդ դու տուր ճոգոյս դեղ: .Յ

Տողերի վերջում եղած առանձին տառերը փակագիր են և հավանաբար նշանակեն «Գէորգ վարդապետ յիշեցէք»:

Ա. ԵԿԵՂԵՑՈՒ ՄՈՒՏՔԻ ՃԱԿԱՏԱԿԱԼ ՔԱՐԻ ՇՈՒՐՋԸ

Ես Սարգիս վարդապետս վասն յոյսոյ ճոգոյ իմոյ եկարեցի զգրատկերս:

ԺԱ. ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՊԱՏԻ ՎՐԱ. ԱՐՏԱՔՈՒՍՏ. ՄՈՒՏՔԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՂՄՈՒՄ.

Ես Կոստանդ գրեցի այս թվիս. ի թվ. ՌՃՀԴ:

ԺԲ. ԴԱՄԲԱՆԱՏԱՆ ՆԵՐՍՈՒՄ, ԱՐԵՎԵԼՅԱՆ ՊԱՏԻ ՎՐԱ.

1. Յուսով ամենակալին Աստուծոյ ես էլիկումս, որդի Ջալալին որդուն մեծի Տարսաիենն, տվար զմեր ճալալ ճայրենի. . . . տնակն և զ
2. Շեղջիկ մեր ի գերեզմանատանս իր :Դ: կոպարովն Ոստին և Ջրբին ճողով ու զինչ յՈւրծ այգի կա Տաիրին ճողոյն. . . նեցին
3. մեծ արտ Ջարուտն որուն Պուղենոմն: Ա: այգի յասնի որ մեր գերեզմանատանս ճայրենիմ լինի մինչ ի կատարած աշխարհի:
4. Սարգիս վարդապետ և միաբանմս խոստացան ի տարին: Ա: Բառասունմ մեզ: Ով ի մերոց կամ յատարաց զտվեալ ճայրենիս ճանել չանա կամ ճարկ
5. դնէ :Յ:Ժ:Ը: ճայրապետացն եզոված է: Կատարիչմն աւրճնին ի Տեառնէ: Թվին ՉՂԵ:

ԺԳ. ՎԱՆՔԻՑ ԳԵՂԻ ԱՐԵՎԵԼՔ, ՁՈՐԱԿՈՒ ՁԱԿ ԵՁՐԻՆ ԳՏՆՎՈՂ ԿԱՅՔԱՐՁԱՆԻ ՎՐԱ.

Ես Աթանաս երէց կանգնեցի խաչս յիշատակ ծնողաց իմոց:

ԺԴ. ՁՆՁՐԼՈՒ ԳՅՈՒՂԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՂՄՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԸՆԴԱՐՁԱԿ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՄԻ ՄԱՀԱՐՁԱՆ ԿԱՅՔԱՐԻ ՎՐԱ.

Խաչս բարեխաւս Այզոնին. Թվ. ՉՂԹ:

ԺԵ. ՆՈՒՅՆ ԿԱՅՔԱՐԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՂԻ ՎՐԱ.

Աստուած ողորմի Տէր Կիրակոսին. Անդտն երիցին խաչս աւգնեա:

ԺԶ. ՆՈՒՅՆ ԿԱՅՔԱՐԻ ԱՌՋԵՎՈՒՄ ԵՂԱԾ ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՂԻ ՎՐԱ.

Ես Մարիամս զալաջով կանգնեցի զխաչս իմ որդի Ալդոնճանին:

ԺԷ. ՆՈՒՅՆ ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՂԻ ՎՐԱ

Այս է ճանգիստ Մուրատին. Սաղիլմիզին: